

Aug.

42

2000

673.

Լուս

42

Ա Ե Շ Յ.
ՆՈՐ ՄԱՍԻՆԱԴԱՐԱՆ

Է.

Ե. Ս Պ Ի Ր Ե

ՀԱՅՔԵՆԱՋՈՒՐԿ

Գիրիսամերկնից թարգմ.

իսահակ Յարութիւննեանց.

7613



Дозволено цензурою, Тифлисъ, 27 Февраля 1896 г

28-43

42-96



ԳԼԽ Ա.

ԽԱՂԱՔ ՏԱՆԵ



Երին Ենգաղինում, դէ-
պի Մալոյեա սա-
ըը տանող ճանա-
պարհի վրայ է
գտնւում այն փոք-
րիկ ու առանձնա-
ցած գիւղը, որ կոչ-
ւում է Զիլս։ Այդ-
տեղ ճանապարհից

շեղուելով և դաշտի միջով անցնելով հասնում էք
Զիլս-Մարիա կոչուածտեղին, որ շատ մօր է սա-
րերին։ Այդ գաշտում ակառանձնացած տեղ,
միմեանց դիմացը կանգնած էին երկու փոք-
րիկ տներ։ այդ երկու խրճիթներն էլ ունեին

Հնադարեան փայտեայ դռներ և պատերի մէջ խոր ընկած շատ փոքրիկ լուսամուտներ։ Մէկ տան մօտ կար մի փոքրիկ պարտէզ, որի մէջ բացի խոտից ու կաղամբից բուսել էին նաև չորս հատ՝ խոտի ցօղունի պէս բարակ ծաղկատունկ։ Միւս տնակի մօտ ոչինչ չկալ՝ բացի դրան մօտ եղած մի փոքրիկ ախոռից, ուր միայն երկու հաւ էին ներս ու դուրս անում։ Այս տնակը շատ տւելի փոքր էր քան միւսը և սրա փայտեայ դուռը հնուց ի վեր սև էր։

Ամեն առաւօտ, միշտ միւսնոյն ժամանակը, այդ դռնից դուրս էր գալիս մի բարձրահասակմարդ։ Դռնից դուրս գալիս նա ստիպուած էր լինում կռանալ։ Այդ բարձրահասակ մարդը փայլուն, թուխ մազեր ու սև աչքեր ունէր. նրա սիրուն ու ձեւաւոր քթի տակից անմիջապէս սկսւում էր մի այնպիսի թանձը ու սև մորուք, որ մնացած երեսից ոչինչ չէր երեսում։ Երբ ալդ մարդը խօսում էր, նրա մորուքի մազերի միջից դուրս էին փայլում շատ սպիտակ ատամներ. բայց նա շատ քիչ էր խօսում։ Զիլսում ամենքը ճանաչում էին այդ մարդուն, բայց ոչ ոք նրա անունը չէր տալիս. ամենքը նրան անուանում էին միայն «իտալացի»։ Իտալացին ամեն օր նեղ շաւզով գնում էր դէպի Զիլս և այնտեղից բարձրա-

նում դէպի Մալոյեա, ուր և աշխատում էր Եթէ նա այդ ճանապարհով չէր բարձրանում, ցած էր գնում դէպի Ստ. Մօրից ջերմուկը. այդտեղ նոր տներ էին շինում և նա էլ աշխատանք գտնելով՝ ամբողջ օրն այնտեղ էր մնում և միայն երեկոյեան տուն վերադառնում։ Սովորաբար, երբ իտալացին առաւօտը տանից դուրս էր գալիս, նրա ետևը կանգնած էր լինում մի տղալ. հօր գնալուց յետու տղան կանգնում էր շեմքում և իր սև ու մեծ աչքերով նայում էր նրա յետեկից կամ թէ մի ուրիշ կողմը, թէև չէր կարելի ասել՝ թէ իսկապէս ո՞ր կողմը, որովհետեւ այնպէս էր թըւում՝ թէ նրա մթին աչքերը մօտիկ եղած առարկաների վրայից հեռանալով՝ կենդրոնանում էին մի անտեսանելի իրի վրայ։

Կիրակի ճաշից յետոյները, եթէ արև էր լինում, երբեմն երկուսը միասին էին դուրս գալի տանից և կողք կողքի գնալով՝ բարձրանում էին դէպի սարը տանող ճանապարհով։ Նրանք շատ նման էին միմեանց. զանազանութիւնն այն էր, որ տղան փոքր էր և կարծես թէ հօր կտորը լինէր. պակաս էր միայն սև մորուքը։ Աչքի էր ընկնում նրա նեղ ու գունատ փոքրիկ դէմքը՝ սիրուն ձեւաւորուածքթով, իսկ բերանը կարծես մի այնպիսի տըլս-

բութեամբ էր շրջապատուած, որ թոյլ չէր
տալիս նրան ծիծաղելու։ Հօր մորուքն ար-
գելք էր լինում՝ նրա դէմքի վրայ նոյնը նը-
կատելու։

Երբ երկուսը միասին այդպէս կողք կող-
քի դնում էին, ոչ մէկը չէր խօսում. ըստ մե-
ծի մասին հայրը մի երգ էր մըմնջում, եր-
բեմն էլ բարձր ձայնով երգում. տղան էլ
ականջ էր դնում։ Իսկ եթէ կիրակի օրն անձ-
րւում էր, հայրը նստած էր լինում իր խրճի-
թում, լուսամուտի առաջը դրուած նստարա-
նի վրայ. տղան էլ նստում էր նրա կողքին,
բայց դարձեալ ոչինչ չէին ասում միմեանց։
Հայրը վերցնում էր փոքրիկ դաշնակը և բե-
րանով մի քանի եղանակներ հնչեցնում մի-
մեանց ետեից, իսկ տղան ուշադրութեամբ
ականջ էր դնում։ Երբեմնապէս նա վերցնում
էր նաև սանրը կամ մի որե է տերև և դրան-
ցով էր զանազան եղանակներ նուագում կամ
թէ իր շինած փայտեայ շուկն էր ածում. կար-
ծես թէ այդ մարդն ընդունակ էր ամեն մի
առարկայ երաժշտական գործիք դարձնելու։
Մի անգամ նա ջութակ էր բերել տուն. այդ
ջութակն այնպէս գրաւեց փոքրիկ տղային, որ
երբէք չէր մոռանում այդ գործիքը։ Մի օր,
երբ հայրը բազմաթիւ երգեր ու եղա-

նակներ հնչեցրեց ջութակի լարերով՝ տղան
ոչ թէ միայն ականջ դրեց, այլ և աչքերն
անթարթ յառել էր նրա վրայ և հէնց որ հայ-
րը ջութակը մի կողմը դրեց, տղան լուռ վերց-
րեց և փորձում էր՝ թէ արդեօք ինքն էլ կա-
րող է նուագել։ Երեկի թէ այնքան էլ վատ
չէր ածում, որովհետեւ հայրը ժպտալով ա-
սաց. «արի այստեղ» և իր ձախ ձեռքի մեծ
մատները դնելով տղայի փոքրիկ մատների
վրայ, աջ ձեռքով վերցրեց տղայի աջ ձեռքը՝
կնտնտոցի հետ միասին և այդպէս բաւական
երկար ժամանակ շարունակ նուագում էին
միասին՝ ամեն տեսակ եղանակներ։

Հետևեալ օրերը, երբ հայրը տանը չէր
լինում, տղան շարունակ փորձում ու վարժ-
ում էր, մինչև որ մի եղանակ կարողացաւ
հնչեցնել. բայց յանկարծ ջութակը նորից ան-
յախացաւ և էլ չերեցաւ։ Երբեմն էլ, երբ
նրանք տանն էին նստած լինում, հայրն
սկսում էր կամաց երգել և հետզհետէ ձայնը
բարձրացնելով՝ հասկանալի բառեր էր արտա-
սանում. այդ միջոցին տղան էլ սկսում էր
նրա հետ երգել և եթէ բառերը ճշտութեամբ
չէր կարողանում ասել՝ հնչիւններ էր արտա-
սանում, որովհետեւ հայրը միշտ իտալերէն էր
երգում։ Թէպէտ տղան շատ բան հասկանում

Էր, բայց այնքան լաւ չգիտե՞ր այդ լեզուն,
որ կարողանար ճշտութեամբ կրկնել և երգել:
Այդ բազմաթիւ երգերի մէջ մի եղանակ կար,
որնա միւսներից աւելի լաւ գիտէր, որովհետեւ
հայրը մի քանի հարիւր անդամից աւելի էր
երգել:

Այդ երկար երգն այսպէս էր սկսւում.

„Una sera

In Peschiera“

Երգի եղանակն իսկապէս թախծալի էր,
բայց երաժիշտներից մէկը դարձրել էր զուար:
Ճալի ըստանս. այդ երգն այնքան դուր եկաւ
փոքրիկ տղային, որ ուրախութեամբ շարու-
նակ երգում էր. երգն էլ լաւ էր հնչում,
որովհետեւ տղայի պարզ ու բարակ ձայնը ներ-
դաշնակութեամբ միախառնուում էր հօր ու-
ժեղ բասի հետ: Եւ ամեն անդամ, երբ այդ
երգը մինչև վերջն երգում էին, հայրը ձեռ-
քը դնում էր [փոքրիկի ուսին և քաղցրու-
թեամբ ասում. „Bene, Enrico, ya bene“. Այդ-
պէս միայն հայրն էր անուանում տղային,
ուրիշները բոլորն էլ «Ռիկօ» էին կանչում
նրան: Դրանց տանն ապրում էր նաև մի ազ-
գական կին, որ կարկատում էր հնամաշ զգեստ-
ները, կերակուր էր եփում և ամեն բան
կարգի բերում: Չմեռը նա նստում էր վառա-

րանի մօտ և թել մանում. այդ միջոցին Ռի-
կօն միշտ պէտք է մտածէր՝ թէ ի՞նչ հնար-
քով տանից դուրս գնայ, որովհետեւ հէնց որ
դուռը բաց էր անում, այդ կինն ասում էր.
«Գուռը հանգիստ թող, սենեակը ցրտում է»:
Տղան յաճախ երկար ժամանակ տանը մենակ
էր մնում այդ կնոջ հետ, որովհետեւ հայրն
աշխատանքի գնալով՝ շատ անդամ շաբաթնե-
րով տուն չէր գալիս:



թի մեղադիքու հայունու թի և առն հայուն
պատճե չէ ան զանան և գանձր աշխե մօք
ու պատճե մասնանց լուս այդու պատճե խոզ
ու անուն մասն ու առն ու բայց զանար
ու անուն պատճե պատճե պատճե զանար
ինձն անուն պատճե պատճե պատճե զանար
ու անուն պատճե պատճե պատճե պատճե զանար
ու անուն պատճե պատճե պատճե պատճե զանար
ու անուն պատճե պատճե պատճե պատճե զանար

ԳԼԽ. Բ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ հայ մարդ
մարդ առանձնական ու առանձնական ու առանձնական
առանձնական ու առանձնական ու առանձնական



Եկօն շուտով իննը տարե-
կան կլինի և երկու ձմեռ
արդէն ուսումնարան է
յաճախել, որովհետւ այն-
տեղ, սարերի վրայ, ա-
մառն ուսում չի լինում.
ուսուցիչն ուրիշների նը-
ման պէտք է այդ միջո-
ցին իր արտը հերկէ, խոտ հնձէ. դպրո-
ցի համար ոչ ոք ժամանակ չունի:
Այդ
բանն այնքան էլ չէր վշտացնում Ռի-
կօին, նա գիտէր թէ ինչով պէտք է զբա-
ղուի: Առաւտը վաղ զարթելով՝ նա կանդ-
նում էր իրենց դրան շեմքում, քնչած աշ-
քերով դուրս նայում և տեղից չէր շարժւում.

նա կարող էր այդպէս ժամերով կանգնած մը-
նալ, եթէ դիմացի տան դուռը չքացուէր,
այնտեղից դուրս չքար մի փոքրիկ աղջիկ և
ծիծաղելով նրա կողմը չնայէր. Ռիկօն իսկոյն
դէպ այն կողմն էր վազում և երկու երեխա-
ներն էլ միմեանց ասելու շատ բան ունէին՝
նախորդ երեկոյեան տեսակցութիւնից յետու:
Փոքրիկ աղջիկը կոչւում էր Մանիկ և ճիշտ
Ռիկօի հասակակիցն էր. նրանք երկուսն էլ
միասին էին սկսել դպրոց յաճախել և միւնոյն
դասարանումն էին. հենց սկզբից էլ միասին
էին եղել, որովհետև նրանց տները միայն մի
նեղ շաւզով էին միմեանցից բաժանուում. եր-
կուսն էլ ամենալաւ ընկերներ էին:
Ռիկօն միմիայն դրա հետ էր բարեկա-
մութիւն անում, որովհետև շրջակալքի միւս
տղաների հետ չէր ընկերանում. իսկ երբ այդ
տղաները միմեանց թակում, գետին էին գլո-
րում, կամ թէ գլխի վրայ կանգնում, նա
առանց յետնայելու փախչում էր նրանցից: Բայց
երբ նրանք ասում էին. «մի անգամ էլ Ռիկօին
ծեծենք», նա կանգնում էր իր տեղը լուռ և
ոչինչ չէր անում, բայց իր սե աչքերով մի
այնախի տարօրինակ հայեացք էր գցում նը-
րանց վրայ, որ ոչ ոք չէր համարձակում
ձեռք տալ նրան:

Մանիկի մօտ Ռիկօն երջանիկ էր։ Մանիկի երկու սև աչքերը կարծես շարունակ ծիծաղում էին. նա գլխին կապած ունէր երկու հաստ, սև ու մաքուր ծամեր, օրինաւոր աղջիկ էր և հնարագէտ։ Թէև դեռ հազիւ իննը տարեկան էր, բայց անդրանիկ աղջիկը լինելով՝ ամեն բանում պէտք է օգնէր մօրը. իսկ տանն անելու բան շատ կար։ Մանիկից փոքրերն էին. Տրուդին, Զամին, Պետէրլին, Ուրշլին, Աննէ-Դէտէլին, Կունցէլին և մէկ էլ դեռ չմկրտուած փոքրիկ մանուկը։

Ամեն անկիւնից շարունակ Մանիկ էին կանչում և այդպիսով նա այնպէս աշխուժացել էր, որ ամեն բանի հասնում էր։ Մանիկն արդէն փոքրերին երեք զոյգ գուլպայ և երկու զոյգ կօշիկ էր հագցրած լինում և կապում, մինչև որ Տրուդին հագցնելու համար կարողանում էր ուղղել մէկի ոտքը։ Եւ երբ երեխաները սենեակից, իսկ մայրը խոհանոցից միաժամանակ Մանիկ էին կանչում, հայրն էլ ախոռից էր նրան ձայն տալիս, որ գնայ նրա գլխարկը գտնէ կամ թէ մտրակի կապ ընկածները յետ անէ։ Մանիկը շատ շուտ էր գտնում գլխարկը, որովհետեւ համարեա թէ միշտ խոռի վրայ էր լինում. իսկ նրա ձկուն մատները շուտով յետ էին անում մըտ-

բակի կապերը։ Այսպիսով թէև Մանիկը շարունակ դէս ու դէն էր վագում և աշխատում, սակայն միւնոյն ժամանակ ուրախ և աշխոյթ էր. ձմեռն էլ ուրախութեամբ էր դպրոց յաճախում, որովհետեւ Ռիկօն հետ էր գնում գալիս. դասամիջոցներին նոյնպէս նրանք միասին էին լինում։ Ամառն էլ կրկին ուրախ էր, որովհետեւ կիրակի երեկոներն ազատ էր և կարող էր զբունելու գնալ Ռիկօն հետ. Ռիկօն երկար ժամանակ սպասում էր նրան իրանց դրան շեմքում և յետոյ ձեռք ձեռքի տուած վազում էին մեծ մարգագետնի վրայով դէպի այն անտառածածկ բարձրութիւնը, որ կզզու նման բաւականին երկարութեամբ մտնում է լճի մէջ։ Այդ բարձրութեան վրայ, եղևնիների տակ նստած՝ նայում էին ցած, դէպի կանաչագոյն լիճը. նրանք այնքան բան ունէին միմեանց պատմելու և հարցնելու, այնքան երջանիկ էին, որ Մանիկն ամբողջ շաբաթն ուրախ էր լինում, որովհետեւ կրկին մօտենում էր կիրակին։

Սակայն իրմիթում կար և մէկ ուրիշը, որ երբեմն երբեմն նոյնպէս Մանիկ էր կանչում. դա ծեր տատն էր։ Բայց նա իրեն օգնելու համար չէր կանչում Մանիկին, այլ կամ մի գըոշ էր ընծալում նրան, կամ մի որևէ է

ուրիշ բան, որովհետև նրա սիրելին էր և
լաւ տեսնում էր թէ Մանիկն ի՞նչքան շատ
բան էր անում իր հասակի համեմատութեամբ.
այդ պատճառով տատը մի քանի կոպէկ էր
ընծայում նրան, որ նա էլ ուրիշ երեխանե-
րի նման կարողանայ մի որևէ է բան գնել
տոնավաճառում. օրինակ՝ կարմիր ժապաւէն
կամ թէ փոքրիկ ասեղնոց։ Տատը Րիկօին էլ
էր սիրում և ուրախ էր, երբ նրանց միասին
էր տեսնում. երբեմն էլ Մանիկի բանն էր
շինում, որ նա մի փոքր աւելի երկար մնայ
դուրսը, Ռիկօի հետ։

Ամառ ժամանակ, երեկոները, տատը միշտ
նստում էր իրենց խրճիթի առաջն ընկած կոճ-
ղի վրայ. յաճախ Մանիկն ու Ռիկօն կանգնած
էին լինում նրա մօտ և նա մի բան էր պատ-
մում։ Խսկ երբ զանգակատնից զօղանջում էր
աղօթքի զանգակը, տատն ասում էր. «այժմ
ամեն մէկդ պէտք է մի անգամ «Հայր մեր»
ասէք և երբէք չպէտք է մոռանաք, որ ա-
մեն երեկոյ պէտք է նոյնը կրկնէք. դրա հա-
մար է զօղանջում աղօթքի զանգը»։

«Տեսէք, զաւակներս», ասում էր տատն
երբեմն երբեմն. «Ես երկար ապրել եմ և շատ
բան տեսել, բայց չեմ ճանաչում և ոչ մի
մարդ, որ իր ամբողջ կեանքում «Հայր մեր»

ասելու կարիքը չզգար. շատերն էլ միայն
կարիքի ժամանակ են աղօթել երկիւղով, բայց
սփոփանք չեն գտել։ Այդ միջոցին Մանիկն
ու Ռիկօն երկիւղածութեամբ «Հայր մեր» էին
ասում։

Արդէն մայիս ամիսն էր և շուտով պի-
տի ընդհատուէր ուսումը. դասաւութիւնն
էլ երկար չէր կարող տևել, որովհետև ծա-
ռերի տակն արդէն սկսում էր կանաչել և բա-
ւականին մեծ տարածութիւնների վրայ այլ
ևս ձիւն չկար. Ռիկօն երկար ժամանակ կանգ-
նած իրենց տան շէմքում՝ այդ դիտողութիւն-
ներն էր անում, շարունակ նայում դէպի
դիմացի գուռը և նրա բացուելուն սպասում։
Դուռը բացուեց և Մանիկը թռչոտալով
դուրս եկաւ այնտեղից։

«Արդէն վաղժոց է, որ սպասում ես այդ-
տեղ կանգնած, Ռիկօ, էլի աչքերդ չոեցի՞ր». ա-
ղաղակեց նա ժպտալով։ «Այսօր գեռ վաղ է, կա-
րող ենք կամաց-կամաց գնալ»։

Յետոյ նրանք ձեռք ձեռքի տուած ճա-
նապարհ ընկան դէպի ուսումնարան։

«Նարունակ լճի մասին ես մտածում էլի»,
գնալիս հարցուց Մանիկը։

«Այո՞», պատասխանեց Ռիկօն լուրջ դէմքով,
«երբեմն էլ երազումս եմ տեսնում՝ թէ լի-

ճը և թէ նրա վրայի մեծ ու կարմիր ծաղիկ-ները, իսկ լմի միւս կողմը՝ մանիշակագոյն սարերը»:

ԱՌև, երազում տեսածը նշանակութիւն չունի», ասաց Մանիկն աշխուժութեամբ. «մի անգամ երազում տեսալ, որ Պետէրլին մենակ մագլցում էր ամենաբարձր եղենու գագաթին և երե հասաւ ամենավերին ձիւղին, յանկարծ թռչուն դարձաւ և այնտեղից դէպի ցած արդակեց. «Մանիկ, գուլպաներս հադցրու». տեսնում ես, այդպիսի բան չի կարող լինել»:

Րիկօն երկար մտածում էր՝ թէ ինչպէս է պատահում այդ. չէ որ իր երազածը կարող էր գոյութիւն ունենալ և ինքն էլ մտաբերում էր երազում տեսածը. Այդպէս խօսելով նրանք հասան դպրոց, ուր մանուկների ահագին խումբն աղմկում էր. Նրանք բոլորը միասին ներս մտան դաստիառն և շուտով ուսուցիչն էլ եկաւ. Ուսուցիչը ծեր մարդ էր՝ անօսր և սպիտակ մազերով. նա արդէն շատ երկար ժամանակ ուսուցիչ էր եղել և այդ պատճառով նրա մազերը սպիտակել ու թափուել էին:

Դասն սկսուեց. աշակերտներն առաջ տառեր ու վանկեր կարդացին. յետոյ եկաւ (X)-ի հերթը, իսկ վերջն երգեցին. Ուսուցիչը վերց-

ըեց իր հին ջութակը, լարեց և ապա թէ բոլորն էլ սկսեցին բարձրաձայն երգել.

«Քառնուկներ, ցած եկէք արևահար սարերից»:

Ուսուցիչն էլ ձայնակցում էր ջութակով:

Բայց շուտով Րիկօն այնպիսի ուշագրութեամբ սկսեց գիտել ջութակն և ուսուցչի մատների լարերին զարկելը, որ երգելը բոլորովին մոռացաւ և ոչ մի ձայն չէր հանում:

Այդ միջոցին միւս երգիչները կէս աստիճան ձայները ցածրացրին, ջութակի լարերն էլ անհաստատ հնչիւններ արձակեցին. երգիչները դարձեալ ցածրացրին և ով գիտէ թէ մինչեւ որ աստիճան ձայները կիջնէին, եթէ յանկարծ ուսուցիչը ջութակը սեղանի վրայ չձգէր ու բարկացած չաղաղակէր. «այս ի՞նչ երգ է, անխելքներ, երանի գիտենամ՝ ով է սիալ երգողը, որ ամբողջ երգը փչացնում է»:

Րիկօի կողքին նստող փոքրիկ տղան ասաց. «Ես գիտեմ պատճառը, ամեն անգամ այդպէս է լինում, երբ Րիկօն էլ չէ երգում»:

Ուսուցչին նոյնպէս յայտնի էր, որ երբ Րիկօն բարձր էր երգում, իր ջութակն էլ հաստատուն հնչիւններ էր արձակում:

«Րիկօ, Րիկօ, Բնչ եմ լսում» լուրջ կերպով ասաց ուսուցիչը՝ դառնալով նրան. «Դու



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱԿՑԻՆ

օրինաւոր տղայ ես, բայց անուշագրութիւնը
մեծ պակասութիւն է. տեսնո՞ւմ ես միմիայն
մի անուշագիր աշակերտ կարող է ամբողջ եր-
գը փչացնել։ Նորից սկսենք. ուշագիր եղիր,
Ռիկօ։

Ռիկօն պարզ ու հաստատուն ձայնով սկը-
սեց երգել և ջութակն էլ հետևեց նրան. ե-
րեխաներն էլ իրենց բոլոր ուժով սկսեցին եր-
գել և այնպէս սիրուն դուրս եկաւ, որ ա-
խորժելի էր մինչև վերջը լսել. Ուսուցիչը
շատ գոհ մնաց, ձեռքերը շփեց և մի քանի
անգամ ուժեղ զարկեր տալով ջութակի լա-
րերին, ինքնաբաւականութեամբ ասաց. «Գոր-
ծիքս էլ լաւն է»։



ԳԼԽ. Գ.

ԹԵՐ ՈՒՍՈՒՑՀԻ ԶՈՒԹԱԿԸ



անիկն ու Ռիկօն դպրո-
ցի դրան առաջը բաժա-
նուեցին աշակերտների
խմբից և միասին ճանա-
պարհ ընկան դէպի տուն։
Մանիկը հարցրեց. երգն
ինչո՞ւ ընդհատեցիր, Ռի-
կօ. մբթէ յանկարծ էլի լիճը
միտդ ընկալ։»

«Ոչ, մի ուրիշ բան», ասաց Ռիկօն. «այժմ
գիտեմ՝ թէ ի՞նչպէս պէտք է ջութակի վրայ
ածել՝ «գառնուկներ, ցած եկէք»։ Երանի թէ
ջութակ ունենայի»։

Ինչպէս երևում էր, այդ ցանկութիւնը
Ռիկօի սրտի խորքիցն էր բղխում, որովհետև

Հառաջանքով արտայալտուեց։ Մանիկը կարեկցեց նրան և մտածում էր՝ թէ ի՞նչ միջոցներով կարելի էր մի ջութակ ձեռք բերել։

«Արի՞ միասին մի ջութակ գնենք», աղաղակեց նա յանկարծ և ինքն էլ ուրախութիւն զգաց, որ կարողացաւ նրան օգնելու ճարը գտնել. «տատի տուած կոպէկներից ես բաւականին հաւաքել եմ. դու ո՞րքան փող ունես»։

«Ես ոչինչ չունեմ», ասաց տխուր կերպով Ռիկօն. «Հայրս գնալուց առաջ մի քանի գրոշ տուեց, բայց մեր ազգական կինն այն էլ ձեռքիցս առաւ՝ ասելով թէ անպէտք բաների վրայ կծախսես և շատ բարձր դրուած մի արկըլի մէջ գցեց, այնտեղից էլ չեմ կարող հանել»։

Բայց Մանիկը շուտ վհատուողներից չէր նա ասաց. «գուցէ մեր ունեցածը բաւական է, մի քանի գրոշ էլ տատիցս կառնեմ. ջութակը կարծեմ այնքան էլ թանկ չարժէ. մի կտոր չորացած փայտ է, վրան էլ չորս հատ լար։ Դու վաղն ուսուցչին հարցրու թէ ի՞նչ արժէ ջութակը, լետոյ կդնենք»։

Այդպէս էլ վճռեցին։ Մանիկը մտածում էր. «կերթամ տուն, ինչ կարող եմ կանեմ, իսկ առաւատեան շատ վաղ վեր կկենամ և կրակ կանեմ մինչեւ մայրիկիս զարթելը»։ Երբ Մա-

նիկն այդպէս առաւօտից մինչեւ երեկոյ շարունակ աշխատում էր, տատը սովորաբար մի գրոշ էր գցում նրա գրպանը։

Հետեւեալ առաւօտը, երբ գասերը վերջացան, Մանիկը մենակ դուրս գնաց, հանդարտ կանգնեց դպրոցի շենքի մօտ եղած անկիւնում, փայտեալ կոյտի ետեւը և սպասում էր Ռիկօն։ Ռիկօն պէտք է ուսուցչին հարցնէր ջութակի գինը։ Բայց նա երկար ժամանակ դուրս չեկաւ և Մանիկն անհամբերութեամբ շարունակ նայում էր փայտեալ կոյտի ետեւից։ Վերջապէս Ռիկօն երևաց և մօտեցաւ նրան։

«Ի՞նչ ասաց ուսուցիչը, ո՞րքան արժէ ջութակը», աղաղակեց Մանիկն՝ անհամբերութիւնից շնչառպառ լինելով։

«Զկարողացայ հարցնել», պատասխանեց Ռիկօն վհատուած։

«Ափսոս», ասաց Մանիկը և կանգնած էր բոլորպին շուարած. բայց երկար չտեսեց այդ։ «Միւնոյն է, Ռիկօ», ասաց նա կրկին ուրախ և նրա ձեռքը բոնելով ճանապարհ ընկաւ գէպի տուն, «վաղն էլ կարող ես հարցնել։ Այսօր առաւօտ ես կրկին մի գրոշ ստացայ տատիցս, որովհետեւ երբ նա խոհանոց մտաւ, ես արդէն ոտի վրայ էի»։

Բայց երկրորդ և երրորդ օրն էլ նոյնը պատահեց. Ռիկօն միշտ կէս ժամ կանգնում էր ուսուցչի բնակարանի առաջը, բայց չէր համարձակում ներս գնալ և հարցնել՝ թէ ի՞նչ արժէ ջութակը: Մանիկն ինքն իրեն մտածում էր. եթէ Ռիկօն երեք օրուայ ընթացքում էլի չի հարցնի, այն ժամանակ ես կհարցնեմ: Բայց չորրորդ օրը՝ երբ Ռիկօն մտածմունքի մէջ ընկղմուած և վհատուած կանգնած էր ուսուցչի տան առաջը, լանկարծ դուռը բացուեց. ուսուցիչը շտապով դուրս եկաւ և այնպէս ուժով դիպաւ Ռիկօին, որ փետրի պէս թեթև տղան բաւականին տեղ յետ թռաւ: Ուսուցիչը կանգնած նայում էր նրան մեծ զարմանքով և տհաճ կերպարանքով: «Այս ի՞նչ է, Ռիկօ», հարցրեց նա, երբ Ռիկօն կրկին իր տեղը կանգնեց. «Երբ գալիս ես մէկի դուռը՝ ինչու չես բաղխում, եթէ դործ ունես. իսկ եթէ դործ չունես՝ ինչու չես հեռանում: Եթէ ասելու բան ունես, հէնց այստեղ էլ կարող ես ասել. ասա՛, ի՞նչ ես ուզում»:

«Ի՞նչ արժէ ջութակը շտապով հարցրեց Ռիկօն՝ սաստիկ վախեցած:

Ուսուցիչը տհաճ կերպով զարմացական հայեցք ձգեց նրա վրայ ու ասաց. «Զգիտեմ

ի՞նչ մտածեմ քո մասին, Ռիկօ, գալիս ես ուսուցչիդ գուռն աւելորդ հարցումներ առաջարկելու նրան, թէ մի որևէ է դիտաւորութիւն ունես. ի՞նչ էլի ուզում ասել դրանով»:

«Ոչի՞նչ չէի ուզում ասել», պատասխանեց Ռիկօն ամօթխածութեամբ, «կամենում էլի միայն հարցնել՝ թէ ի՞նչ արժէ ջութակը»:

«Գու ինձ չհասկացար, Ռիկօ, լաւ լոի՞թէ ի՞նչ եմ ասում. երբ մարդ խօսում է՝ մի նպատակ ունի աշքի առաջ. իսկ եթէ խօսելիս ոչի՞նչ չէ մտածում, նշանակում է՝ անմիտ խօսքեր է արտասանում: Ուրեմն լսեր, Ռիկօ, առանց մի որևէ է պատճառի տուիրայդ հարցմունքը, թէ միմիայն հետաքրքրութիւնից. կամ գուցէ ուրիշն է ուզարկել քեզ՝ ջութակի գինն իմանալու»:

«Ես ինքս սրտանց ուզում եմ մի ջութակ գնել», ասաց Ռիկօն մի փոքր վստահ, բայց սաստիկ վախեցաւ, երբ ուսուցիչը յանկարծ բարկացած ասաց. «Ի՞նչ, ի՞նչ ես ասո՞ւմ, կարծ պէս մի կորած, անխելք, օտարական տըքեղ պէս մի կորած, անխելք, օտարական տըդան ուզում է ջութակ գնել. գիտե՞ս, թէ դան ուզում է ջութակ գնել. գիտե՞ս, թէ ի՞նչ է ջութակը, գիտե՞ս քանի տարեկան էլ և որքան էլ սովորել՝ մինչև որ մի ջութակ կարողացայ ձեռք բերել: Ուսուցի՞չ էլի արդէն, ուսուցիչը քսան և երկու տարեկան էլ և

պաշտօն ունէի: Այժմ կասեմ քեզ թէ որքան ար-
ժէ ջութակը, որ կարողանաս անխելքութիւնդ
չափել: Վեց ամբողջ գուլդէն եմ վճարել ջու-
թակիս համար, կարող ես այդ ամբողջ գումարն
երևակայել. հաշուենք իսկոյն գլուխներով. մի
գուլդէնը 100 գրոշ է, ուրեմն վեց գուլդէ-
նը կլինի 6×100 . քանի կանք—դէ՛հ, Ռիկո,
դու շնորհքով տղայ ես, ասա տեսնեմ, քանք
կըոշ կլինի»:

«600 գրոշ», ասաց Ռիկօն կամաց, որով-
հետև երկիւղից ձայնը չէր գուրս գալիս՝ երք
այդ գումարը համեմատում էր Մանիկի ունե-
ցած տասն և երկու գրոշի հետ:»

«Բացի գրանից, խելքդ ինչ է կտրում,
շարունակեց ուսուցիչը նոյն եղանակով, «Երեսի
կարծում ես թէ բաւական է, որ ջութակը
ձեռքդ առնես և իսկոյն կածես. այդ կարողա-
նալու համար դեռ շատ բան է հարկաւոր: Արի իսկոյն ներս», — ուսուցիչը գուռը բանա-
լով՝ պատի վրայից ցած բերեց ջութակը. «ա-
հա, վերցրու և միւս ձեռքով էլ առ կնտրնտոցը,
այդպէս. էթէ ու այն կարողանաս
հնչեցնել, իսկոյն կէս գուլդէն կտամ քեզ»:

Ռիկօն ջութակը ձեռքն առաւ թէ չէ՝
նրա հրացայտ աչքերը փայլեցին. ու այս գումարը նաև հաստատուն կերպով և կատա-

րեալ ճշտութեամբ. «Այ գու անպիտան», հիա-
նալով աղաղակեց ուսուցիչը. «որտեղից գիտես
այդ. ով սովորեցրեց քեզ. ինչպէս ես կարո-
ղանում գտնել ձայները»:

«Ես ուրիշ բան էլ գիտեմ, եթէ թուլ
կտաք նուագելու», ասաց Ռիկօն և բաղձանքով
նայում էր ձեռքի գործիքի վրայ:

«Նուագիր», ասաց ուսուցիչը: Եւ Ռիկօն
սկսեց ածել հաստատ կերպով և հրացայտ
աչքերով.

«Դառնուկներ, ցած եկէք

Սրեահար սարերից.

Սրեն արդէն մայր է մտնում,

Մինչև վաղը մնաք բարեւ:

Ուսուցիչը նստել էր աթոռի վրայ և ակ-
նոցները դրել. նա լուրջ և գիտող աչքով նա-
յում էր Ռիկօի մատներին, յետոյ նրա հրա-
ցայտ աչքերին և ապա կրկին մատներին:
Ռիկօն վերջացրեց երգը:

«Մօտեցիր ինձ, Ռիկօ»:

Ուսուցիչն իր աթոռը դարձրեց դէպի
լոյսը և Ռիկօին իր առաջը կանգնեցրեց: «Այժմ
բան պէտք է ասեմ քեզ, Ռիկօ. հայրդ իտա-
լացի է, իսկ այնտեղ այնպիսի բաներ են տե-
ղի ունենում, որ մենք այստեղ, լեռներում,
չգիտենք: Այժմ ուղիղ աչքերիս նայել և ճիշտ

ասա. թնչպէս ես կարողտնում այդ եղանակն իմ ջութակի վրայ ածել անսխալ»:

Ռիկօն նայեց ուսուցչին անկեղծ հայեաց. քով և ասաց. «Ոյդ ձեզնից եմ սովորել՝ երգեցողութեան դասերի ժամանակ»:

Այս խօսքերը բոլորովին ուրիշ կերպարանք տուէին գործին: Ուսուցիչը տեղից վեր կացու և մի քանի անգամ յետ ու առաջ գնաց: Ուրեմն ի՞նքն էր այս զարմանալի երևոյթի սկզբնապատճառը և կախարդական միջոցներ չէին գործադրուած: Նա հաշտ սրտով հանեց իր քսակը. ահա իմ խոստացած կէս գուլդէնը, Ռիկօ, քեզ է պատկանում այդ: Այդպէս շարունակիր և ուշադիր եղիր քանի դպրոց ես գալիս. այդպիսով մի բան կսովորես և ապա 12—14 տարի անցնելուց յետոյ կարող ես մի ջութակ ձեռք բերել: Ոյժմ կարող ես գնալ»:

Ռիկօն դարձեալ մի հայեացք ձգեց ջութակի վրայ և դուրս գնաց՝ շատ տխուրը սրտով:

Մանիկը վագելով դուրս թռաւ փայտեայ կոյտի ետևից և ասաց. «այս անգամ երկար մնացիր. հարցըլը»:

«Ամեն բան կորած է», ասաց Ռիկօն և վշտից նրա յօնքերն այնքան մօտեցան միմեանց, որ նրա աչքերի վրայ մի թանձր ու սև գիծ կազմուեց: «Զութակն արժէ 600 գրոշ և 14

տարուց յետոյ կարող եմ միայն մէկն առնել. տասն և չորս տարուց յետոյ ովէ է կենդանի մնում: Ահա, առ, այս էլ քեզ լինի, ես չեմ ուզում», ասաց Ռիկօն և կէս գուլդէնը դրեց Մանիկի ձեռքը:

«Վեց հարիւր գրոշ», կրկնեց սարսափահար Մանիկը: Այսքան փողն ով տուեց:

Ռիկօն պատմէց բոլորը, ինչ որ պատահէլ էր ուսուցչի մօտ և սաստիկ վշտացած կրկնեց. «ամեն բան կորած է»:

Մանիկն ուզում էր յետ տալ կէս գուլդէնը և դրանով մի փոքր մխիթարել նրան, բայց Ռիկօն բարկացած էր անմեղ կէս գուլդէնի վրայ և չէր էլ կամենում նայել նրա վրայ:

Մանիկն ասաց. եթէ այդպէս է, այս էլ կաւելացնեմ իմ ունեցած գրոշների վրայ և այն ժամանակ բոլորը մեր երկուսի սեպհականութիւնը կլինի»:

Այս անգամ Մանիկն էլ շատ սրտաբեկ էր, բայց երբ Ռիկօի հետ հասաւ այն անկիւնը, որտեղից ուղղակի դաշտն էին մտնում, նեղ շաւիղն ու իրենց տան մօտի փոքրիկ հրապարակն այնպէս սիրուն ու փայլուն երեւեցան, որ նա աղաղակեց.

«Տես, տես, Ռիկօ, զուտով ամառը կդայ,

մենք կարող կլինենք բարձրանալ դէպի
անտառը և գու էլ նորից կուրախանաս. կա-
մենաս կիրակի օրը գնանք»:

«Էլ ոչ մի բան չի կարող ուրախութիւն
պատճառել ինձ», ասաց Ռիկօն, «բայց եթէ
ուզում ես գնալ, ես էլ հետդ կգամ»:

Իրենց տան դրան առաջը նրանք կըկին
որոշեցին, որ կիրակի օրը գնան անտառ և
Մանիկի սիրտը նորից ուրախացաւ: Ամբողջ
շբաթը նա աշխատեց որքան որ կարողացաւ.
շինելու բան շատ կար. Պետէրլին, Սամին և
Ուրշլին կարմրուկ ունէին, իսկ ախոռում ըն-
կած էր հիւանդ այծը, որի համար շուտ շուտ
տաք ջուր պէտք է տանէին. Մանիկն ուսում-
նարանից դառնալով՝ ստիպուած էր շրու-
նակ այս ու այն կողմը վազելու և ամենքին
օգնութեան հասնելու. շբաթ օրը մինչև ե-
րեկոյ աշխատում էր, բայց ախոռի դոյլերը
դեռ մնացել էին մաքրելու. այդ էլ վերջաց-
րեց: Երեկոյեան հայրը գովեց նրան և ասաց.
«Մանիկը գործունեալ աղջիկ է»:



ԳԼԽ. Դ.

ՀԵՌԱՏՈՐ, ՍԻՐՈՒՆ ԼԻՃՆ ԱՆՈՒՆ ԶՈՒՆ



Երակի առաւտօտը, երբ Մա-
նիկն աչքերը բացեց,
մեծ ուրախութիւն ըդ-
գաց. սկզբումն ինքն
էլ չգիտէր թէ ինչո՞ւ,
բայց շուտով մտաբե-
րեց՝ որ կիրակի է և
տատն էլ՝ նախորդ գի-
շերն ասել էր. «վաղը ճաշից յետոյ բոլորովին
ազատ կլինես, արա ինչ կամենաս»:

Երբ ճաշը վերջացըին և Մանիկը բոլոր
ամաններն ու սփոռը հաւաքեց, Պետէրլին
կանչեց. «արի ինձ մօտ, Մանիկ», միւս կող-
մից էլ անկողնում պառկածներն աղաղակեցին.

«ո՞չ, ինձ մօտ», իսկ հայրն ասաց. «Մանիկը պէտք է այծին նալէ»:

Բայց այդ միջոցին տատը խոհանոց գընաց և Մանիկին էլ գլխով արեց՝ որ դուրս գալ. «այժմ ազատ ես», ասաց նա; «այծին ու երեխաներին ես կնայեմ, բայց տես, երբ երեկոյեան զանգակը տան, տուն վերադարձէք»: Տատն արդէն գիտէր, որ նրանք երկուսով էին գնալու:

Մանիկը՝ վանդակը յանկարծ բացած թըռչնակի պէս զուրս թռաւ տանից. գիմացը կանգնած էր Ռիկօն, որ արդէն վաղուց սպասում էր: Նրանք երկուսով անցան մարգագետնի վրայով և բարձրացան դէպի անտառը: Բոլոր սարերի գագաթները լուսաւորուած էին արևի ճառագայթներով, իսկ գրանց վրայ տարածուած էր կապոյտ երկինքը: Որտեղ արև չկար, նրանք ստիպուած էին մի փոքր ձիւնի միջով բարձրանալ, բայց վերև կրկին երեաց արեգակը և փալփլեց լճի երեսին: Դէք լիճը տանող զառիվալի վրայ կային սիրուն ու ցամաք տեղեր. երեխաներն այդտեղ ըստեցին: Սարերի բարձր գագաթներին սաստիկ քամի էր փչում և նրանց ականջները խշացնում: Մանիկն անչափ վայելչութիւն

և ուրախութիւն էր զգում. նա շարունակ բացանչում էր.

«Տես, տես, Ռիկօ, ի՞նչ գեղեցիկ է արևը. շուտով ամառ կլինի. տես, ի՞նչպէս է շողողում լճի վրայ. սրանից աւելի սիրուն լին չկարող լինել», ասաց նա վստահութեամբ:

«Այս, այս, Մանիկ, բայց եթէ իմ ասած լիճը տեսնե՞ս». Ռիկօն նայեց լճի այն կողմը, որտեղ այլ ևս ոչինչ չէր երևում:

«Տեսնում ես, այնտեղ ասեղնաւոր սև եղենիներ չկան, այլ փայլուն, կանաչ տերեներ և մեծ ու կարմիր ծաղիկներ. սարերն այստեղի պէս բարձր, մօտիկ ու սեագոյն չեն, այլ միայն հեռուից են երեսում և մանիշակագոյն են. թէ երկնքի և թէ լճի վրայ՝ ամեն բան ուկու գոյն ունի և խաղաղ ու տաք է: Այնտեղ քամին այսպէս չէ փչում և ոտքերդ էլ ձիւնով չէ լցում, կարող ես շարունակ արևի տակ նստել և նայել շուրջդ»:

Մանիկը շուտ յափշտակուեց. նա արդէն եր գիմացն էր տեսնում կարմիր ծաղիկներն ու սոկեգոյն լիճը, որ այնքան սիրուն պէտք է լինէր:

«Գուցէ կարողանամ մի անգամ էլ գնալ այնտեղ և տեսնել քո սիրուն լիճն ու այն ամենը. ճանապարհը գիտե՞ս»:

«Այս, առաջ պէտք է բարձրանալ Մալոյեա սարը.—Հօրս հետ արդէն եղել եմ այնտեղ և նա է ինձ այդ ճանապարհը ցոյց տուել.- յետոյ պէտք է շարունակ ցած գնալ ոլորմուր կեռմաններով. իսկ շատ հեռու, ներքեւ, լիճն է. բայց այնքան հեռու է, որ Համբիւթէ կարելի է հասնել նրան»:

«Ա՛խ, այդ շատ հեշտ է», ասաց Մանիկը, «պէտք է շարունակ գնաս, այդպիսով վերջը հաստատ կհասնես լճին»:

«Բայց հալրս մի ուրիշ բան էլ ասաց. տես, Մանիկ, ճանապարհորդութեան ժամանակ պէտք է հիւրանոց մտնել, ուտել և քնել այնտեղ, բայց դրա համար պէտք է և վճարել, իսկ վճարելու համար պէտք է փող ունենալ»:

«Ե՞հ, այժմ հօ փող շատ ունենք», ասաց Մանիկը ցնծալով. բայց Ռիկոն չէր ուրախանում:

«Եթէ մեր ունեցածի մասին է խօսքդ, կարելի է ասել թէ ոչի՞նչ չունենք. զութակի պատմութիւնը չես լիշում, ասաց Ռիկոն տխուր կերպով։

«Այդ դէպքում աւելի լաւ է, որ տանը մնաս, Ռիկօ. տես, այստեղ էլ շատ սիրուն է»:

Մի քանի վալրկեան Ռիկօն նստած էր

մտածմունքի մէջ ընկղմած. գլխով յենուել էր արմունկների վրայ և յօնքերը կիտել։ Այդ միջոցին Մանիկը կանաչ ու փափուկ մամուռ էր ժողովում՝ մի փոքրիկ անկողին պատրաստելու համար. երկու բարձ և մի վերմակ արդէն պատրաստ էր. այդ բոլորը նա ուզում էր տանել հիւանդ Ուրշլի համար։

Ռիկօն դարձաւ դէպի Մանիկը և տխրութեամբ ասաց. «Ասում ես՝ թէ աւելի լաւ է որ տանը մնամ, բայց գիտե՞ս, ինձ այնպէս է թւում, որ ինքս էլ չգիտեմ թէ մեր տունը որն է, որտեղացի եմ ես»։

«Ա՛խ, ինչ ես ասում», աղաղակեց Մանիկը և զարմանքից մի կողմը գցեց ձեռքի մամուռը. «Ո հարկէ այստեղացի ես։ Մարդ միշտ այնտեղացի է, որտեղ հալը ու մայր....», այդ խօսքի վրայ նա յանկարծ կանգ առաւ. չէ որ Ռիկօն մայր չունէր, հալըն էլ վաղուց արդէն գնացել ու յետ չէր եկել. իսկ այն ազգական կի՞նը. — Մանիկն երբէք այդ կնոջ հետ չէր մտերմացել և մի բարի խօսք էլ չէր լսել նրանից. — Այժմ Մանիկն էլ չգիտէր թէ ինչ ասէր, բայց չէր կարող երկար ժամանակ այդպիսի անհաստատ դրութեան մէջ մնալ. Ռիկօն էլ սկսել էր նորից շուարել։ Մանիկը յանկարծ բռնեց նրա ձեռքը և ասաց.

Այժմ ուզում եմ իմանալ՝ թէ ի՞նչպէս
է կոչում այն սիրուն լիճը»:

Ռիկօն երկար մտածեց ու ասաց. «չգի-
տեմ»՝ ինքն էլ զարմանալով այդ բանի վրայ:

Մանիկն առաջարկեց մէկին հարցնել լճի
անունը. — եթէ մի անգամ Ռիկօն շատ փող ու-
նենայ և կարողանայ գնալ այնտեղ՝ չէ որ
ճանապարհը հարցնելու համար լճի անունը
պէտք է գիտենալ — : Յետոյ սկսեցին խորհրդակ-
ցել թէ ումը հարցնեն՝ ուսուցչին թէ տատին.
Վերջը Ռիկօն միտն ընկաւ, որ էր հայրն ա-
մենից լաւ կգիտենայ. որոշեցին, որ երբ հայ-
րը տուն վերադառնայ, Ռիկօն հարցնէ լճի
անունը:

Այդ միջոցին ժամանակն արդէն անցել
էր և յանկարծ երեխաները հեռուց լսեցին
մի խուլ դողանջիւն: Նրանք ճանաչեցին այդ
հնչիւնները. երեկոյեան ժամի զանգակն էր:
Երկուսն էլ իսկոյն վեր թռան տեղից և ձեռք
ձեռքի տուած մացառների ու ձիւնի միջով
ցած վազեցին բլուրի վրայից, անցան մար-
դագետինը և շուտով արդէն կանգնած էին ի-
րենց դրան առաջը, ուր սպասում էր տատը
և նրանց կողմը նայում:

Մանիկն անմիջապէս ներս մտաւ և տատն

էլ շտապով ասաց. «գու էլ շուտով տնւն գնա,
Ռիկօ և էլ դրան առաջը մի կանգնի»:

Մինչև այսօր Ռիկօն միշտ այդպէս էր ա-
րել, բայց տատն երբէք նրան այդպիսի խօսք
չէր ասել. շուտով տուն գնալն այնքան էլ
հաճոյք չէր պատճառում նրան և միշտ եր-
կար ժամանակ դրանը կանգնելուց յետոյ էր
ներս գնում: Այժմ նա հնազանդուեց և խ-
կոյն ներս գնաց:



Ռիկօն ներս գնաց, նոտեց պատի մօտ
դրուած նստարանի վրայ և տեղից չշարժուեց։
Այդպէս նստած մնաց կէս ժամից աւելի, իսկ
այն կինը գեռ խոհանոցումն էր փսփսում։
Ռիկօն մտածեց. կամաց կամաց գնամ հօրս
սենեակը, գուցէ նա ուտելու բան է ուզում,
արդէն ընթրիքի ժամանակն է։ Վառարանի
ետեղ գտնուող փոքրիկ սանդուղքի վրայով
նա վերև բարձրացաւ և ներս սողաց հօր սե-
նեակը։ Մի քանի վայրկեանից յետոյ նա կրկին
յետ դարձաւ, մտաւ խոհանոցը, մօտեցաւ ազ-
գական կնոջը և կամաց ասաց. «արի վերև»։

Վերջինս ուզում էր սաստել Ռիկօնին, բայց
երբ յանկարծ հայեացք ձգեց նրա գունատ
երեսին, տեսաւ նրա կտաւի նման սպիտակ
այտերն ու շրթունքները. իսկ աչքերն այն-
պէս էին մթնել, որ համարեա՛ թէ երկիւղ էին
ազգում այդ կնոջ վրայ։

«Ի՞նչ է պատահել», հարցըց նա շտա-
պով և ակամայ հետեւեց նրան։

Ռիկօն կամաց բարձրացաւ փոքրիկ սան-
դուղքը և մտաւ հօր սենեակը։ Հայրն ան-
շարժ պառկած էր անկողնի վրայ. նա արդէն
մեռած էր։

«Ո՞խ, Աստուած իմ», ազաղակեց կինը և
աղմուկ բարձրացնելով դռնից դուրս վագեց,

ԳԼԽ. Ե.

ՏԵՍՈՒՐ ՏՈՒՆԸ. ԼԻՃԱ ԱՆՈՒՆ ՈՒՆՏ



զգական կինը տանը չէր։
Ռիկօն նորից դուրս ե-
կաւ սենեակից և բա-
ցեց խոհանոցի դուռը.
կինը կտնզնած էր այդ-
տեղ և հէնց որ Ռի-
կօն ուզում էր ներս
մտնել, նա մատները
բարձրացրեց և ասաց. «սնես, բոլոր դռները
բաց ու խուփ մի անի. այնպիսի աղմուկ ես
բարձրացնում, որ կարծես թէ չորս հոգի էք
գալիս։ Մտիր ներս և լուռ կաց. հայրդ վերե-
ւի սենեակում հիւանդ պառկած է. կառքով
տուն բերին նրան»։

սանդուղքից իջաւ, ուղղակի մտաւ գրացու տունը, օգնութեան կանչեց գրացուն, տատին ու այնտեղից վազեց ուսուցչի և գիւղական համայնքի մեծերի մօտ:

Դրանք բոլորն էլ մէկը միւսի յետեկց գալով՝ մտնում էին ննջեցեալի սենեակը. շուտով սենեակը մարդկանցով լցուեց. դուրսն էլ մէկը միւսին ասելով՝ եղելութիւնը շուտով ամենքին լայտնի եղաւ: Դրացիների աղմուկի և ցաւակցական խօսքեր ասելու միջոցին Ռիկօն անշարժ ու անխօս կանգնած էր հօր անկողնի մօտ և նայում էր նրա դէմքին: — Ամբողջ շաբաթուայ ընթացքում անընդհատ մարդիկ էին գալիս՝ ննջեցեալին յարգելու և ազգական կնոջից լսելու պատահած դժբաղդութեան հանգամանքները. Ռիկօն բազմաթիւ անգամ լսեց հետևեալ պատմութիւնը. Դտալացին աշխատում էր Սան-Գալլէնի երկաթուղու գծերից մէկի վրայ. քար կտրելու ժամանակ նա գլխի վրայ խորը վէրք էր ստացել և որովհետև էլ չէր կարող բանել, կամեցել էր տուն վերադառնալ՝ որ մի առ ժամանակ խնամուելով կրկին լաւանայ: Բայց երկար ճանապարհորդութիւնը, որ նա կատարեց մասսամբ ոտքով, մասսամբ բաց կառքով, աւելի ծանրացրեց նրա հիւանդութիւնը. կիրակի երե-

կոյեան տուն հասաւ, անկողին մտաւ և էլ չվերկացաւ: Նա վախճանուեց՝ առանց մէկին մի խօսք ասելու, որովհետև Ռիկօն նրան արդէն անկողնի վրայ տարածուած ու սառած գտաւ: Հանգուցեալին թաղեցին յաջորդ կիրակի օրը:

Ռիկօն էր միակ սգացողը, որ գնում էր գագաղի յետեկց՝ մի քանի բարի գրացիների ընկերակցութեամբ: Դագաղը տարան Զիլս: Եկեղեցում քահանան բարձր ձայնով կարդաց. «Հանգուցեալը կոչւում էր էնրիկօ Տրէվիլլօ և ծննդեամբ Գարդա լճի մօտ եղող բՊեշիերայից էր»:

Ռիկօն լսեց այդ և այնպէս թուաց նրան, որ իբրև թէ իր լսածը շատ լաւ գիտէր, բայց վաղուց արդէն չէր կարողանում մտաբերել. միշտ այդ լիճն էր աչքի առաջ ունեցել, երբ հօր հետ միասին երգում էր.

„Una sera

In Peschiera“.

Բայց ինքն էլ չէր իմացել թէ ինչո՞ւ: Այժմ նա այդ անունները մտքումը կրկնեց և մի շարք հին երգեր յիշեց:

Երբ Ռիկօն միայնակ վերադառնում էր գերեզմանատնից, տեսաւ որ տատը նստած է կոճղի վրայ, իսկ Մանիկը կանգնած է նրա

մօտ։ Տատը նշան անելով կանչեց, մի կտոր
քաղցրաւենիք քսած հաց դրեց նրա գրպանը —
մի այգպիսի կտոր էլ նախապէս դրել էր Մա-
նիկի գրպանը — և տսաց. գնացէք զբօսնելու,
այսպիսի մի տիսուր օր Ռիկօն մենակ չպէտք
է մնայ։ Պարզ երեկոյ էր. երեխաները միա-
սին ճանապարհ ընկան, իսկ տատը նստած
մնաց իր կոճղի վրայ և ցաւակցութեամբ նայում
էր սեամազ տղայի յետեկից, մինչև որ նրանք
աներեւոյթացան։ Տատը կամաց և ինքն իրեն
ասաց։

«Ինչ թոյլ է տալիս, ինչ ինքն է անում,
«Բոլորն էլ բարի վախճան է ստանում»։



ԳԼԽ. Զ.

ՐԻԿՈՒ ՄԱՅՐԸ



իլսի ճանապարհով, իր
ձեռնափակտի վրայ յե-
նուած՝ գալիս էր ուսու-
ցիչը։ Նա ներկայ էր ե-
ղել թաղմանը. Հազարով
և հեւալով երբ հասաւ
տատի մօտ, «բարի երե-
կոյ» ասաց և աւելաց-
րեց. «Եթէ թոյլ կտաք, մի ըոպէ ձեզ
մօտ կնստեմ, կուրծքս բռնուած է և
սաստիկ հազում եմ. բայց ի՞նչ կարող ենք ա-
սել մենք՝ մօտ 70 տարեկան հասակում, երբ
թաղում ենք այսօրուայ հանգուցեալի նման-
ներին։ Նա դեռ 35 տարեկան էլ չկար և
քարի պէս պնդակազմ մարդ էր»։

Ուսուցիչը նստեց տատի կողքին:

«Ինձ էլ երբեմն զբաղեցնում է այդ միտքը», ասաց տատը. «Ես, 75 տարեկան պառաւսդեռ ապրում եմ, իսկ այս ու այնտեղ վախճանւում են երիտասարդ մարդիկ, որոնք դեռ օգտակար կարող էին լինել»:

«Ծերերն էլ կարող են մի որևէ բանի համար օգտակար լինել. Հակառակ դիպուածում ովք պէտք է օրինակ լինէր երիտասարդներին», նկատեց ուսուցիչը: «Բայց այդ թողնենք, դրացի, ի՞նչ էք կարծում, ի՞նչ պէտք է անէ այն խեղճ տղան»:

«Այո՛, ի՞նչ պէտք է անէ այն խեղճ տղան», կրկնեց տատը. «Ես էլ նոյն հարցն եմ տալիս ինձ և եթէ միայն մարդկանց ի նկատի ունենալի, չէ՞ կարող պատասխանել. բայց երկնքումը կայ մի ձայր, որ ինամում է անտէր երեխաներին: Նա մի ճանապարհ ցոյց կտայ նաև այդ խեղճ տղայի համար»:

«Ասացէք խնդրեմ, ինչպէս եղաւ, որ իտալացին ամուսնացաւ ձեր դիմացը բնակուող դրացու աղջկայ հետո. մարդ չգիտէ թէ ո՞րտեղից են գալիս այդ օտարականներն և ո՞վքեր են»:

«Այնպէս եղաւ, ինչպէս որ լինում է սովորաբար: Զեզ յայտնի է, որ իմ հին բարեկամուհի Սննէ-Դէտէի բոլոր երեխաներն

ու ամուսինը վախճանուեցան և նա ապրում էր մեր դիմացի տանը միայն իր Մարի-Սեպլիի հետ, որ շատ ուրախ աղջիկ էր: 11 կամ 12 տարի առաջ Տըէվիլլօն Իտալիայից գալով՝ աշխատում էր Մալոյեա սարի վրայ և երեմն-երբեմն ցած էր գալիս այստեղ ուրիշ պատանիների հետ: Հէնց որ Մարի-Սեպլին և իտալացին միմեանց տեսան՝ իսկոյն հաւանեցին իրար և կամեցան միմեանց պատկանել: Եւ պէտք է ասել, որ Տըէվիլլօն մի գեղեցիկ երիտասարդ ու պատուաւոր և արդարագատ մարդ էր. ամենքը հաւանում էին նրան, իսկ Սննէ-Դէտէն ուրախանում էր նրանով: Սննէ Դէտէն ցանկանում էր, որ նրանք երկուսն էլ մնան իր մօտ, իրենց խրճիթում. Տըէվիլլօն էլ համելի էր այդ, որովհետև մօր հետ շատ լավէր և կատարում էր Մարի-Սեպլիի բոլոր ցանկութիւնները. Իտալացին երեմն-երբեմն դէպի Մալոյեա սարը զբունելու գնալով՝ վերևից ցոյց էր տալիս Մարիին այն ճանապարհը, որ ցած է գնում դէպի հովիտը և պատմում նրան՝ թէ ի՞նչպէս սիրուն է այնտեղ, իր հայրենիքում: Մարի-Սեպլին էլ մտքումը դրեց անպատճառ այնտեղ գնալ: Թէև մայրը շատ լաց եղաւ՝ ասելով թէ նըրանք այնտեղ չեն կարող ապրել, բայց չկա-

ըռղացաւ համոզել։ Տրէվիլլօն յայտնեց թէ ապրուստի կողմից կարող է հանգիստ լինել, որովհետև այնտեղ ինքը մի խրճիթ և փոքրիկ կալուածք ունի և օտարութիւն է եկել՝ միայն աշխարհ տեսնելու համար։ - Այդպիսով Մարի - Սեպիկի սիրտը գրաւելով՝ իտալացին հարսանիքից անմիջապէս յետոյ հայրենիք տարաւ նրան. յետոյ Մարին գրում էր այնտեղից մօրը, որ ինքը շատ լաւ է և Տրէվիլլօն աշխարհիս երեսին ամենից լաւ մարդն է։

«Հինգ-վեց տարի անցնելուց յետոյ, Տրէվիլլօն մի երեխայ ձեռքին՝ մի օր մտաւ դիմացի տանն ապրող Աննէ-Դէտէի մօտ և ասաց. «ահա՛, մայրիկ, սա մնաց միայն Մարի-Սեպիկից. նա թաղուած է իմ հայրենիքում իր միւս փոքրիկ զաւակների հետ. սա նրա առաջին և ամենասիրելի զաւակն է»։

«Յետոյ նա նստել էր այն նստարանի վրայ, ուր առաջին անգամ տեսել էր Մարի-Սեպիկին և ասել. եթէ համաձայն ես, երեխայիս հետ ալստեղ նկմնամ, որովհետև իմ հայրենիքում էլ չկարողացայ դիմանալ։

Այս առաջարկութիւնն Աննէ-Դէտէին սա է ինձ այս բոլորը պատմել - թէ ուրախութիւն և թէ վիշտ պատճառեց։ Փոքրիկ Ռիկօն մօտ 4 տարեկան, հանգիստ ու մտա-

ծող երեխայ էր. նա չար չէր, աղմուկ չէր անում և այդ խեղճ կնոջ վերջին ուրախութիւնն էր։ Մի տարի անցնելուց յետոյ այդ կինն էլ մեռաւ և Տրէվիլլօնին խորհուրդ տըւին՝ իր մօտ ընդունելու Աննէ-Դէտէի մի ազգական կնոջը. վերջինս պէտք է տունը կարգի բերէր և երեխային նայէր»։

«Այդպէս է եղել ուրեմն, ասաց ուսուցիչը, երբ տատը լոեց, «այդ բոլորն ես չգիտէի: Կարող է պատահել, որ Տրէվիլլօնի ազգականները մի օր յերեան գան, նրանց կարելի է խնդրել, որ հոգան խեղճ երեխայի համար»։

«Ազգականները», հառաջեց տատը, «այն կինն էլ ազգական է, բայց ամբողջ տարուայ ընթացքում խեղճ երեխան մի լաւ խօսք չէ լսել նրանից»։

Ուսուցիչը դժուարութեամբ վերկացաւ նստած տեղից. «Իմ բանն էլ վատ է, դրացի», ասաց նա գլուխը շարժելով. «չգիտեմ թէ ուժերս ուր կորան»։

Տատը քաջալերեց նրան ու ասաց. «Ինձ հետ համեմատելով՝ դու դեռ երիտասարդ ես»։ Բայց ինքն էլ զարմանում էր՝ թէ ինչո՞ւ այնքան ծանը էր քալում ուսուցիչը».

յաճախ նստում են իրենց տների առաջը՝ վերջին տաք երեկոների վայելչութիւնը զգալու համար. այս տարի ծեր ուսուցիչն էլ շուտ շուտ նստում էր իր տան առաջը, բայց սաստիկ նիհարացել և շարունակ հեռում էր: Մի առաւօտ, երբ նա ուզում էր անկողնից բարձրանալ՝ ուժերը չպատեցին և կրկին յետ ընկաւ անկողնի վրայ: Նա հանգիստ պառկած մնաց և սկսեց լուրջ կերպով մտածել՝ թէ ի՞նչ կլինի իր մահից յետոյ: Նա զաւակներ չունէր, իսկ ամուսինը վաղուց վախճանուել էր. միայն ծեր աղախինն էր մնացել նրա մօտ: Նրան զբաղեցնում էր գլխաւորապէս այն միտքը՝ թէ ում ձեռքը պէտք է անցնին իր իրեղէնները և որովհետեւ ջութակը պատից կախած էր ուղիղ նրա դիմացը՝ հայեացքը ձգելով նրա վրայ, ասաց. «այդ Էլ պէտք է թողնեմ այստեղ»: Նա լիշեց այն օրը, երբ Ռիկօն հէնց այդտեղ կանգնած նուագում էր ջութակի վրայ և մտածեց, թէ արգեօք աւելի լաւ չի լինի, եթէ ջութակը տայ Ռիկօնն, քան թէ մի հեռաւոր ազգականի, որ ջութակից բան էլ չէր հասկանալու: Ուսուցիչն ինքն իրեն մտածում էր, որ եթէ արժան գնով տայ ջութակը, գուցէ Ռիկօն կարողանայ գնել՝ որովհետեւ նրա հայրը մի փոքրիկ կարողութիւն

ԳԼԽ. Ե.

ՄԵԴԱԳԻՆ ԿՏԱԿԲ ԵՒ ՓԱՌԱԽՈՐ «ՀԱՅՐ—ՄԵՐԸ»



կար: Երբեմն Ռիկօն երկար ժամանակ կանգնած էր մնում իրանց դրան շեմքում և շուտարած նայում դէպի դիմացի տան դուռը՝ թէ արդեօք երբ պէտք է այնտեղից դուրս գալ Մանիկը:
Սեպտեմբեր ամիսը մօտենալիս, մարդիկ

Էր թողել նրան. բայց յանկարծ միտն ընկաւ, որ ջութակի համար ստացած փողն էլ չի կարող այն աշխարհը տանել։ Բայց այնուամենայնիւ դժուարանում էր՝ բոլորովին ձրի տալ Ռիկօին այն ջութակը, որի համար ինքն ամբողջ վեց գուլգէն էր վճարել։ Եւ այդպէս երկար ժամանակ նա մտածում էր՝ թէ ի՞նչ-պէս անէ, որ ջութակը բոլորովին ձրի չտայ, բայց հետզետէ աւելի պարզ ըմբռնեց, որ ինչպէս ջութակը, այնպէս էլ ուրիշ բան չի կարող տանել այն աշխարհը, ուրեմն պէտք է ստիպուած լինի ամեն բան թողնել ուրիշ ներին։

Այդ միջոցին նրա ջերմութիւնն աւելի սաստկացաւ. ամբողջ երեկոն ու գիշերը պառկած՝ կուռում էր զանազան մտքերի հետ. վաղուց մոռացուած իրողութիւններն ու դէպքերը վերակենդանանում էին նրա զիտակցութեան մէջ և հալածում նրան. առաւօտեան նա բոլորովին ուժասպառ էր և միմիայն մի միտք էր զբաղեցնում նրան. կամենում էր մի բարի գործ անել։

Նա ձեռնափայտը պատին խփելով այնքան թխկացրեց, մինչև որ ծեր աղախինը ներս մտաւ. ուսուցիչը պատուիրեց նրան, որ իսկոյն գնալ և տատին կանչէ։

Տատն էլ կարճ ժամանակից յետով մտաւ ուսուցչի սենեակը և մինչև որ նրա առողջութեան մասին կհարցնէր, ուսուցիչն ասաց. «Բարի եղէք, պատից ցած բերէք այն ջութակը և տարէք Ռիկօին տուէք. ես ընծայում եմ նրան, թող խնամքով պահէ»։

Տատը սաստիկ զարմացաւ և շարունակ կրկնում էր. «Ի՞նչ պէտք է անէ Ռիկօն, ի՞նչ պէտք է ասէ Ռիկօն»։

Բայց նկատելով, որ ուսուցիչը մի փոքր անհանգիստ է լինում և կարծես թէ ուզում է շտապեցնել իրեն, թողեց նրան և ջութակը կրան տակը դրած՝ իր բոլոր ուժով սկսեց վազել դաշտի վրայով դէպի տուն, որովհետեւ ինքն էլ սրտով ուզում էր, որ Ռիկօն որքան կարելի է շնուր իմանալ իր բաղդաւորութիւնը։

Ռիկօն կանգնած էր դրան շեմքում և տեսնելով որ տատը նշան անելով կանչում է իրեն՝ վազելով նրա առաջը կտրեց։

«Ահա, Ռիկօ», ասաց նա և դէմ արեց ջութակը, «ուսուցիչն է ընծայում քեզ. այժմ քոնն է»։

Ռիկօն կարծում էր թէ երազումն է, բայց տատն իրավէս ջութակը մեկնեց դէպի նա։ «Վերցրո՛ւ, Ռիկօ, քոնն է», կրկնեց տատը։ Ռիկօն ուրախութիւնից և ներքին յուզ-

մունքից դողալով՝ վերցրեց իր ջութակը և անթարթ աչքով այնպէս էր նայում վրան, որ կարծես թէ նորից իր ձեռքից պէտք է խլէին:

«Դու պէտք է խնամքով պահես ջութակը», ասաց տատը և գրանով վերջացրեց իր յանձնարարութիւնը, բայց վերջին խօսքերն ասելու միջոցին մի փոքր ժպտաց. նա գիտէր, որ այդ խօսքերն ասելու կարեք չկար. «Բայց, Ռիկօ, մտածիր նաև ուսուցչի մասին և երբէք չմոռանաս նրա՞րած բարութիւնը. այժմ նա շատ ծանր հիւանդէ»:

Տատն իրենց տուն գնաց, իսկ Ռիկօն իր գանձը ձեռքին շտապեց իր սենեակը, ուր միշտ մենակ էր լինում:

Նա նստեց այնտեղ և շարունակ նուազում էր՝ մոռանալով ուտելն ու խմելը և նոյն իսկ ժամանակը. մթնելու միջոցին միայն տեղից վեր կացաւ նա և ցած գնաց: Ազգական կինը խոհանոցից դուրս եկաւ և ասաց. «Դու կարող ես վաղն ուտել, այսօրուայ վարմունքիդ համար ոչինչ չես ստանալ»:

Ռիկօն քաղց էլ չէր զգում, թէև առաւտուանից ոչինչ չէր ճաշակել. այդպիսով նա այժմ էլ ուտելու մասին չմտածեց, միսիթարուած գնաց դիմացի տունն և ուղղակի մտաւ խոհանոցը. նա որոնում էր տատին: Մանիկը կանգ-

նած էր օջաղի մօտ ու կրակ էր անում. հէնց որ նա տեսաւ Ռիկօն, ցնծալով բարձրածայն աղաղակեց. տատի պատմածը լսելուց յետոյ այդ ամբողջ օրը կարծես թէ գետինն ալրւում էր նրա ոտքերի տակ, որովհետև չէր կարող դուրս վազել և իր սրտի ուրախութիւնն արտայալտել Ռիկօն: Մանիկը սաստիկ ուրախացած՝ շարունակ կրկնում էր. «Այժմ ջութակ ունեմ»:

Այդ աղմուկի վրայ տատը սենեակից դուրս եկաւ. Ռիկօն իսկոյն վազեց նրա մօտ և ասաց. «Տատիկ, արդեօք կարող եմ գնալ ուսուցչի մօտ և շնորհակալութիւն յալտնել նրան, թէև նա հիւանդ է»:

Տատը մի փոքր մտածեց, որովհետև առաւտուեան՝ ուսուցիչը բաւականին ծանր հիւանդ էր երեսում և յետոյ ասաց. «Սպասիր մի փոքր, Ռիկօ, ես էլ կգամ քեզ հետ» և գնաց ներս՝ մաքուր գոգնոց կապելու: Յետոյ նրանք, երկուսը միասին, գնացին ուսումնարան. առաջ ներս մտաւ տատը, նրան կամաց հետևեց Ռիկօն՝ ջութակը ձեռքից չէր բաց թողել:

Ուսուցիչը պատկած էր սաստիկ ուժաւապառ եղած. Ռիկօն մօտեցաւ անկողնին և միենոյն ժամանակ նայում էր իր ջութակին. նա

Համարեա թէ ոչինչ չկարողացաւ ասել, բայց
նրա աչքերն այնպէս էին շողջողում, որ ու-
սուցիչը հասկացաւ նրան, զուարթ հայեացք
ձգեց երեխայի վրայ և գլուխը խոնարհեցրեց.
յետոյ նշան անելով՝ տատին իր մօտ կանչեց:
Ռիկօն մի կողմը քաշուեց և ուսուցիչը թուլ
ձայնով ասաց. «Մեծ մայր, լաւ կլինի, եթէ
մի «Նայր մեր» ասէք ինձ համար, շատ ան-
հանգիստ եմ»:

Հէնց այդ միջոցին էլ երեկոյեան ժամի
զանգակները հնչեցրին. Ռիկօն ու տատը շտա-
պով ձեռքերը կցեցին և սկսեցին աղօթել:
Սենեակում խորին լռութիւն տիրեց: Տատը
մի փոքր կռացաւ և փակեց իր երկարամեայ
դրացու աչքերը — նա մեռած էր: — Յետոյ տա-
տը բռնեց Ռիկօի ձեռքը և նրա հետ լռու
դուրս եկաւ այնտեղից:

ԳԼԽ. Ը.

Զ Ի Լ Ո Ւ Բ Լ Ճ Ա Ւ Մ Օ Տ



անիկն ամբողջ շաբաթն
ուրախութիւնից չգիտէր
թէ ի՞նչ անէ, բայց միւ-
նոյն ժամանակ նրան
այնպէս էր թւում՝ թէ
այդ շաբաթը սովորակա-
նից տասն օր աւելի ու-
նի՝ որովհետև կիրակին չէր վրայ
հասնում:

Բայց երբ վերջապէս կիրակի օրն եկաւ
և աշնանային կերպարանք ստացած սարերի
դագաթները լրւսաւորուեցին ոսկեգոյն արևի
ճառագայթներով, Մանիկը Ռիկօի հետ բարձ-
րացաւ սարը և նստեց եղենիների տակ. փալ-
փլող լիճը տարածուած էր նրանց ոտքերի

տակ։ Այս բոլորն այնպիսի ուրախութիւն էին պատճառում Մանիկին, որ թռչկոտում էր մամուռի մէջ և ցնծալով բացագանչում։ յետոյ նստեց զառիվարի գլխին, որ ամե՞ն բան կարողանայ տեսնել՝ թէ արևահար սարերը, թէ լիճը և թէ շատ հեռուից հազիւ նշմարուող կապոյտ երկինքը։

Նա կանչեց. «արէ ալստեղ, Ռիկօ, ալսօրմենք շատ երկար պէտք է երգենք»։

Ռիկօն նստեց Մանիկի կողքին, հետը բերած ջութակը լարեց և երկուսով սկսեցին երգել.

«Գառնուկներ, ցած եկէք արևահար սարերից»……

Յետոյ նրանք կրկին սկզբից սկսեցին և երգեցին ամբողջ երգը, այդ բանը մեծ զուարձութիւն էր պատճառում նրանց և երբ վերջացնում էին, սկսում էին նորից և ապա կըրկին նորից և այսպիսով տասն անգամից աւելի կրկնեցին. և որչափ կրկնում էին, այնչափ աւելի դուր էր գալիս նրանց։

Յետոյ Ռիկօն նուագեց մի քանի եղանակներ, որ հօրից էր սովորել, բայց մի քանի րոպէից յետոյ նրանք էլի սկսեցին իրենց երգը՝ Վերջին երգը նուագելիս՝ Մանիկն ընդ-

հատեց նրան և աղաղակեց. «այժմ գիտե՞մ թէ ինչպէս առանց փողի կարող ես ցած գնալ դէպի լիճը»։

Ռիկօն յանկարծ լոեց և անհամբեր նայում էր նրան։

«Տես», զարունակեց Մանիկն եռանդով. «այժմ ջութակ ունես և երգել էլ գիտես. ճանապարհին կարող ես հիւրանոցների դռներում երգել ու նուագել. այդպիսով այնտեղի մարդիկը տեսնելով որ մուրացկան չես, քեզ թէ ուտելու բան կտան և թէ գիշերելու թուլտութիւն։ Այդպիսով կարող ես գնալ մինչև այն լիճը և նորից վերագառնալ»։

Ռիկօն խորին մտածմունքի մէջ ընկղմուեց, բայց Մանիկը ժամանակ չտուեց նրան շուտարուելու և պահանջում էր իսկոյն մի երգ էլ նուագել։

Մանիկն ու Ռիկօն այդպէս շարունակ երգելով՝ չլսեցին երեկոյեան ժամի զանգակի ձախը և երբ սկսեց արգէն մթնել, նոր նկատեցին, որ տուն վերագառնալու ժամանակն է. նրանք հեռառից արգէն նշմարեցին տատին, որ երկիւղով այս ու այն կողմն էր նայում։

Բայց այս անգամ Մանիկն այնպէս ոգեւորուած էր, որ այդ բանը նրան առանձին անհանգստութիւն չպատճառեց։ Նա վագեց դէպի տատը և աղաղակեց. «Չես կարող հա-

ւատավ, տատիկ, թէ ի՞նչպէս լաւ է նուագում
Ռիկօն զութակի վրայ. մենք մեր սեպհական
երգն էլ ունենք, ուզում ես՝ քեզ համար էլ
իսկոյն երգենք»:

Եւ տատի պատասխանին չսպասելով՝ նը-
րանք իրենց քաղցրահնչիւն ձայնով ու ջու-
թակով ամբողջ երգը վերջացրին։ Տատը սի-
րով լսում էր նրանց թարմ ձայները. նա ար-
դէն նստել էր կոճղի վրայ և երբ երեխանե-
րը վերջացրին, ասաց. «արի ինձ մօտ, Ռիկօ,
մի բան էլ նուագիր ինձ համար և երկուսս
միասին երգենք։ Արդեօք դիտե՞ս «երգում եմ
սրտանց» երգը։

Ռիկօն գուցէ լսել էր ալդ երգը, բայց
ճիշտ չգիտէր և ալդ պատճառով ասաց, որ
լսու կլինի, եթէ առաջ տատը մի անգամ երգէ,
ինքը կամաց նուագելով կձայնակցէ նրան և
ապա թէ ինքն էլ կարող կլինի երգել։

«Այժմ ես պէտք է երգեմ իմ դողդոջուն
ձայնով», ասաց տատը, բայց և այնպէս զուար-
ճութեամք մի ամբողջ տուն երգեց. թէև նրա
ձայնը մի փոքր գողդոջուն էր, բայց ճիշտ
երգեց և Ռիկօն կարողացաւ եղանակը սովորել.
նա առաջ էլ լսել էր ալդ երգը։

Տատն սկսեց երգի բառերն առաջուց ա-

սել և այդպիսով ամենքը միասին ուրախ եր-
գում էին։

«Այդպէս», ասաց տատը գոհ սրտով, «այս
երգն իսկական երեկոյեան աղօթք էր, այժմ
կարող էք խաղաղ հանգստանալու գնալ, զա-
ւակներս»։



ԳԼԽ. թ.

ԵՐԿՐԱՅԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ



ըբ Ռիկօն սովորականից
աւելի ուշ տուն վե-
րադարձաւ—որովհե-
տե երգելու միջոցին
կէս ժամի չափ ան-
ցել էր — ազգական
կինն աղաղակեց. «Այ-
ժը այդպիսի բանե՞ր
ես անում. կերակուրը միժամ շարունակ սեղանի
վրայէր դրած, հիմա էլ չկայ.՝ իսկոյն գնա՞ քո սե-
նեակը և եթէ դու անպիտանի մէկը և դա-
տարկաշըիկ դուրս գաս, յանցանքն իմս չէ.
քեզ պէս տղայի խնամատար իլինելն էլ մի
պատիժ է»:

Ռիկօն մինչև այժմ երբէք ոչ մի խօսք
անգամ չէր պատասխանել՝ այդ կնոջ նախա-
տինքները լսելիս. բայց այդ երեկոյ նայեց նրա
երեսին ու ասաց. «Ես կարող եմ հեռանալ
ձեզնից»:

Կինը բարկացած՝ ահագին աղմուկով կող-
պեց տան դուռը, ներս մտաւ սենեակը և իս-
կոյն դուռը յետ դրեց. Ռիկօն բարձրացաւ իր
մութը սենեակը: —

Յաջորդ օրը, երբ դիմացի տանն ապրող
մեծ ընտանիքը՝ ծնողները, տատը և բոլոր
երեխաները նստած ընթրում էին, ազգական
կինը վազելով ներս ընկաւ և սենեակի դռնից
հարցրեց՝ թէ արդեօք Ռիկօն տեղեկութիւն-
ունին, ինքը չգիտէ նրա ուր լինել:

«Եթէ ընթրելու համար ես ասում, մի
վախենայ, կգայ», պատասխանեց հանգիստ կեր-
պով հայրը:

Կինը ներս մտաւ սենեակը—որովհետեւ
սկզբումը կարծում էր թէ տղան այնտեղ կլինի
և իր ձայնը լսելով դուրս կգայ—և պատմեց,
որ Ռիկօն ոչ նախաճաշին է տուն եկել, ոչ
ճաշին. զիշերն էլ անկողնումը չէ եղել, որովհե-
տե անկողինն այժմ էլ նոյն դրութեան մէջն է,
ինչպէս որ էր երեկ երեկոյեան. ինքը կար-
ծում է, որ նա լուսանալուց առաջ է դուրս

գնացել, որովհետև դրան ներսի փականքն առաւտեան բաց է եղել վերջին իրողութեան վրայ ինքը սկզբումն ուշադրութիւն չէ դարձ- րել՝ կարծելով թէ երեկոյեան բարկացած լի- նելով՝ մոռացել է փակել:

«Ուրեմն նրան մի բան է պատահել», ա- սաց հայրը հաստատ կերպով: «Զլինի՛ թէ խեղճ տղան սարի վրայ մի ծերպի մէջ է ըն- կել. երբեմն պատահում է, որ այդպիսի նի- հար երեխաներն այս ու այն կողմը վազվզե- լով ընկնում են ծերպերի մէջ: Պէտք է մի փոքր առաջ իմաց տալիք», շարունակեց նա դանդաղ կերպով, «Նրան պէտք է որոնել, իսկ գիշերն ոչինչ չի կարելի տեսնել»:

Ազգական կինն սկսեց սարսափելի աղ- մուկ բարձրացնել և ասել, թէ ինքն արդէն գիտէր, որ իրեն դեռ կյանդիմանեն էլ. միշտ այդպէս է լինում, երբ մարդ երկար տարի- ներ տանջում է և լուսմ:

«Ոչ ոք չէ հաւատում»—աղաղակեց նա և դրանով մի մեծ ճշմարտութիւն ասաց—, «թէ ի՞նչպիսի խարդախ, խորամանկ և յամառ- տղայ է նա և թէ ի՞նչպէս երկար տարինե- րից ի վեր դառնացրել է կեանքս. նա դատար- կացրջիկ, թափառական և վնասակար անպի- տանի մէկը դուրս կդայ»:

Տատը վաղուց արդէն դադարել էր ու- տելուց, սեղանից վեր էր կացել և կանգնել դեռ ևս շարունակ աղմուկ բարձրացնող կնոջ առաջը:

«Բաւական է, դրացի, բաւական է», ա- սաց երկու անգամ տատը, մինչև որ կինը լռեց: «Ես էլ ճանաչում եմ Ռիկօնն. նրա վար- քը յայտնի է ինձ այն օրից, երբ նրան իր մեծ մօտ բերին: Բայց եթէ ես ձեր տե- ղը լինեմ՝ ոչ մի խօսք չեմ ասի և մի փոքր կմտածեմ, թէ արդեօք այն փոքրիկ տղան, որին գուցէ մի դժբաղդութիւն է պատահել և կամ թէ արդէն Աստծոյ առաջն է կանգ- նած, ոչ ոքի մասին չի գանգատուի այնտեղ, արդեօք ոչ ոք անարդար չէ վարուել այդ որբի հետ՝ չար և վատ խօսքեր ասելով նրան»:

Ազգական կինը լիշում էր, թէ այն երե- կոյեան Ռիկօն ի՞նչպէս նայել էր իր երեսին և ասել. «Կարող եմ հեռանալ ձեզնից»: «Նա այդ սարսափելի աղմուկը բարձրացնում էր, որ մոռանայ այդ խօսքերը. չէր համարձակ- ւում տատի երեսին նայել և ասաց. «գնամ տեսնեմ, գուցէ Ռիկօն արդէն վերադարձել է» և այժմ նա սաստիկ ցանկանում էր, որ այդ- պէս լինի:

Այդ օրից սկսած ազգական կինն երբէք

տատին ոչ մի խօսք չէր ասում Ռիկօի դէմ:
Նա—ինչպէս և ուրիշ շատերը—կարծում էր,
որ Ռիկօն մեռած է և ուրախ էր, որ ոչ ոքի
յայտնի չէր Ռիկօի՝ վերջին երեկոյեան իրեն
ասած խօսքերը:

Ռիկօի անյալտանալու յաջորդ առաւտը
Մանիկի հալը կալից մի երկար ձող վերցը եց
և ասաց. պէտք է մի երկու դրացիների հետ
միասին որոնել տղային, գուցէ նա սառցակոյտերի
կողմը լինի գնացած:

Մանիկը նրա յետեից գնաց. հալը տես-
նելով նրան՝ ասաց. «Չատ լաւ, դու էլ արի
և օգնիր ինձ, դու ինձնից աւելի հեշտու-
թեամբ կմտնես խոռոչների մէջ»:

Մի երկար ու բարակ ձող գտնելուց յե-
տոյ Մանիկն ասաց. «Հալը իկ, եթէ Ռիկօն ու-
ղիղ ճանապարհով դէպի ցած գնար՝ հօ ծեր-
պերի մէջ չէր կարող ընկնել»:

«Ո հարկէ կարող էր», պատասխանեց
հալը: «Այդպիսի անխոհեմ տղաները ճանա-
պարհից շեղւում են և ընկնում ծերպերի մէջ՝
իրենք էլ չիմանալով թէ ի՞նչպէս. նա էլ մի
փոքր շուարած տղայ էր»:

Որ Ռիկօն ճիշտ այդպէս էր, Մանիկից
լաւ ոչ ոք չգիտէր. այդ ըստէից նրա սրտում
մի երկիւղ առաջացաւ և օրէցօր սաստկանում

էր, այնպէս որ խեղճ աղջիկն անհանգստու-
թիւնից ու տանջուելուց՝ ոչ կարողանում էր
ուտել, ոչ քնել և այնպէս էր գործ կատա-
րում, որ կարծես թէ խելքը գլխին չլինէր:

Ռիկօն չգտնուեց. ոչ մի մարդ չէր տե-
սել նրան. նրա հետքն էլ չերևաց: Գիւղա-
ցիները գագարեցին նրան որոնելուց և միի-
թարւում էին՝ ասելով թէ. «լաւ եղաւ, որ
այդպէս պատահեց. խեղճ որբն անտէր էր ու
հոգացող չունէր»:



սենեակը և ասաց. «Տես, Մանիկ, ես շատ լաւ հասկանում եմ, որ չես կարող մոռանալ Ռիկին, բայց պէտք է մտածես, որ Աստուած է տարել նրան իր մօտ. իսկ Աստուած ամենքի լաւն է կամենում»:

Մանիկն սկսեց այնպէս լալ, որ երբէք տատը նրան այդպէս չէր տեսել. նա հեկեկում էր բարձրաձայն. «Աստուած չէ տարել նրան, տամիկ, ես եմ մեղաւորը. այդ պատճառով էլ երկիւղից համարեած թէ մեռնում եմ. ես դրդեցի Ռիկին դէպի լիճը ցած գնալու. երևի ընկել է ծերպերի մէջ և մեռել. ով գիտէ ինչպէս է տանջուել ցաւից և այս բոլորի պատճառն ես եմ», ասում էր Մանիկն և ողորմելի կերպով ողբում ու հեկեկում:

Տատի սիրտը ճնշող ծանր բեռը կարծես թէ վայր ընկաւ. նա արդէն կորած էր համարում Ռիկօին՝ ինքն իրեն մտածելով, թէ երևի խեղճ տղան աղքական կնոջ վարմունքից ստիպուած՝ փախել է և ջուրն ընկել կամ թէ անտառում անյալտացել: Այժմ յանկարծնոր յոյսեր առաջացան նրա սրտում:

Նա հանգստացեց Մանիկին և պատմել տուեց լճի ամբողջ պատմութիւնը, որ յայտնի չէր իրեն: Մանիկը մանրամասն պատմեց՝ թէ ինչպէս Ռիկօն շարունակ լճի մասին էր

ԳԼԽ. Ժ.

ՓՈՔՐ ԻՆՉ ՊԱՐՁԱՊՈՄ է



ըէցօր Մանիկը նիհարում էր և լուռ մնում: Փոքրիկ մանուկները գանգատում էին. «Մանիկն էլ ոչինչ չէ ուզում պատմել և չէ ծիծաղում»: Մալրն ասում էր ամուսնուն. «Զես տեսնում, նա էլ առաջուանը չէ»: Հալրն էլ ասում էր. «Մեծանալուցն է. առաւօտներն ախոռում նրան մի փոքր այծի կաթ պէտք է խմեցնել»:

Երեք շաբաթ այդպէս անցնելուց յետոյ, մի երեկոյ տատը Մանիկին վերև տարաւ իր

խօսում, ուզում էր գնալ այնտեղ և թէ ի՞նչ-պէս ինքը միջոց սովորեցրեց նրան՝ իր նպատակին հասնելու: Նա հաստատ համոզուած էր, որ Ռիկօն այն կողմն է գնացել, բայց հօր ասած խօսքերը՝ թէ նա կարող էր ճանապարհեց շեղուել ու ծերպերի մէջ ընկնել, յուսահատեցրել էին նրան:

Տատը Մանիկի ձեռքը բռնելով՝ մօտեցրեց իրեն և ասաց սիրալի կերպով. «արի այստեղ, Մանիկ, մի բան պէտք է բացատրեմքեզ: Յիշում ես այն երգը, որ Ռիկօն հետ միասին երգեցինք վերջին երեկոյեան»:

«Ինչ թոյլ է տալիս, ինչ ինքն է անում,
«Բոլորն էլ բարի վախճան է ստանում»:

«Տեսնում ես. թէև Աստուած կարող էր այնպէս անել, որ Ռիկօն հէնց իր անկողնում մեռնէր, բայց այդպէս չէ արել. նա թոյլ է տուել, որ դու սիսալ բան գործես: Եւ որովհետև սիսալ բան ես արել, ամբողջ կեանքումդ չես մոռանալ. դու տեսար թէ ի՞նչ-պիսի հետևանքներ կարող է ունենալ՝ երբ երեխաներն աշխարհ են դուրս գալիս և այնպիսի գործեր ձեռնարկում, որ բոլորովին չեն կարող. և երբ այդ անում են առանց մի խօսք անգամ ասելու իրենց տատին կամ ծնողներին, որոնք նրանց բարին են ցանկանում միշտ:

Բայց Աստուած է թոյլ տուել այդպէս լինելու և մենք հաստատապէս պէտք է յուսանք, որ բոլորը բարի վախճան կարող է ունենալ:

«Մտածիր միայն և երբէք չմոռանաս ասածներս: Եւ որովհետև սրտանց ցաւում ես արածիդ վրայ, կարող ես գնալ և Աստծուն աղօթել ու խնդրել, որ նա քո և Ռիկօն արած մխալ գործին բարի վախճան տայ: Յետոյ կարող ես նորից ուրախ լինել, Մանիկ. ես էլ քեզ հետ ուրախ կլինեմ այսուհետեւ, որովհետև հաստատ համոզուած եմ այժմ, որ Ռիկօն կենդանի է և Աստուած անտէր չի թողնի նրան»:



ԳԼԽ. ԺԱ.

ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ



յն կիրակի երեկոյեան Ռի-
կօն նստել էր իր մու-
թը սենեակում և որո-
շել՝ ալդպէս նստած մը-
նալ մինչև ազգական
կնոջ անկողին մտնելը:
Դէպի լիճը ճանապար-
հորդելու վերաբերու-
թեամբ Մանիկի արած գիւտի իրագործե-
լը Ռիկօն շատ հեշտ թուաց. այնուհետեւ
մտածում էր՝ թէ ի՞նչ յարմար առիթ գըտ-
նէ փախչելու, որովհետեւ ենթադրում էր,
որ ազգական կինն արգելք կլինի իր գնալուն՝
թէս գիտէր, որ նա իրեն չէ սիրում:

Երբ այն երեկոյեան տուն եկաւ և զուր
տեղն այդ կնոջից յանդիմանութիւն ստացաւ,
ինքն իրեն մտածեց. «Հէնց որ անկողին կմըտ-
նի, իսկոյն ճանապարհ կընկնեմ»:

Իիկօն մութը սենեակում աթոռի վրայ
նստած մտածում էր՝ թէ ի՞նչ լաւ բան կի-
նի, որ ինքը մի քանի օր կազատուի ազգա-
կան կնոջ յանդիմանութիւնը լսելուց և վե-
րադառնալիս կարմիր ծաղիկների ի՞նչ մեծ
փունջ կբերի Մանիկի համար: Եւ երևակայե-
լով լիճի արևահար ափերն ու մանիշակագոյն
սարերը՝ քունը տարաւ:

Բայց որովհետեւ ջութակը ձեռքին և ա-
թոռի վրայ էր քնել, շուտով կրկին զարթեց.
գեռ բոլորովին մութն էր. նա պարզ կերպով
լիշեց բոլորը: Կիրակնօրեալ զգեստն ունէր հա-
գած և երեկուանից գլխարկն էլ գեռ գլխին էր.
նա ջութակը թևի տակն առաւ, կամաց կա-
մաց սանդուղքից ցած իջաւ, դուռը բացեց
և դուրս գնաց առաւօտեան թարմ ու զով
օդի մէջ:

Սարերի գագաթներն արդէն փոքը առ
փոքը լուսաւորւում, իսկ Զիլսում աքաղաղ-
ները կանչում էին: Նա քայլելը բաւականին
արագացրեց, որ տներից հեռանալ և մեծ ճա-
նապարհի վրայ ընկնի. շուտով հասաւ այն-

տեղ և ուրախ առաջ գնաց, որովհետև ամեն-
բան լաւ ծանօթ էր իրեն. հօր հետ միասին
շատ անգամ էր իշել նա այդ ճանապարհով:
Իսկ թէ որքան ժամանակ գնալուց յետոյ կա-
րելի էր հասնել Մալոյեա սարը, լաւ չէր յի-
շում և երբ երկու ժամից աւելի շարունակ
գնալով գեռ չհասաւ՝ երկար թուաց նրան այդ
ճանապարհը:

Այդ միջոցին հետզհետէ բոլորովին լու-
սացաւ. երբ Ռիկօն կրկին մի ժամից աւելի
գնալով՝ հասաւ Մալոյեա սարի այն փոքրիկ
հրապարակ տեղը, — պանդոկատան առաջը —
որտեղից նա յաճախ հօր հետ միասին դէպի
ցածի ճանապարհն էր նայել, արեւ ծածկել
էր սարերի լանջերը և եղենիների գագաթ-
ները ոսկի գոյնով էին փալիլում: Ռիկօն նըս-
տեց ճանապարհի ավին. նա լաւ յոդնած էր
և այժմ միայն նկատեց, որ նախորդ օրուայ
ճաշից յետոյ ոչինչ չէ կերել: Բայց չվհատուեց,
որովհետև այդ տեղից սկսած ճանապարհն
արդէն զառիվար էր և յետոյ յանկարծ պէտք
է լիճն երեար: Հէնց այդ միջոցին՝ դղրդոց
բարձրացնելով մօտեցաւ փոստալին կառքը:
Ռիկօն յաճախ տեսել էր Զիլսով անցնող փոս-
տալին այդպիսի կառքեր և միշտ մտածել՝ թէ
երկրիս վրայ ամենաերջանիկ մարդն այն կա-

ռապանն է, որ մտրակը ձեռքին շարունակ
կարող է նստել իր բարձր տեղը և հինգ ձի
միասին կառավարել: Այժմ նա այդ երջանիկ
մարդուն մօտիկից տեսաւ, որովհետև կառքը
կանգ առաւ. Ռիկօն մի վայրկեան անգամ աչ-
քը չհեռացրեց այն գարմանալի մարդուց, որ
իր բարձր նստարանից ցած իջաւ, ներս մտաւ
պանդոկը և կրկին գուրս եկաւ մի քանի ա-
հագին սև հացեր ձեռին, որոնց վրայ մի
խիստ մեծ կտոր պանիր կար:

Յետոյ կառավանը մեծ դանակը հանե-
լով՝ կտրտեց հացը և կարգով սկսեց մի մի
կտոր դնել ձիերի բերանը. երբեմն էլ իր
հերթը գալով՝ մի մի պատառ էլ իր բերանն
էր գնում, բայց դէպի իր բերանը տարած
պատառների վրայ պանրի խոշոր կտորներ էին
լինում: Երբ նրանք ամենքն այդպէս ախոր-
ժակով ուտում էին, կառավանն իր շուրջը
նայելով՝ տեսաւ Ռիկօնն և յանկարծ կանչեց.
«Էյ, փոքրիկ երաժիշտ, չ՞ս ուզում մեզ հետ
ընկերանալ, արի այստեղ»:

Ռիկօն առաջն ուտելու բան տեսնե-
լով՝ զգաց իր քաղցածութիւնը, սիրով ընդու-
նեց հրաւերը և մօտեցաւ կառավանին: Վեր-
ջինս մի խիստ մեծ կտոր պանիր կտրեց նրա
համար և դնելով դրանից շատ աւելի մեծ

կտոր հացի վրայ՝ տուեց նրան. Ռիկօն չգիտէր թէ ի՞նչպէս բռնէ այդ ահազին կտորները և ստիպուած եղաւ ջութակը գետնի վրայ գնել: Կառապանը զուարճութեամբ դիտում էր՝ թէ ի՞նչպէս է կծոտում Ռիկօն իր նախաճաշը և միւնոյն ժամանակ իր գործն էլ շարունակելով ասաց.

«Դու գեռ շատ փոքրիկ ջութակահար ես, նուագել գիտե՞ս»:

«Այո՛, երկու երգ գիտեմ և մէկ էլ հայրիկիս երգածը», պատասխանեց Ռիկօն:

«Այդպէս հա. բայց այդ փոքրիկ ոտքերով ուր պիտի գնաս»:

«Դէպի Պեշիէրա, Գարդա լճի մօտ», պատասխանեց լուրջ կերպով Ռիկօն:

Այդ խօսքի վրայ կառապանն այնպէս բարձրածայն ծիծաղեց, որ Ռիկօն բոլորովին ապշած նայում էր նրան:

«Լաւ կառք ես», ծիծաղեց նորից կառապանը. «գիտե՞ս, որքան հեռու է քո ասած տեղը. քեզ նման փոքրիկ երաժշտի երկու ոտքերն ու ներբաններն էլ կմաշուին, առանց Գարդա լճի մի կաթիլ ջուրն անգամ տեսնելու. ով է քեզ այնտեղ ուղարկում»:

«Ես ինքս եմ գնում», ասաց Ռիկօն: «Մի ալսպիսի երաժիշտ չեմ տեսել մին-

չև այժմ», ասաց և բարեմտութեամբ կրկին ծիծաղեց կառապանը. «որտեղացի ես, երաժիշտ»:

«Ճիշտը չգիտեմ, գուցէ Գարդա լճի կողմերից», պատասխանեց Ռիկօն բոլորովին լուրջ կերպով:

«Ա՛յ քեզ պատասխան», ասաց կառապանը և սկսեց աւելի լաւ գիտել երեխալին: Ռիկօն մի որևէ է կորած մուրացկանի երեխալի չէր նմանում. կիրակնօրեալ զգեստի վրայ նրա սևամազ գլուխը բաւականին վայելուչ էր երեսում, իսկ լրջմիտ աչքերով սիրուն դէմքն աղնիւ կնիք էր կրում. մի անգամ նրան տեսնողը նորից էր ուզում նայել վրան».

Երեւի կառապանն էլ նոյն զգացմունքն ունեցաւ. նա մի քանի անգամ լաւ նայեց երեխալին և յետոյ բարեկամաբար ասաց. «դուք քո անցագիրն երեսիդ վրայ ես կրում, փոքրիկ, թէւ որտեղացի լինելիք չգիտես: Ի՞նչ կտաս ինձ, որ կողքիս նստեցնեմ և քո ճանապարհով բաւականին հեռու ցած տանեմ քեզ»:

Ռիկօն ապշել էր. նա կարծես թէ կարելի չէր համարում, որ կառապանն այդ խօսքերն իրապէս ասած լինի. փոստային կառքով դէպի հովիտն իջնելու երջանկութեան

կարելիութիւնը նա երբէք մտքովն անգամ
չէր անցկացրել։ Բայց ի՞նչ կարող էր տալ
կառապանին»։

«Բացի այս ջութակից ոչինչ չունեմ, իսկ
ջութակը չեմ կարող ձեզ տալ», մի փոքր
մտածելուց յետոյ ասաց Ռիկօն տխրութեամբ։
«Ե՞՞չ, այդ արկղն ինձ էլ պէտք չէ»,
ժպտալով ասաց կառապանը. «արի, նստենք
միասին—դու ինձ համար մի փոքր կնուագես»։
Ռիկօն չէր ուզում իր ականջներին հա-
ւատ ընծայել, բայց մի ակնթարթում կա-
ռապանը բարձրացրեց նրան ակների վրայով
դէպի իր տեղը և ինքն էլ նստեց։ Ճանապար-
հորդներն էլ նորից նստեցին, դուռը յետ դը-
րին և կառքն արդէն գլորում էր այն ծա-
նօթ ճանապարհով, որ Ռիկօն յաճախ տե-
սել էր վերելից և միշտ փափագել՝ այդ տեղով
անցնել դէպի Գարդա լիճը։ Այժմ կատարուեց
նրա ցանկութիւնը և ի՞նչ կերպով. բարձրը,
երկնքի և երկրի մէջտեղը նստած, սլանում
էր Ռիկօն դէպի ցած և գեռ էլի համարեա
թէ չէր ուզում հաւատալ՝ որ ինքն է այդ։
Կառապանն էլ մնացել էր զարմացած
թէ արդեօք իր կողքին նստած երեխան ումն է։
«Ասա ինձ, փոքրիկ, հայրդ որտեղ է»,

հարցրեց նա ձեռքի մտրակը պինդ շոխաց-
նելուց յետոյ։

«Նա մեռած է», պատասխանեց Ռիկօն։

«Իսկ մայրդ որտեղ է»։

«Մեռած է»։

«Պապդ ու տամդ ուր են»։

«Նրանք էլ մեռած են»։

«Բայց երեխ եղբայր կամ քոյր կունենաս,
նրանք որտեղ են»։

«Նրանք էլ մեռած են», տխուր պատաս-
խանում էր շարունակ Ռիկօն։

Կառապանը տեսնելով, որ ամենքն էլ մե-
ռած են, ազգականներին հանգիստ թողեց և
հարցրեց միայն. «Հօրդ անունն ի՞նչ էր»։

«Ենրիկօ Տրէվիլլօ, Գարդա լճի մօտի Պե-
շիէրալից», պատասխանեց Ռիկօն։

Կառապանը բոլոր լսածները մտքի մէջ
ամփոփելով ինքն իրեն ասաց. երեխ սա մի
գողացուած երեխայ է և լաւ է, որ կրկին
հայրենիք է գնում. այդ վճիռը կայացնելով՝
նա թողեց իր հարց ու փորձը։

Երբ ճանապարհի առաջին զարդարն
անցան և հարթ տեղ հասան, կառապանն ա-
սաց. «Երաժիշտ, այժմ մի ուրախ երգ նուա-
գիր»։

Ռիկօն ջութակն առաջ քաշեց և լաւ

տրամադրութեան մէջ՝ բարձր գահուքի վրայ նստած ու կապուտ երկնքի տակ առաջ սլանալով՝ ուժեղ ձեռքով զարկեց լարերին և միենուն ժամանակ իր բարակ ու արծաթաձալն հնչիւններով երգեց.

«Գառնուկներ, ցած եկէք արևահար սարերից»:

Փոստային կառքում ամենից վեր նստած էին երեք ուսանողներ. նրանք օգուտ քաղելով արձակուրդից՝ ճանապարհորդում էին. երբ Ռիկօն ուրախ ու զուարժ շարունակում էր Մանիկի հեղինակած երգի տուները նուագել և ոգեսրուած երգել, յանկարծ կառքի վերին մասում ահագին քըքիջ ու ծիծաղ բարձրացաւ և ուսանողներն աղաղակեցին. «Սպասիր, ջութակահար, նորից սկսիր, մենք էլ կերգենք հետդ»:

Ռիկօն նորից սկսեց և ուսանողներն էլ բոլոր իրենց ուժով սկսեցին երգել.

«Եւ գառնուկները, և գառնուկները»— երգելիս նրանք երբեմն այնպիսի աղմկալի ծիծաղ էին բարձրացնում, որ Ռիկօի ջութակի ձայնն էլ չէր լսում. նրանք սկսեցին կրկին անգամ երգել. Նրանցից մէկն առաջ մենակ երգում էր.

«Գառնուկներ, ցած եկէք,

արևահար սարերից»:

Յետոյ միւսներն էլ սկսում էին և երգում բարձրաձայն, ինչքան կարողանում էին. «Եւ գառնուկները և գառնուկները»:

Եւ այդպէս շարունակուեց բաւականին ժամանակ. երբ Ռիկօն մի անգամ փոքր ինչ լոեց և նուագելուց դադարեց, ուսանողներն աղաղակեցին. «շարունակիր, ջութակար, մի ընդհատիր» և մանր փող տուին նրան:

Կառքի մէջ նստող ճանապարհորդներն էլ բոլոր լուսամուտները բաց արին և գլուխները դուրս հանելով լսում էին նրանց ուրախ երգը. Ռիկօն նորից սկսեց երգել, ուսանողներն էլ ձայնակցում էին. Երգը բաժանեցին երկու մասի՝ մենանուագի և խմբական երգեցողութեան. Առաջ սկսում էր մենանուագը, իսկ յետոյ երգում էր խումբը:

Ապա սկսում էին այնպէս սաստիկ ծիծաղել, որ մի քանի վայրկեան էլ չէին կարողանում երգել:

Բայց կառապանը յանկարծ կառքը կանգնեցրեց, որովհետև ձիերը պէտք է հանգստանալին և ճանապարհորդներն էլ ճաշէին. Երբ կառապանը Ռիկօին ցած բերեց, պինդ բռնել էր նրա գլխարկը, որովհետև ուսանողների

տուած փողերն այնտեղ էին, իսկ Ռիկօն հազիւ իր ջուժակն էր կարողանում պահել:

Կառապանը գուարձութեամբ գլխարկը Ռիկօին տուեց և ասաց. «շատ լաւ եղաւ, այժմ այդ փողով կարող ես ճաշել»:

Ուսանողները մէկը միւսի յետեից կառքից ցած թռչելով՝ ուզում էին տեսնել ջութակահարին, որովհետեւ նստած տեղից լաւ չէին կարողացել տեսնել նրան. այժմ երբ տեսան այդ բարակ ու վտիտ երեխային, աւելի զարմացան և նորից սկսեցին զուարձանալ. նրա ձայնը լսելով՝ ուսանողներն աւելի մեծ էին երևակալել նրան և այդ պատճառով հիմա զուարձութիւնը կրկնակի էր: Նրանք իրենց մէջն առան տղային և երգելով հիւրանոց մտան: Ռիկօին նստեցրին սիրուն սփոռոցով ծածկուած սեղանի մօտ, իրենք էլ նստեցին նրա կողքին և ճաշի հրաւիրելով նրան՝ երեքն էլ սկսեցին մի մի կտոր բան դնել նրա առաջը, որովհետեւ ոչ ոք չէր ուզում միւսներից պակաս բաժին տալ. Ռիկօն իր ամբողջ կեանքի ընթացքում այդպիսի ճաշ չէր կերել:

«Ումից ես սովորել այդ սիրուն երգը, փոքրիկ ջուժակահար», հարցրեց երեք ուսանողներից մէկը:

«Մանիկից, նա ինքն է յօրինել», պատասխանեց Ռիկօն լրջօրէն:

Ուսանողները նայեցին միմեանց և նորից սկսեցին բարձրաձայն ծիծաղել:

«Նատ լաւ է արել Մանիկը», աղաղակեց մէկը, «Եկէք, իսկոյն նրա կենացը խմենք»:

Ռիկօն էլ իր բաժակը գիպցրեց նրանց բաժակներին և սրտանց խմեց Մանիկի կենացը:

Որոշուած ժամանակն անցաւ և երբ ուղևորները նորից կառք պէտք է նստէին, մի հաստ մարդ մօտեցաւ Ռիկօին. նա մի այնպիսի մեծ ու հաստ ձեռնափայտ ունէր բըռնած, որ կարելի էր կարծել՝ թէ մի փոքրիկ ծառ է արմատահան արել ու ձեռքին բռնել: Նա ոտից մինչև գլուխ հագած ունէր պինդ և մուգ գեղին կտորից կարած զգեստ:

«Որի այստեղ, փոքրիկ», ասաց նա, «Դուշատ լաւ երգեցիր. կառքի միջից լսեցի քո երգը և ես էլ քեզ պէս ոչխարների հետ գործ ունեմ. ես ոչխար վաճառող եմ և որովհետեւ գու նրանց մասին այդպէս լաւ ես երգում, ինձնից էլ պէտք է մի բան ստանաս»: Այդ ասելով նա մի սիրուն արծաթեալ գրամ դրեց Ռիկօի ձեռքը, որովհետեւ Ռիկօն գլխարկըն արդէն դատարկել և փողերը գրպանն էր ածել:

Այդ մարդը կառք մտնելով՝ կրկին իր տեղը նստեց. կառապանը Ռիկօին էլ փետրի պէս բարձրացնելով՝ իր նախկին տեղը նստեցրեց և կառքը տեղից շարժուելով՝ շարունակեց ճանապարհը:

Երբ կառքը կամաց էր գնում, ուսանողներն խսկոյն երաժշտութիւն էին ուզում լըսել և Ռիկօն նուագում էր ամեն տեսակ եղանակներ, որ լսել էր իր հօրից և լիշում էր այժմ. վերջը նա նուագեց. «Երգում եմ սրտանց...»

Այդ երգի եղանակի վրայ ուսանողներն անուշ քնեցին և ամեն բան խաղաղուեց. ջութակն էլ լոեց: Երեկոյեան մեղմ քամին սկըսեց փչել և երկնքի վրայ, մէկը միւսի լետեից երևացին աստղերը: Երբ Ռիկօն այս ու այն կողմը նալեց՝ ամեն տեղից աստղերն էին փայլում: Նա մտածում էր Մանիկի ու տատի մասին՝ թէ արդեօք այժմ նրանք ի՞նչ բանի են և յանկարծ միտքն եկաւ, որ երեկոյեան ժամի զանգակը խփելու ժամանակն է և նըրանք երկուսն էլ այժմ «Հայր մեր» ասելիս կլինեն: Ռիկօն ուզեց նոյնպէս աղօթել—կարծես թէ նրանց հետ լինէր—ձեռքերը կցեց և լուսազարդ ու աստղալից երկնքի տակ՝ երկիւլածութեամբ արտասանեց իր «Հայր մերը»:

ԳԼԽ. ԺԲ.

ՆԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ



իկօն էլ քնեց: Նա զարթեց միայն այն միջոցին, երբ կառապանը ցած բերեց նրան: Բոլորն էլ դուրս եկան կառքից. Երեք ուսանողները մօտեցան Ռիկօին, սեղմեցին նրա ձեռքը և բարի ճանապարհ ցանկանալով նրան՝ հեռացան. Նրանցից մէկն էլ աղաղակեց. «մեր կողմից նոյնպէս բարեկամաբար ողջունիր Մանիկին»:

Յետոյ նրանք անյալտացան փողոցներից մէկում և Ռիկօն հեռուից լսեց, որ նրանք

Նորից սկսեցին երգել. «Եւ գառնուկները և գառնուկները»:

Մութը գիշեր էր. Ռիկօն կանգնած էր և բոլորովին չգիտէր թէ ո՞րտեղ է գտնւում և ի՞նչ պէտք է անէ. Յետոյ յանկարծ միտն եկաւ, որ կառապանին շնորհակալութիւն անգամ չէ արել՝ իրեն այնքան տեղ կառքով բերելու համար. նա որոշեց իսկոյն գնալ նրա մօտ և շնորհակալութիւն յայտնել:

Բայց կառապանն արդէն անյայտացել էր ձիերի հետ և շուրջն էլ մութն էր. դիմացը միայն մի լապտեր էր կախուած և Ռիկօն էլ դէպի այն կողմը գնաց. Լապտերը կախուած էր այն ախոռի դրան վրայ, ուր կառապանը հէնց նոր էր ներս տարել ձիերը. Հէնց այնտեղ կանգնած էր հաստ ձեռնափայտ ունեցող մարդը և սպասում էր կառապանին. Ռիկօն էլ կանգնեց այնտեղ և նոյնպէս սպասում էր:

Ոչխար վաճառողն երևի մթնումը նրան իսկոյն չճանաչեց և յետոյ զարմացած յանկարծ ասաց. «Դու էլ գեռ այստեղ ես, փոքրիկ, ո՞րտեղ պէտք է գիշերես»:

«Չգիտեմ», պատասխանեց Ռիկօն:

«Տէ՛լ Աստուած, գիշերուալ ժամի 11-ին քեզ պէս մի փոքրիկ երեխայ և այն էլ օտար երկրնեմ...»:

Ոչխար վաճառողն իր խօսքերը լիսպէս արտաշնչեց, որովհետև ներքին յուզումից չէր կարողանում կանոնաւոր խօսել. բայց չվերջացրեց իր խօսքը, որովհետև կառապանը դուրս եկաւ ախոռից և Ռիկօն իսկոյն նրա կողմը վագելով՝ ասաց. «Յայտնում եմ շնորհակալութիւնս, որ հետներդ բերիք ինձ»:

«Նատ լաւ եղաւ, որ ինձ մօտ եկար, ձիերի յետեկց ընկնելով՝ քիչ մնաց որ մոռանայի, այն ինչ ուղում էի քեզ մի ծանօթ մարդու յանձնել: Հէնց ձեզ էի կամենում հարցնել, բարեկամ», շարունակեց նա դէպի ոչխար վաճառողը դառնալով, «արդեօք այս տըղալին հետներդ չէք վերցնի, կարծեմ դուք Բերգամասկի կողմերն էք ցած գնում. նա Դարդա լճի կողմերն է ուղում գնալ և նրանցից է, որոնք այստեղից այնտեղ են:... դուք հասկանում էք ինձ արդէն»:

Ոչխար վաճառողն իսկոյն գանազան պատմութիւններ երևակալից՝ կորած և գողացուած երեխաների մասին. նա լապտերի լուսով ցաւակցաբար նալեց Ռիկօնն և կիսաձայն ասաց կառապանին. «Նրա արտաքինիցն էլ այդպէս է երևում. կարծես թէ ուրիշի պատեանի մէջն է: Հետո կվերցնեմ նրան»:

Վաճառականը կառապանի հետ մի փոքր

խօսելով ոչխարի առևտրի մասին, հրաժեշտ
տուեց նրան և գլխով նշան արեց Ռիկօին,
որ հետեւ իրեն:

Մի փոքր ժամանակ ոտքով գնալուց յետոյ՝ այդ մարդը մտաւ մի հիւրատուն և անմիջապէս մի մեծ սենեակ ներս գնալով՝ Ռիկօի հետ միասին նստեց մի անկիւնում:

«Այժմ տեսնենք թէ ի՞նչքան փող ունես, որ նբա համեմատ էլ ծախսես», ասաց նա Ռիկօին: Ուր պէտք է գնաս:

«Դարդա լճի մօտ գտնուող Պեշիէրա», լսեց նա Ռիկօի անփոփոխ պատասխանը: Ռիկօն հանեց իր փողերը. դրանք բաւականինքանակութեամբ մանր դրամներ էին և մի մեծ արծաթեալ ստակ:

«Միայն այդ մէկ հատ արծաթեալ փողն ունեմ», հարցրեց վաճառականը»:

«Այն, միայն ձեր տուածը», պատասխանեց Ռիկօն:

Այդ մարդուն դուր եկաւ, որ միայն ինքըն էր արծաթի մեծ դրամ տուել և երեխան էլ լաւ զիտէր այդ. նա ցանկութիւն զգաց խկոյն մի բան էլ տալ նրան: Երբ կերակուրը նրանց առաջը դրին, վաճառականն իր մօտ կանչեց Ռիկօին և ասաց. կերակը և

այս գիշերուայ քնելու փողն ես կվճարեմ, իսկ քո ունեցածը պահիր վաղուան համար»:

Ռիկօն այնպէս յոգնել էր ամբողջ օրուայ

ձանապարհորդութիւնից, երգելուց և նուագելուց, որ հազիւ էր կարողանում ուտել. և երբ իր հովանաւորողի հետ ննջարան գնաց, խսկոյն անկողին մտաւ և խորը քնով քնեց:

Վաղ առաւոտեան Ռիկօն զգաց, որ մի ուժեղ ձեռք իրեն շարժելով՝ քնից զարթեցնում է: Նա շտապով վերկացաւ անկողնից. նրա ուղեկիցն արդէն հագնուած և պատրաստ կանգնած էր՝ հաստ ձեռնափայտը ձեռքին:

Երկար չտեսեց և Ռիկօն էլ արդէն ջութակը ձեռքին պատրաստ կանգնած էր. երկուսն էլ մտան հիւրասենեակը և վաճառականը սուրճ պահանջեց: Երբ սուրճը բերին, նա խրախուսում էր Ռիկօին, որ ախորժակով և որքան կարելի է կուշտ ուտէ, որովհետեւ այսօր երկարատև ճանապարհորդութիւն պէտք է անէ:

Սուրճը վերջացնելուց յետոյ ճանապարհորդները հիւրատնից դուրս եկան և մի անկիւնաւոր տեղից անցնելով՝ յանկարծ նրանց առաջը բացուեց մեծ ու փայլուն լինը. Ռի-

կօն զարմացած և յուզուած կանչեց. «ահա և
Գարդա լիճը»:

«Ո՛չ դեռ ևս, պատանեակ, սա Կօմէր
լիճն է», բացատրեց Ռիկօի Հովանաւորը: Այդ-
տեղ նրանք նաւ նստելով՝ մի քանի ժամ շա-
րունակ նաւեցին: Ռիկօն մէկ արևահար ափե-
րին էր նայում, մէկ կապոյտ ալիքներին և
կարծես թէ հայրենիքի օդն էր շնչում: —
Յանկարծ Ռիկօն գրավնից հանեց իր արծա-
թեայ դրամը և դրեց սեղանի վրայ:

«Այդ ի՞նչ է, այսօր շատ փող ունեմ»,
հարցրեց ոչխար վաճառողը, որ երկու ձեռ-
քերը ձեռնափայտի վրայ յենած՝ զարմացած
նայում էր նրան:

«Այսօր ես պէտք է վճարեմ», ասաց Ռի-
կօն, «երէկ դուք ասացիք»:

«Ասած խօսքի վրայ ուշադրութիւն ես
դարձնում, այդ շատ լաւ է, բայց փողն այդպէս
սեղանի վրայ չեն դնում. ալտեղ տուր տես-
նեմ»:

Փողը վերցնելով նա տեղից վերկացաւ և
գնաց վճարելու: Բայց երբ իր այդպիսի ար-
ծաթեայ դրամներով լիքը հաստ կաշեայ քսա-
կը հանեց, սիրտը շտուեց փոքրիկ տղայի ու-
նեցած միակ արծաթեայ չփողը վճարելու և
կըկին յետ բերելով՝ ասաց.

«Ահա, յետ ստացիր, վաղն տւելի պէտք
կգայ քեզ. այժմ դեռ ինձ հետ ես, իսկ վաղն
ով գիտէ թէ ինչ կլինի: Երբ տեղ հասնես և
ես էլ հետդ չլինեմ, գիշերելու տուն կու-
նենամ»:

«Ո՛չ, ո՞չ մի տուն չունեմ», պատասխա-
նեց Ռիկօն: Վաճառականը հազիւ կարողացաւ
իր գաղտնի զարմանքը ծածկել, որովհետև այդ
տղայի պատմութիւնը շատ խորհրդաւոր էր
թւում նրան: Բայց ոչինչ չարտայալտեց և
էլ հարցեր չառաջարկեց. նա մտածում էր թէ՝
միենոյն է, հարցումներով խնդիրը չի պար-
զուի: Նա յոյս ունէր, որ մի ուրիշ անգամ
բոլորը կտեղեկանայ Ռիկօն իրեն յանձնող
կառապանից՝ կարծելով թէ նա աւելի շատ
բան կգիտենայ այդ երեխայի մասին: Այդպէս
մտածելով նա ցաւակցում էր, որ երեխան շու-
տով պէտք է զրկուի իր հովանաւորութիւնից:

Երբ նաւը լճի ափը հասաւ, այդ մարդը
բռնեց Ռիկօնի ձեռքը և ասաց. «ձեռքս այս-
պէս բռնած պահի ու հետևիր ինձ, որ չը-
կորցնեմ քեզ. պէտք է շտապով գնանք, եթէ
ոչ նրանք մեզ չեն սպասի»:

Ռիկօն հազիւ էր կարողանում հետևել
այդ մարդու մեծ քայլերին. նա առանց աջ
ու ձախ նայելու գնում էր և յանկարծ կանգ-

առաւ մի շարք զարմանալի անիւներ ունեցող
կառքերի առաջ։ Նա բարձրացաւ մի փոքրիկ
սանդուղքի վըայով և հետեւով իր ուղեկցին՝
կառք մտաւ։ Ռիկօն իր ամբողջ կեանքում ա-
ռաջին անգամն էր երկաթուղի տեսնում։ Մի
ժամ երկաթուղով գնալուց յետոյ, վաճառա-
կանը տեղից վերկացաւ և ասաց. «այժմ ես
պէտք է գնամ. հասանք Բերգամօ. հանգիստ
տեղդ նստած մնայ. երբ տեղ հասնես, քեզ
դուրս կտանեն. ամեն բան կարգադրել եմ»։

«Այն ժամանակ ես Գարդա լճի մօտի
Պեշիերայում կլինեմ», հարցրեց Ռիկօն և գը-
րսկան պատասխան ստացաւ իր ուղեկցից։
Ռիկօն սրտանց շնորհակալութիւն յայտնեց ալդ
մարդուն, որովհետեւ հասկացաւ թէ որքան
բարութիւն արաւ նա իրեն և այդպիսով նը-
րանք բաժանուեցան միմեանցից և ամեն մէ-
կըն էլ ցաւում էր, որ հեռանում է միւսից։

Ռիկօն հանգիստ նստած էր իր անկիւ-
նում և ազատ ժամանակ ունէր շուարելու,
որովհետեւ էլ ոչ ոք չէր մտածում նրա մա-
սին. ալդպէս երեք ժամի չափ անշարժ նըս-
տած մնալուց յետոյ, գնացքը նորից կանգ ա-
ռաւ, ինչպէս որ մինչեւ ալդ ժամանակ ար-
դէն շատ անգամ կանգ էր առել։

Բայց այժմ Ռիկօն մօտեցաւ կառավար-
ներից մէկը, բռնեց նրա ձեռքը և շտապով
սանդուղքից ցած իջեցրեց. յետոյ մատով ցոյց
տալով մերձակայ բարձր տեղը, «Պեշիերա»
ասաց ու վայրկենաբար նորից կառք բարձ-
րանալով՝ անյալտացաւ։ Գնացքն առաջ սլացաւ։



ԳԼԽ. ԺԳ.

ՍԻՐՈՒՆ ԼՃԻ ՄՕՏ



ի քանի քայլ հեռացաւ
Ռիկօն այն շէնքից, ո-
րի առաջ կանգ էր ա-
ռել գնացքը և նալեց
էր շուրջը. այդ սպի-
տակ տունը, առաջն
եղած հրապարակը և
հեռուից երևող թելի նման ու-
ղիղ ճանապարհը — բոլորն օտարը
էին թւում նրան. նա երբէք չէր տեսել այդ
բաները և ինքն իրեն մտածում էր. «Այնտեղ
չեմ, ուր որ պէտք է լինէի»: Նա տխուր շա-
րունակեց իր ճանապարհը ծառերի միջով և
յանկարծ, երբ ճանապարհը թեքուեց, Ռիկօն
կանգ առաւ և էլ տեղից չշարժուեց. նա կար-

ծում էր թէ երազումն է: Նրա առաջը տա-
րածուած էր՝ պայծառ արևի լուսով փալփլող
և երկնքի նման կապոյտ լիճն իր ջինջ ու խա-
ղաղ ափերով, իսկ մի փոքր հեռու, միմեանց
դէմ բարձրանում էին լեռները. այդ բոլորի
մէջտեղն էր արևահար նաւահանգիստը, որի
զուարթատես տները պէծպծին էին տալիս
հեռուից: Սրանք ծանօթ էին Ռիկօն. նա
տեսել էր, կանգնել էր հէնց այնտեղ, ճանա-
չում էր այդ ծառերը. բայց ուր էր փոքրիկ
տունը. հէնց այդտեղ պէտք է լինէր, բոլո-
րովին մօտիկ, բայց չկար:

Ներքեւում երեսում էր հին կառուղին,
որ շատ լաւ յատնի էր Ռիկօն. այնտեղ կա-
նաչ տերևների միջից փալլում էին կարմիր
ու մեծ ծաղկիները. ալդտեղ պէտք է լինէր
նաև քարից շինած նեղ կամուրջը, որ ձգուած
էր լճի սկզբեի վրայ և որի վրայից ինքը շատ
անգամ էր անց ու դարձ արել. այդ էլ չէր
երեսում:

Սաստիկ և զօրեղ տենչանքից դրդուած՝
Ռիկօն յանկարծ վազեց գէպի կառուղին և բարձ-
րացաւ վերև. նա տեսաւ փոքրիկ կամուրջը —
նա գիտէր բոլորը — այդ տեղով նա շատ ան-
գամ էր անցել և մէկը միշտ բռնում էր նրա
ձեռքը — այդ նրա մալրն էր — : Ռիկօն աչքի

առաջ միանգամից այնպէս պարզ կերպով կենդանացաւ մօր դէմքը, որ շատ տարիներից ի վեր չէր պատահել. այդտեղ էր նա միշտ կանգնում իր կողքին և սիրալիր աչքերով նայում իրեն։ Իիկօն սաստիկ յուզուեց. իր կեանքում նա առաջին անգամ էր այդպիսի բուռն յուզման ենթարկում։

Փոքրիկ կամուրջի մօտ նա ընկաւ գետին և սկսեց լալ ու հեկեկալ բարձրաձայն. «Ա՛խ, մայրիկ, ուր ես, ուր է իմ հալենիքը, մայրիկ։»

Այդպէս ընկած էր նա գետնին երկար ժամանակ և արտասուռմ ու արտայայտում էր իր խորին վիշտը. նրա սիրտը կարծես թէ կտրտում էր և բոլոր ցաւերը, որոնց նա մինչև այժմ լուռ ու մունջ դիմացել էր՝ միանգամից նորոգուելով ընկճել էին նրան։

Երբ Իիկօն գետնից վեր կացաւ, արևն արդէն բաւականին թեքուել էր և լիճը ծածկուել սոկեգոյն վերջնալուսով։ Սարերն էլ սկսեցին մանուշակի գոյն ստանալ և լի ափերին ամեն տեղ վարդի բուրմունք էր տիրում։ Այդպէս էր Իիկօն երևակայում միշտ իր լիճը և երազում, բայց այժմ աչքով տեսածը շատ աւելի սիրուն էր։ Իիկօն այդտեղ նստած նայում էր լճին, բայց չէր յագենում. նա շա-

րունակ մտածում էր. «ախ, երանի՛ թէ այս բոլորը կարողանայի Մանիկին ցոյց տալ»։

Սընկը մայր մտաւ և լճի շուրջը մթութիւն տիրեց։ Իիկօն տեղից վեր կացաւ և քայլերն ուղղեց դէպի կառուղին, ուր կարմիր ծաղիկներ էր տեսել. կառուղուց մի նեղ ճանապարհ էր բաժանում։ Այդտեղ էին կարմիր ծաղիկների թփերը մէկը միւսի կողքին շարուած պարտիզի տպաւորութիւն էր անում այդ տեղը և իսկապէս այդ բոլորի շուրջն ընդարձակ ցանկապատ կար և պարտիզում խառն երևում էին ծաղիկներ, ծառեր և խաղողի վազեր։

Այդու վերջին ծայրին կանգնած էր մի սիրուն տուն՝ բաց գոներով. իսկ պարտիզում այս ու այն կողմն էր գնում մի պատանի. նա վազներից մեծ ու գեղին հատիկներով ողկոյներ էր կտրում և ուրախ սրառվ մի երգ սուլում։

Իիկօն նայեց այդ ծաղիկներին և մտածում էր. «Երանի՛ թէ Մանիկն այս բոլորը կարողանար տեսնել». նա երկար ժամանակ անշարժ կանգնած էր ցանկապատի մօտ։

Այդ միջոցին պատանին տեսաւ նրան ու կանչեց. «Նե՞րս արի, ջութակահար և եթէ կարող ես՝ մի երգ նուագիր»։

Պատանին իտալական լեզուով էր խօսում.
Ռիկոին տարօրինակ զգացմունք տիրեց. Նա
հասկանում էր լսածը, բայց չէր կարողանում
այդ լեզուով խօսել: Նա ներս մտաւ այգին.
պատանին ուզում էր Ռիկօի հետ խօսել, բայց
տեսնելով որ չի կարողանում պատասխանել,
մատով ցոյց տուեց բաց դուռը և հասկացրեց,
որ գնա այնտեղ ու նուագէ:

Ռիկօն մօտեցաւ և տեսաւ, որ անմիջա-
պէս դրան կից սենեակում դրուած է մի փոք-
րիկ անկողին. անկողնի մօտ նստած էր մի
կին և կարմիր թելերից մի բան էր շնում:
Ռիկօն կանգնեց շեմքի մէջ և սկսեց երգել
ու նուագել.

«Գառնուկներ, ցած եկէք»:

Երբ երգը վերջացրեց, փոքրիկ անկողնի
միջից մի գունատ դէմք բարձրացաւ և
կանչեց.

«Մի անգամ էլ նուագիր»:

Ռիկօն մի ուրիշ եղանակ նուագեց:

«Կրկին նուագիր», հնչեց նորից նոյն
ձայնը:

Ռիկօն հինգ-վեց անգամ միմեանց յետե-
ւից երգեց ու նուագեց, բայց անկողնից դար-
ձեալ լսում էր. «մէկ էլ նուագիր»:

Ռիկօն էլ ուրիշ բան չգիտէր, նա ցած

բերեց ջութակը և ուզում էր գնալ: Փոքրիկն
սկսեց աղաղակել, «մնա այստեղ, կրկին նուա-
գիր, մի անգամ էլ նուագիր»: Կինը տեղից
վեր կացաւ և մօտենալով Ռիկօնի՝ ձեռքը մի
բան դրեց. Ռիկօն չգիտէր թէ ինչը բան է այդ,
բայց իսկոյն լիշեց Մանիկի խօսքերը. «Եթէ
մի տան դրան առաջը նուագես, մարդիկ քեզ
մի բան կտան»: Տիկինը բարեկամաբար հարց-
րեց նրան՝ թէ ո՞րտեղից է գալիս և ուր է
գնում: Ռիկօն չէր կարող պատասխանել: Տի-
կինը նորից հարց տուեց. ծնողներիդ հետ ես.
Ռիկօն բացասական շարժումն արեց գլխով.
ուրեմն մենակ ես. Ռիկօն գլխով դրական պա-
տասխան տուեց. այժմ ուր պէտք է գնաս,
շուտով կմթնի. Ռիկօն անվստահ կերպով շար-
ժեց գլուխը: Տիկինը ցաւակցեց նրան և կա-
մենալով մի կերպ օգնած լինել այդ փոքրիկ
օտարականին, կանչեց պարտիզի պատանուն
և հրամայեց, որ երեխալի հետ միասին գնայ
«ոսկեալ արև» հիւրատունը. գուցէ այդ հիւ-
րանոցի տէրը հասկանալ փոքրիկ երաժշտի
լեզուն, նա էլ երկար ժամանակ օտար երկր-
ներումն է ապրել: Տիկինը պատուիրեց նոյն-
պէս, որ հիւրանոցի տէրը գիշերն իր մօտ
պահէ երեխալին, կերակրէ իր հաշուով, իսկ
առաւօտեան ուղիղ ճանապարհ ցոյց տայ, ո-

ըովհետև նա դեռ շատ փոքր է — «միայն մի քանի տարով մեծ է իմ զաւակից», ասաց տիկինը ցաւակցաբար — :

Անկողնում պառկած փոքրիկն սկսեց կըսկին աղաղակել. «Թող մի անգամ էլ նուագէ» և չլոեց, մինչև որ մալրն ասաց. «Նա վաղը կըկին կգայ. այժմ պէտք է գնայ քնելու, դու էլ պէտք է քնես»:

Պատանին Ռիկօին առաջնորդեց դէպի հիւրատուն. վերջինն արդէն գիտէր թէ ուր է գնում, որովհետև հասկացել էր տիկնոց խօսքերը:

Մինչև քաղաք հասնելը տասը ըոպէից աւելի տեսեց. պատանին մի նեղ փողոց հասնելով բացեց մի տան դուռ և ներս մտնելով՝ անմիջապէս գնաց մի մեծ հիւրասենեակ, որ լիքն էր ծխախոտի թանձր ծխով. սեղանների շուրջը նստած էին բաւականին թուով մարդիկ:

Պատանին իր յանձնարարութիւնը հազորդեց հիւրանոցի տիրոջը. «Լաւ, ասաց վերջինս. յետոյ կինն էլ մօտենալով նրան՝ երկուսով սկսեցին ոտից մինչև գլուխ զննել երեխային: Բայց մօտակայ սեղանների շուրջը նստող մարդիկը հէնց որ նկատեցին Ռիկօի ջութակը, շատերն իսկոյն աղաղակեցին. «Ե-

րաժշտութիւն կունենանք», մէկն էլ կանչեց. «իսկոյն մի ուրախ երգ նուագիր, փոքրիկ»: Եւ նրանք այնպէս խառն ի խուռն սկսեցին աղաղակել. որ հիւրանոցի տէրը հազիւ կարողացաւ հարցնել Ռիկօին՝ թէ ինչ լեզուով է խօսում և ո՞րտեղից է գալիս: Ռիկօն իր լեզուով պատասխանեց, որ Մալոյեա սարի կողմերիցն է գալիս և թէ ամեն բան հասկանում է, ինչ որ խօսում են, բայց ինքը չէ կարող այդպէս խօսել: Հիւրանոցի տէրը հասկացաւ նրա լեզուն և ասաց՝ թէ ինքն էլ է այնտեղ եղել և թէ յետոյ միասին երկար կխօսեն, բայց այժմ թող մի բան նուագէ, որովհետև հիւրերը ցանկանում են երաժշտութիւն լըսել:

Ռիկօն հնազանդուեց և սկսեց իր սովորական երգը նուագել ու երգել: Բայց հիւրերից ոչ մէկը մի խօսք անգամ չէր հասկանում նրա երգածից. երգի եղանակն էլ շատ հասարակ ու պարզ թուաց լսողներին: Միքանիսներն սկսեցին խօսել և աղմուկ բարձրացնել, միւսներն էլ ցանկանում էին ուրիշ լաւ երգ կամ պար լսել:

Ռիկօն իր երգն անընդհատ մինչև վերջը նուագեց, որովհետև սովորաբար նոր երգ սկըսելիս միշտ շարունակում էր մինչև վերջը:

Երբ այդ վերջացրեց, սկսեց մտածել. պարերգ
էքը կարող նուագել, որովհետև չգիտէր. տա-
տի սովորեցրած երգն աւելի ծանր եղանակ
էր և նրանից էլ ոչինչ չէին հասկանալ լսող-
ները. յանկարծ լիշեց և սկսեց.

Una sera
In Peschiera

Հազիւ թէ լսուեցան այդ երգի առաջին
եղանակաւոր հնչիւնները, յանկարծ խորին
լոււթիւն տիրեց և միանգամից այս ու այն
կողմից և բոլոր սեղաններից լսուեցան երգող
ձայներ և կազմուեց մի այնպիսի սիրուն եր-
գեցիկ խումբ, որի նմանը Ռիկօն երբէք չէր
տեսել և այդ պատճառով ինքն էլ չափից
դուրս ոգեսորուելով՝ սկսեց աւելի և աւելի
եռանգով և աշխոյժով նուագել. շրջապատող-
ներն էլ սկսեցին մեծ եռանգով երգել. երգի
մէկ տունը վերջացնելուց յետոյ Ռիկօն ձեռ-
քի հաստատուն շարժուածքով սկսում էր հե-
տեւալը. նա իր հօրից սովորած լինելով գի-
տէր թէ որտեղ է վերջանում այդ երգը:
Երբ երգը վերջացաւ, մի այնպիսի աղմուկ
բարձրացաւ, որի նմանը Ռիկօն երբէք չէր
լսել: Բոլորն աղաղակում էին խառն ի խուռն
և ուրախութիւնից ձեռքերը պինդ խփում
սեղանին. յետոյ նրանք իրենց բաժակներով

մօտեցան Ռիկօնն և սա պէտք է բոլորի բա-
ժակներից էլ խմէր. երկուսը սեղմեցին նրա
ձեռքը, մէկը խփեց նրա ուսին և բոլորը միա-
բերան նրա անունն էին տալիս. Ռիկօն տես-
նելով ու լսելով այդ բոլորը, երկիւղից սկը-
սեց սաստիկ գունատուել: Ռիկօն չգիտէր, որ
նուագել է նրանց սեպհական Պեշիրա երգը,
որ միայն իրենց է յալտնի և օտար մարդ չէր
կարող սովորել. իսկ ինքը նուագել էր այն-
պէս հաստատուն կերպով և աշխոյժով, որ
կարծես թէ Պեշիրացիներից մէկը լինէր.
զգայուն Պեշիրացիները չգիտէին թէ ինչ
կերպ ուրախանալին և գովիճին այդ հրաշալի
ջութակահարին և շարունակ նրա կենացն
էին խմում:

Միւս կողմից էլ տանտիկինը մի աման
վեքը վլաւ ու մի մեծ կտոր հաւի միս բե-
րեց, գլխով արեց Ռիկօնն և տեսնելով, որ
նա յուզմունքից բոլորովին գունատուել է,
միւս մարդկանցը խնդրեց, որ հանգիստ թող-
նեն երեխային: Յետոյ բաժինը դրեց անկիւ-
նում եղած փոքրիկ սեղանի վրայ, ինքն էլ
նստեց Ռիկօն կողքին և սիրտ էր տալիս նրան,
որ ախորժակով ուտէ:

Ռիկօնն շատ գուր եկաւ ընթրիքը, որով-

Հետև առաւտեան սուրճից յետոյ մի պատառ
անգամ չէր դրել բերանը:

Հէնց որ կերակուրը վերջացրեց, յոգնա-
ծութիւնից նրա աչքերը փակուեցին և նա-
սկսեց ննջել: Այդ միջոցին հիւրանոցի տէրը
մօտեցաւ, գովեց նրան՝ լաւ նուազելու հա-
մար և հարցրեց թէ ովքեր են նրա ծնողնե-
րը և այժմ ուր է գնում: Բիկօն հազիւ աչ-
քերը բանալով պատասխանեց, որ ինքն ոչ
ոք չունի և ոչ մի տեղ էլ չէ գնում:

Հիւրանոցի տէրը բարեկամաբար խրա-
խուսեց նրան՝ ասելով որ այժմ թող գնայ
հանգիստ քնէ, իսկ վաղը կարող է նորից այ-
ցելել իրեն այստեղ ուղարկող տիկին Մենօտ-
տիկին. նա շատ բարի տիկին է և կարող է
գուցէ իբրև փոքրիկ ծառայ ընդունել իրեն:
Այդ միջոցին տանտիկինը շարունակ քաշում
էր ամուսնու թևից՝ հասկացնելով թէ չպէտք
է ասէ այն, ինչ որ ասում է. բայց նա վեր-
ջացրեց իր խօսքը՝ չհասկանալով թէ ինչ է
ուզում կինը:

Սեղանների շուրջը նստած մարդիկն սկը-
սեցին նորից աղմկել. նրանք ցանկանում էին,
որ Բիկօն մի անգամ էլ նուագէ իրենց երգը:
Բայց տանտիկինն ասաց. «Ո՛չ, ո՛չ, կիրակի
օրը կնուագէ, նա այժմ յոգնածութիւնից հա-

զիւ է կարողանում ոտքի վրայ կանգնել: Այդ ասելով նա բռնեց Բիկօնի ձեռքը և տա-
րաւ նրան վերևի մեծ սենեակը, որի պատե-
րեց կախուած էր ձիերի սարք ու կարգը. մի
անկիւնում ցորեն էր դիզուած, իսկ միւ-
սում դրուած էր նրա անկողինը: Մի քանի
քոպէից յետոյ Բիկօն արգէն անկողնումն էր
և խորը քնով քնած:

Բաւականին ուշ, երբ հիւրանոցում խա-
ղաղութիւն ու լուսաթիւն տիրեց, տանտէրը
դեռ նստած էր այն սեղանի մօտ, ուր Բիկօն
էր նստած, իսկ տիկինը կանգնած էր նրա ա-
ռաջը—որովհետեւ կարգի էր բերում սե-
նեակը—. տիկինն աշխոյժով ասաց ամուս-
նուն. «Բիկօն չպէտք է կրկին ուղարկես տի-
կին Մենօտտիի մօտ. այդ տղան ինձ էլ պէտք
կգայ մանր մունը բաների համար. չտեսար
թէ ինչպէս է նուագում ջութակի վրայ: Լսողները կարծես թէ ոգեորութիւնից կա-
տաղեցան. տես, սա այնպիսի մի ջութակա-
հար գուրս կգայ, որ մեր երեք ջութակահար-
ներին կգերազանցէ. պարեր նուագելն էլ շուտ
կսովորի և այդպիսով առանց փող տալու նը-
ւագել կտաս նրան կիրակի օրերը. դեռ ուրիշ
տեղ էլ կարող ես ուղարկել նրան վարձով

նուազելու։ Ձեռքից չպէտք է թողնես նրան։
նա քաղաքավարի ձևեր ունի և դուր է գա-
լիս ինձ. պահենք նրան մեզ մօտ»։

«Ես էլ համաձայն եմ», ասաց Հիւրա-
նոցի տէրը և այն եզրակացութեան եկաւ,
որ իր ամուսինը ձեռնտու բան է մտածել։



ԳԼԽ. ԺԴ.

ՆՈՐ ԲԱՐԵԿԱԾՄՈՒԹԻՒՆ



աջորդ առաւտը տանտի-
կինը կանգնած էր գրան
շեմքում, դիտում էր ե-
ղանակը և տեղեկանում թէ
ինչ է պատահել այդ գիշեր։
Այդ միջոցին փողոցով գալիս
էր տեկին Մենօտիի պատանի
ծառան. տիկնոջ սիրուն և պտղա-
ռատ կալուածքում, դա միե-
նոյն ժամանակ թէ տէր էր և թէ ծառայ,
որովհետեւ լաւ հասկանում էր պարտիզի ու
դաշտալին աշխատանքը, ամեն բան ինքն էր

Հոգում, կառավարում և այդ պատճառով շաբունակ սուլում էր:

Երբ նա մօտեցաւ հիւրանոցի տանտիկնոջը, մի առ ժամանակ սուլելուց դադարեց և ասաց. եթէ երեկուայ փոքրիկ երաժիշտը դեռ հեռու չէ գնացել, թող գայ տիկին Մենօտիի մօտ, նրա փոքրիկն ուզում է մի անդամ էլ լսել Ռիկօի նուագը:

«Այս, այս, եթէ միայն տիկին Մենօտին շատ չէ շտապում», ասաց տանտիկինը՝ երկու ձեռքերը կողքերին դնելով և կամենալով հասկացնել, որ ինքը չէ շտապում: «Առ այժմ երաժիշտը պառկած է իր հանդիստ անկողնում և անուշ քնած: Տիկին Մենօտիին կարող էք ասել, որ ես նրան մի անդամ իր մօտ կուղարկեմ, որովհետև նա էլ ուրիշ տեղ չի գնայ. ես նրան վերցրի և մօտս պէտք է պահեմ. նա մի կորած որբ երեխայ է և ինքն էլ չգիտէ թէ ուր է գնում. այժմ լաւ կիսնամուի», ասաց տանտիկինն առանձին շեշտով:

Պատանին գնաց իր լանձնարարութիւնը կատարելու:

Տանտիկինը թուլ տուեց, որ Ռիկօն բոլորովին քնահան լինի, որովհետև բարեսիրտ կին էր. նա առաջ մտածում էր իր սեպհան օգտի և ապա ուրիշների մասին: Երբ

վերջապէս Ռիկօն զարթեց, յոգնածութիւնից բոլորովին կազդուրուել էր. նա թարմ ու զուարթ կերպարանքով սանդուղքից ցած իշաւ: Տանտիկինը կանչեց նրան խոհանոց և մի մեծ աման սուրճ ու մի սիրուն, դեղին կտոր խմորեղէն դնելով նրա առաջը, սեղանի վրայ, ասաց:

«Եթէ կամենաս, ամեն օր այսչափ կը-ստանաս, իսկ ճաշին և ընթրիքին աւելի լաւ բաներ, որովհետև հիւրերի համար պատրաստած կերակուրներից միշտ մնացորդ է լինում: Դրա փոխարէն դու իմ փոքրիկ պատուերները կկատարես՝ այս ու այն կողմը գնալով. իսկ կարեւոր եղած ժամանակն էլ կը-նուագես ջութակիդ վրայ. այդպիսով միշտ մեզ մօտ կմնաս, սեպհական սենեակ կունե-նաս և ստիպուած չեռ լինի թափառելու: Այժմ ասա, ուզում ես թէ ոչ»:

Ռիկօն գոհ սրտով պատասխանեց. «Այս, կամենում եմ», որովհետև տանտիկնոջ խօսած լեզուով այդչափ կարող էր պատասխանել:

Տանտիկինն իսկոյն ցոյց տուեց Ռիկօին ամբողջ տունը, մարաքը, ախոռը, բանջարանոցը, հաւաքունը և ամեն տեղ բացատրում էր շըր-ջակայքը՝ թէ ինչ ուղղութեամբ պէտք է գը-նալ մանրավաճառի, կօշկակարի և ուրիշ շատ

կարևոր մարդկանց մօտ: Ռիկօն մեծ ուշադ-
րութեամբ էր լսում այդ ամենը. փորձելու
համար, տանտիկինն իսկոյն նրան ուղարկեց
երեք թէ չորս տեղ՝ զանազան տեսակ բաներ
բերելու, ինչպէս օրինակ ձէթ, սապոն, թէլ
և մի կարկատնած կօշիկ, որովհետև նկատեց,
որ Ռիկօն կարողանում էր առանձին առանձին
բառերը լաւ ասել:

Ռիկօն ամեն բան էլ ճշտութեամբ կա-
տարեց. այդ շատ գուը եկաւ տանտիկնոջը և
երեկոյեան ասաց նրան. «այժմ կարող ես ջու-
թակդ վերցնել և տիկին Մենօտտի մօտ գը-
նալ. մինչև մութը կարող ես այնտեղ մնալ»:

Ռիկօն շատ ուրախացաւ, որովհետև պէտք
է անցնէր լճի մօտով և լետոյ պիտի տեսնէր
այն սիրուն ծաղիկները:

Հասնելով լճին, նա վագեց դէպի փոքրիկ
կամուրջը և մի փոքր նստեց, որովհետև այդ-
տեղից երեսում էր բնութեան բոլոր գեղեց-
կութիւնը. լճի ջուրը և սարերը ծածկուած
էին անօսր շոգիով. Ռիկօն համարեա՛ թէ չէր ու-
ղում տեղից շարժուել, բայց այնուամենայնիւ
վեր կացաւ, որովհետև գիտէր՝ թէ այսուհետև
քանի որ ինքը նրանց մօտ է ապրում, պէտք
քանի որ ինքը նրանց մօտ է ապրում, պէտք
տիկինը:

Երբ Ռիկօն պարտէզը մտաւ, փոքրիկ տը-
ղան իսկոյն լսեց—որովհետև նրա սենեակի
դուռը միշտ բաց էր—և կանչեց. «արի և էլլի
նուագիր»:

Տիկին Մենօտտին դուրս եկաւ, բարեկա-
մաբար ձեռք տուեց Ռիկօնին և ներս տարաւ
նրան: Սենեակին ընդարձակ էր և լայն դանե-
րից երեսում էին պարտէզն ու սիրուն ծաղիկ-
ները: Հիւանդ երեխայի փոքրիկ անկողինը
դրուած էր ուղիղ դրան դիմացը. սենեակում
կային սեղաններ, աթոռներ և գեղեցիկ ար-
կղներ, բայց ուրիշ անկողին չկար, որովհե-
տև գիշերներն այդ փոքրիկ անկողինն էլ կից
սենեակին էին տանում; ուր դրուած էր և մօր
անկողնակալը: Առաւօտները փոքրիկ մահճա-
կալը, մէջը պառկողի հետ միասին, գուը էին
բերում սիրուն և ուրախ սենեակը, որի ամ-
բողջ յատակն ամեն առաւօտ լուսաւորումէին
արևի փայլուն ճառագայթները և փոքրիկ տը-
ղալի սիրուն ուրախացնում: Անկողնի մօտ
դրուած էին երկու փոքրիկ թիկնացուպեր.
երեմն երեմն մալրն անկողնից հանում էր
երեխային և այդ թիկնացուպերով ման էր
ածում նրան սենեակում, որովհետև փոքրիկը
ոչ կարողանում էր ոտքի կանգնել և ոչ էլ
ման գալ. նրա ոտքերն անդամալոյծ էին:

Երբ Ռիկօն ոտքը դրեց դրան շեմքը,
փոքրիկ տղան բռնեց առաստաղից դէպ իր
անկողինը կախուած երկար պարանից և նըս-
տեց. նա այնքան ոյժ չունէր, որ ինքն իրեն
կարողանար նստել: Ռիկօն ներս մտաւ և լուռ
նայում էր տղային. սա շատ բարակ ձեռքեր
և փոքրիկ, վտիտ մատներ ունէր. երեսն ալն-
քան փնքը էր, որ Ռիկօն երբէք այդպիսի դէմք
չէր տեսել. նրա երկու մեծ մեծ աչքերը
գննողաբար նայում էին Ռիկօն, որովհետեւ
խեղճը նոր բան շատ քիչ էր տեսնում, իսկ
տեսնելու սաստիկ փափագ ունէր, այդ պատ-
ճառով էլ աչքի ընկնող նոր բաները սուր և
գննող աչքերով էր դիտում:

«Անունդ ի՞նչ է», հարցրեց փոքրիկը:

«Ռիկօ», եղաւ պատասխանը:

«Իսկ իմ անունն է Սիլվիօ: Քանի տա-
րեկան ես», հարցրեց նա կրկին:

«Շուտով տասն և մէկ տարիս կլրանայ»:

«Ես էլ շուտով տասն և մէկ տարեկան
կլինեմ», ասաց փոքրիկը:

«Ա՛խ, Սիլվիօ, ի՞նչ ես ասում», ընդհա-
տեց մայրը, «դեռ չորս տարեկան էլ չկաս, այդ-
պէս շուտ չե՞ն մեծանում»:

«Այժմ նուագիր», ասաց փոքրիկ Սիլվիօն:
Մայրը նստեց իր տեղը, անկողնի մօտ.

Ռիկօն էլ կանգնեց մի փոքր ներքեւ և սկսեց,
նուագել: Սիլվիօն լսելուց չէր կշանում.
Հենց որ Ռիկօն վերջացնում էր, լսում էր
նրա միատեսակ էլլի նուագիրը:

«Այդպիսով Ռիկօն համարեա թէ վեց ան-
գամ կրկնեց իր գիտցած բոլոր երգերը. մայրը
դուրս գնաց սենեակից և վերադարձաւ մի
ափսէ լիքը սոկեգոյն խաղող ձեռքին ու ա-
սաց. Ռիկօ, այժմ հանգստացիր, աթոռի վրայ
նսաիր անկողնի մօտ և Սիլվիօի հետ խա-
ղող կեր:

Յետոյ տիկինը մի փոքր ժամանակ գնաց
պարտէզ, իր գործին նայեց և շատ ուրախ
էր, որովհետեւ ուրիշ ժամանակ համարեա թէ
բոլորովին չէր կարողանում հեռանալ երե-
խայի անկողնի մօտից. Սիլվիօն չէր համբե-
րում և միշտ ողբալով ու աղաղակելով կան-
չում էր նրան. ալդպիսով իսկապէս մի մեծ
բարիք էր, որ Ռիկօի պատճառով նա կարող
էր մի փոքր ժամանակ դուրս գնալ:

Այդ միջոցին սենեակում մնացած երկու
փոքրիկները գոհ էին և հասկանում էին մի-
մեանց, որովհետեւ Սիլվիօի հարցերին Ռիկօն
կարողանում էր պատասխաններ տալ և երբ-
դժուարանում էր ճիշտ խօսքը գտնել՝ շար-
ժուածքով ու ձևերով էր հասկացնում նրան.

եր ասելիքը. այդ պատճառով և խօսակցութիւնը զուարձալի էր Սիլվիօի համար: Մայրն էլ այդ միջոցին կարողացաւ ուշադրութեամբ դիտել՝ ծաղիկների մարգերը, վազները, սիդուն թզենիները և ցանուած արտերը՝ առանց Սիլվիօի աղաղակը լուելու:

Բայց երբ նա նորից ներս մտաւ, սկսեց փոքր առ փոքր մթնել և Ռիկօն էլ տեղից վեր կացաւ որ գնալ, Սիլվիօն սկսեց սարսափելի աղմուկ բարձրացնել. նա երկու ձեռքով պինդ բռնել էր Ռիկօի փեշից և չէր ուզում քաց թողնել, մինչև որ չխոստանար վաղը և ամեն օր նորից գալ: Բայց տիկին Մենոտափին շատ խոհեմ կին էր, նա լաւ հասկացել էր հիւրանոցի տանտիկնոջ ծանուցումը և այժմ հանգստացնելով Սիլվիօն՝ խոստացաւ, որ առաջիկայում շուտով կերթայ հիւրանոց և տանտիկնոջ հետ կխօսի այդ մասին, որով Ռիկօն չէ կարող իր կողմից խօսք տալ, այլ պէտք է կատարէ նրա ասածը»:

Վերջապէս Սիլվիօն թողեց Ռիկօի փեշը և ձեռք տուեց նրան. Ռիկօն էլ ակամացաւ ուրս եկաւ փոքրիկի սենեակից: Նա աւելի սիրով այդտեղ կմնար, որովհետև ամեն բան հանգիստ ու խաղաղ էր երեսում այդ տան շուրջիստ ու խաղաղ էր երեսում այդ տան շուրջ-

ը և Սիլվիօն ու իր մայրն էլ բարեկամաբար էին վարւում նրա հետ:

Մի քանի օր անցնելուց յետոյ՝ շքեղ հագնուած տիկին Մենոտափին մտաւ «ոսկեայ արև» հիւրանոցը. տանտիկինը գիմաւորեց նրան և տարաւ վերևի դահլիճը: Տիկինը քաղաքավարութեամբ հարցրեց՝ թէ արդեօք թոյլ չի տալ, որ Ռիկօն շաբաթը մի քանի երեկոյ իր մօտ գնալ՝ իր հիւրանդ զաւակին զբաղեցնելու համար: Տիկին Մենոտափին խոստացաւ գրա փոխարէն կատարել տանտիկնոջ որ և է ցանկութիւնը:

Տանտիկինը սրտանց ուրախացաւ, որ այսպիսի մի բարեկիրթ տիկին գալիս է իրենից բան խնդրելու և իսկոյն համաձայնեց, որ Ռիկօն ազատ երեկոները գնայ տիկին Մենոտափի մօտ. իսկ տիկինը գրա փոխարէն յանձն առաւ Ռիկօի զգեստի ծախքերը. վերջին հանգամանքն աւելի ուրախացրեց տանտիկնոջը, որովհետև այդպիսով նա էլ ոչ մի կոպէկ ծախս չպէտք է անէր Ռիկօի համար, իսկ իր ստացածը կլինի զուտ արդիւնք: Երկու տիկիններն էլ գոհ սրտով հրաժեշտ տուին միմեանց:

Կարճ ժամանակամիջոցում Ռիկօն այնպէս լաւ սովորեց իտալերէն, որ կարծես թէ սկըզ-

բեց ի վեր այդ լեզուով էր խօսել։ Եւ իսկա-
պէս նա իր մանկական հասակում այդ լեզուով
էր թոթովել։ նա մէկ մէկ սկսեց լիշել իր
սովորած բոլոր բառերը և վերջն սկսեց խօ-
սել իսկական խտալացու նման։ այս հանգա-
մանքը շատերի զարմանքն էր յարուցանում։
Տանտիկինն իր սպասածից աւելի էր օգտում։
Ռիկօնց իր գործը միշտ կատարում էր
կանոնաւոր կերպով։ շատ անգամ ինչ որ տան-
տիկինը, իր անհամբերութեան պատճառով,
չէր կարողանում անել, Ռիկօն էր կատարում։
Եթէ կարեոր էր լինում մի որևէ տօնի կամ
հարսանիքի պատրաստութիւններ տեսնել, Ռի-
կօն էր գլխաւոր դերը կատարում, որովհետեւ
նա գիտէր ամեն բան սիրուն կերպով սարքել։
Իսկ եթէ մի որևէ է պատուէրով Ռիկօնն ուրիշ
տեղ էին ուղարկում, նա այնպէս շուտ էր
վերադառնում, որ տանտիկնոջ կարծիքով
դեռ հազիւ հասած պիտի լինէր այնտեղ։ նա
չէր սիրում ձանապարհին սրա կամ նրա հետ
զբոյցներ անելով զբաղուել։ Եթէ մէկը կա-
մենում էր նրան հարց ու փորձ անել, նա տեղն
ու տեղը շուռ էր գալիս և հեռանում։ այդ
բանը տեսնելով՝ տանտիկինը շատ ուրախացաւ
և սկսեց այնպիսի յարգանքով վերաբերուել
դէպի Ռիկօն, որ էլ ոչինչ չհարցըց նրան և

այդպիսով իսկապէս ոչ ոք չգիտէր՝ թէ ինչ-
պէս է նա Պեշիերա եկել։ Ռիկօն մասին ընդ-
հանրասլէս տարածուել էր այն զրոյցը, որ նա
անտէր որբ լինելով՝ շատ հոգս ու չարչարանք
է կրել լեռնաբնակ գիւղացիներից, այդ պատ-
ճառով փախել է այնտեղից, երկար ճանա-
պարհորդութեան ժամանակ շատ վտանգների
է ենթարկուել և վերջապէս հասել Պեշիերա,
ուր մարդիկ աւելի բարեսիրտ լինելով՝ վերց-
ըլ են նրան խնամելու։ Եւ երբ տանտիկինը
պատժմում էր այդ զրոյցը, միշտ աւելացնում
էր. Ռիկօն արժանի է, որ նրա վերջն այդպէս
բարի է եղել և իր կտուրի տակ է ապաս-
տան գտել։

Առաջին կիրակնօրեայ պարին այնչափ բազ-
մութիւն հաւաքուեց «ոսկեալ արև» հիւրա-
նոցում, որ չգիտէին թէ որտեղ տեղաւորեն
բոլորին. ամենքն էլ ուզում էին փոքրիկ օ-
տարական երաժշտին տեսնել և լսել նրա
նուագը. իսկ ովքեր առաջին երեկոյեան լսել
էին նրան, ամենից առաջ եկան և ցանկանում
էին «Una sera in Peschiera» երգը լսել։

Տանտիկինն այս ու այն կողմն էր վա-
զում եռանդով ու տաքացած. նա այնպէս փայ-
լում էր, որ կարծես թէ հէնց ինքն էր «ոս-
կեալ արև» դարձել. ամուսնուն պատահելու

ժամանակ՝ նա լաղթանակով ասում էր. «Հա-
սացի՞ քեզ»:

Ռիկօն առաջ ականջ դրեց միւս երեք ջու-
թակահարների պարի նուագին և այնպէս շու-
տով իւրացրեց նրանց ածելու եղանակը, որ իս-
կոյն սկսեց նրանց հետ նուագել և շուտով ամ-
բողջովին սովորեց: Կէս գիշերին, երբ արդէն
դադարեցին պարելուց, Ռիկօն գիտէր բոլոր
պարի եղանակները, որովհետև դրանցից ամեն
մէկը շատ անգամ կրկնուեց:

Վերջը Ռիկօն մասնակցութեամբ երգուեց
նաև Պեշիերայի երգը. թէև պանդոկումն
արդէն ամբողջ գիշերն աղմուկ էր, սակայն
ալժմ այնպիսի մի ոգեսորութիւն տիրեց, որ
Ռիկօն ամեն ըոպէ սպասում էր, թէ ահա
նրանք տեղներից վեր թռչելով կսկսեն իրար
գլուխ ջարդել: Բայց այդ ամենը բարեկամու-
թեան և ուրախութեան նշաններ էին: Յետոյ
հիւրերն սկսեցին ականջ խլացնող ձախներով
գովել Ռիկօն, բայց սա մտածում էր միայն՝
թէ երբ պէտք է վերջանալ այս ամենը. ո-
չինչ այնքան անտանելի չէր Ռիկօն համար,
որքան մեծ աղմուկը:

Երբ հիւրերը ցրուեցին, տանտիկինն ա-
սաց ամուսնուն. «տեսամը, լաջորդ կիրակի օրը
ջութակահարներից երկուսն էլքաւական կլինեն»

Ամուսինն էլ գոհ սրտով պատասխանեց.
«այդ տղային պէտք է մի բան տալ»:

Երկու օրից յետոյ Դէզէնցանօ գիւղում
պար կար. Ռիկօն էլ միւս ջութակահարների
հետ միսակին ուղարկեցին այնտեղ. այժմ նա
տյնքան նուագել գիտէր, որ կարելի էր նրան
վարձով պարերեկոյթի ուղարկել: Այնտեղ էլ
նոյն աղմուկն ու տեսարանն էր. թէև Պե-
շիերա երգը չերգուեց, բայց ուրիշ բաների
մասին էլ այնպիսի մեծ աղաղակով էին խօ-
սում, որ Ռիկօն սկզբից մինչև վերջն այն էր
մտածում միայն՝ «թէ երբ պէտք է վերջանալ»:

Նա տուն վերադարձաւ գրպանը մանր
փողով լի և առանց համարելու բոլորն ածեց
սեղանի վրայ, տանտիկնոջ առաջը, որովհետև
նրան էր պատկանում այդ փողը. տանտիկինը
գովեց նրան և մի մեծ կտոր խնձորից պատ-
րաստուած խմորեղէն դրեց նրա առաջը: Հե-
տևեալ կիրակի օրը կրկին պար կար Ռիւա գիւ-
ղում. այս անգամ Ռիկօն ուրախացաւ, որով-
հետև Ռիւան գտնուում էր լճից վերև և այն
արեահար ծովախորշն էր, որի շուրջը գտնուած
փալիլուն, սպիտակ ու զուարթ տներն երեսում
էին Պեշիերայից:

Ճաշից յետոյ երեք երաժիշտներն էլ միա-
սին, մի փոքրիկ նաւակի մէջ նստած՝ նաւե-

ցին սիրում լճի վրայ, բաց երկնքի տակ և
Ռիկօն մտածում էր. «Երանի թէ Մանիկի
հետ միասին կարողանալի այսպէս նաւել. նա
որքան պէտք է զարմանար այս լճի վրայ, որի
գոյութեանն անգամ չէր ուզում հաւատալ»:

Պարի գահին նոյն սովորական աղ-
մուկն սկսուեց և Ռիկօն ուզում էր շուտով
կը ին դուրս գալ այդտեղից, որովհետեւ խա-
ղաղ վերջալուսի ժամանակ ներքեւից դէպի
վերև՝ Ռիւա նայելն աւելի գեղեցիկ էր, քան
թէ այդ ժխորի մէջ նստելը:

Երբ պարի օրերը չէին լինում, Ռիկօն կա-
րող էր ամեն երեկոյ գնալ փոքրիկ Սիլվիօր
մօտ և երկար ժամանակ տինտեղ մնալ, որով-
հետեւ տանտիկինն ուզում էր տիկին Մենօտ-
տիին դուր գալ: Ռիկօն էլ սիրով և ուրախու-
թեամբ էր գնում այնտեղ: Լճի մօտովն անց-
նելիս՝ նա քալերն ուղղում էր դէպի նեղ,
քարեալ կամուրջը և մի փոքր ժամանակ նըս-
տում էր գետնին. այս միակ տեղն էր, ուր
նա հայրենիքումն էր զգում իրեն: Այդտեղ նա
ամենից պարզ կերպով կարողանում էր երեսակա-
յել այն ամենը, ինչպէս որ էր իր հայրենի տանը,
որովհետեւ իր առաջը տարածուած տեսարանն
այն ժամանակ էլ այդպէս էր երեսում և այդ-
տեղ նա ամենից որոշ կերպով կարողանում

էր լիշել իր մօր պատկերը: Այնտեղ էր նրա
մայրիկը ծովի ափին սպիտակեղէն լուանում,
ժամանակ առ ժամանակ իրեն նայում ու
քաղցր խօսքեր ասում. իսկ ինքը նստած էր
լինում հէնց ալժմեան տեղը: Այդ բոլորը նա
շատ լաւ լիշում էր և այդ պատճառով մեծ
դժուարութեամբ էր այդ տեղից հեռանում,
բայց գիտէր, որ Սիլվիօն անհամբերութեամբ
սպասում էր իրեն: Յետոյ, երբ Ռիկօն անց-
նում էր պարտիզի միջով, նորից լաւ էր ըզ-
գում իրեն և սիրով մտնում այդ մաքուր ու
խաղաղ տունը: Տիկին Մենօտտին այնպիսի
սիրալիր ընդունելութիւն էր ցոյց տալիս նը-
րան, որ Ռիկօն ակներև տեսնում էր նրա
վերին աստիճանի բարեսրտութիւնը: Տիկինը
ցաւակցում էր անտէր որբին. — նա այդպէս
էր կոչում Ռիկօն, որովհետեւ լսել էր նրա
մասին տարածուած զրոյցը, բայց երբէք չէր
հարցնում նրան՝ թէ ինչպէս է իր օրերն անց-
ըել սարերում, որովհետեւ կարծում էր, թէ
այդպիսով միայն տիսուր լիշողութիւններ կարժ-
նացնէ նրա սրտում: — նա տեսնում էր նոյն-
պէս, որ Ռիկօն այնպէս չէ խնամւում, ինչ-
պէս որ պէտք էր հոգալ նրա նման փոքրիկ
և լուռ ու մունջ տղայի համար, բայց ոչինչ
չէր կարող անել, բացի ըստ կարելոյն երկար

ժամանակ նրան իրեն մօտ պահելուց նա երբ բեմն ձեռքը դնում էր նրա գլխին և ցաւակցաբար ասում. «խեղակ որբիկ»:

Փոքրիկ Սիլվիօի համար Ռիկօն օրէցօր աւելի անհրաժեշտ էր դառնում. արդէն առաւտուանից նա սկսում էր ողբալ և Ռիկօի անունը տալ. իսկ երբ ցաւերն սկսում էին, աւելի բարձր էր աղաղակում և էլ չէր հանգստանում, եթէ Ռիկօն չէր կարողանում գալ: Երբ Ռիկօն սովորեց սահուն կերպով իտալերէն խօսել, զանազան զրոյցներ էր պատմում նրան և Սիլվիօն էլ մեծ հաճութեամբ լսում էր:

Ռիկօն պատմում էր Մանիկի մասին և որովհետև այդ բանն իրեն էլ շատ դուր էր գալիս և իր սրտովն էր, այնպիսի աշխուժով ու եռանդով էր խօսում, որ չէր կարելի ճանաչել սակաւախօս Ռիկօին: Նա հարիւրաւոր դէպքեր էր պատմում Մանիկի կեանքից. մի անգամ էլ պատմեց թէ ինչպէս Մանիկն անմիջապէս բռնեց Սամիկոտքից, երբ նա ջրանցքի մէջն էր ընկնում: Մանիկն իր ամբողջ ուժով քաշում էր նրա ոտքից և դէպի վերև աղաղակում, այն ինչ Սամիկն դէպի ցած էր բղաւում, մինչև որ հայրը շատ դանդաղ ու հանգիստ կերպով մօտեցաւ, կարծելով թէ

երեխաները խաղում են: — Մի ուրիշ անգամ էլ պատմեց թէ ինչպէս Մանիկը Պետերիի համար թղթից զանազան ձևեր էր դուրս կտրում, Ուրշլիի համար ամեն տեսակ կտորներից կարասիք զինում՝ թէ փայտից, թէ մամուռից և թէ ծղնոտից: Եւ թէ ինչպէս բոլոր երեխաներն էլ հիւանդ ժամանակը «Մանիկ» էին կանչում, որովհետև երբ նա զբաղեցնում էր նրանց, հիւանդութիւնը մոռանում էին: Վերջը պատմեց թէ ինչպէս ինքը Մանիկի հետ զբունելու էր դուրս գալիս և թէ ինչ սիրուն է նա. այդ պատմելու ժամանակ Ռիկօի աչքերն ալնպէս փայլում էին և նա այնպէս ոգեսորւում ու զարմանալի կենդանութիւն էր ստանում, որ փոքրիկ Սիլվիօն էլ կրակ էր կտրում և շաբունակ ուզում էր նրա մասին լսել: Երբ Ռիկօն վերջացնելով ասելիքը՝ լուռմ էր, նա իսկոյն աղաղակում էր. «գարձեալ պատմիր Մանիկի մասին»: Բայց մի երեկոյ Սիլվիօն վերին աստիճանի գրգըռուեց, երբ Ռիկօն գնալու ժամանակ ասաց թէ վաղը և կիրակի օրը չի կարող գալ:

Սիլվիօն այնպիսի աղաղակով կանչեց մօըը, որ կարծես թէ ամբողջ տունը հրդեհուել էր և նա էլ կրակի բոցերի մէջ ընկել. երբ մայրը վերին աստիճանի վախեցած՝ պարտի-

զից վազելով ներս ընկաւ, Սիլվիօն շարունակ աղաղակում էր. «Ռիկօն էլ չպէտք է հիւրանոց գնայ, նա պէտք է ինձ մօտ մնայ. միշտ այստեղ պէտք է մնայ: Դու պէտք է արտեղ մնաս, Ռիկօ, պէտք է մնաս»:

Ռիկօն պատասխանեց. «Ես կցանկանայի մնալ, բայց պէտք է գնամ»:

Տիկին Մենօտտին մեծ տագնապի մէջ էր. նա գիտէր թէ որքան թանկ արժէ Ռիկօն հիւրանոցի տէրերի համար և ինքը ոչ մի պայմանով չէ կարող մշտապէս իր մօտ պահել նրան, որովհետև չէին թոյլ տայ: Նա սկսեց հանգստացնել Սիլվիօն որչափ կարող էր և Ռիկօն իր մօտ կանչելով խորին ցաւակցութեամբ ասաց. «Ա՛խ, խեղճ որբիկ»:

Սիլվիօն բարկացած աղաղակեց այնտեղից. «Ենչ է նշանակում որբիկ. ես էլ եմ ուզում որբիկ լինել»:

Տիկին Մենօտտին սաստիկ լուզուեց և աղաղակեց, ախ, Սիլվիօ, մեղանչում ես, որքն այն խեղճ երեխան է, որ ոչ մայր ունի և ոչ հայր. նա աշխարհիս երեսին ոչ մի տեղ տուն ու տեղ չունի»:

Ռիկօն իր հետզհետէ մթագնող աչքերը սևեռել էր տիկնոջ վրայ, սակայն տիկինը չէր նկատում այդ: Նա լուզուած սրտով Սիլվիօն

բացատրութիւն տալու միջոցին բոլորովին մոռացել էր Ռիկօն: Ռիկօն կամաց գուրս եկաւ և գնաց: Տիկին Մենօտտին կարծելով թէ՝ Ռիկօն ալդպէս կամաց գուրս եկաւ, որ երեխան նորից չաղաղակէ, հաւանեց նրա արարքը և ձայն չհանեց. նա նստեց երեխայի անկողնի մօտ և ասաց. «Լսիր, Սիլվիօ, բացատրեմ քեզ, որ միւս անգամ այսպիսի աղմուկ չբարձրացնես: Երեխաներին չի կարելի միմեանցից խլել, որովհետև եթէ ես պանդոկի տիրուհուց խլեմ Ռիկօն, նա ել կարող է գալ և իմ Սիլվիօն խլել. այն ժամանակ գուէլ չէիր կարող տեսնել մեր սիրուն պարտէզն ու ծաղիկները և պէտք է մենակ քնէիր այն ննջարանում, ուր ձիու սարք ու կարգն է կախուած և ուր Ռիկօն սիրով չէ քնում. չէ որ նա մի քանի անգամ պատմել է քեզ այդ մասին. այդ դէպքում ի՞նչ կանէիր»:

«Նորից տուն կերպագառնայի», ասաց վճռական կերպով փոքրիկը: Յետոյ լոեց և գլուխը դրեց բարձի վրայ:

Ռիկօն պարտիզի միջով անցնելով՝ փողոց մտաւ և այնտեղից ուզուեց դէպի լիճը: Այդտեղ նստեց իր սովորական տեղը, գլուխն երկու ձեռքերի մէջ բռնեց և անմիտիթար կերպով ասաց. «Այժմ գիտեմ, մայրիկս, ամքոջ


աշխարհում ոչ մի տեղ տուն չունեմ, ոչ մի
տեղ»:

Եւ այդպէս տխուր նստած էր, մինչև որ
գիշերը վրայ հասաւ. նա ուրախութեամբ
տեղից չէր շարժուի, բայց ստիպուած էր վե-
րադառնալ իր սենեակը:



ԳԼԽ. ԺԵ.

ՍԻԼԻՈՒԹ ՄՐՏԱԳԻՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ



Պոքրիկ՝ Սիլվիօի սրտի
լուզմունքը շարու-
նակւում էր դեռ և
երբ իմացաւ, որ եր-
կու օր միմեանց վը-
րայ Ռիկօն ոչ մի ըռ-
պէ իր մօտ չէ գա-
լու, հէնց առաւօ-

տեան վաղ սկսեց զայրացած աղաղակել. «Ռի-
կօն չէ գալիս, Ռիկօն չէ գալիս» և այդպէս
շարունակեց մինչև երեկոյ՝ միայն փոքրիկ
ընդմիջումներով. Հետեւեալ օրն էլ նոյնը
կրկնեց: Բայց երբորդ օրն այդ գործողութիւ-
նը նրան այնպէս ուժից դցել էր, որ նա նը-

մանւում էր այն չոր խոտի խրձին, որ կրակի մի փոքրիկ կայծով կարող է խսկոյն բորբոքուել:

Իրկօն եկաւ երեկոյեան՝ բոլորովին զըգուած պարերի աղմուկից: Այն օրից, երբ իմացաւոր ինքը հայրենազուրկ է, Մանիկի մասին ունեցած մտքերն աւելի ոյժ և զօրութիւն ստացան և ինքն իրեն ասում էր. «Ամբողջ աշխարհում միմիայն Մանիկին եմ պատկանում. նա է միայն մտածում ու հոգում իմ մասին»: Եւ նա Մանիկին տեսնելու սաստիկ մեծ կարօտ զգաց: Նա հէնց Սիլվիօի անկողնի մօտ նստեց թէ չէ, իսկոյն ասաց. «Տես, Սիլվիօ, միմիայն Մանիկի մօտ է լաւ, ուրիշ էլ ոչ մի տեղ»: Հազիւ նա արտասանել էր այդ խօսքերը, յանկարծ փոքրիկ երեխան տեղից վեր թռաւ և իր բոլոր ուժով աղաղակեց. «Մայրիկ, Մանիկին եմ ուզում, Մանիկը պէտք է գալ, միմիայն Մանիկի մօտ կարելի է լաւ լինել, ուրիշ ոչ մի տեղ».

Մայրը մօտեցաւ նրանց և որովհետեւ յաճախ մեծ բաւականութեամբ լսել էր Ռիկօի պատմութիւնները՝ Մանիկի ու նրա եղբայր ու քոյրերի մասին, գիտէր արդէն թէ խօսքըն ում մասին է և ասաց. «Այս, այս, ես

էլ շատ կուզենալի, որ ինձ ու քեզ համար մի Մանիկ ունենալի»:

Բայց այս անորոշ խօսքերը Սիլվիօին չը հանգստացրին. նա կրակ էր կտրել ու աղաղակում էր. «Հէնց այժմ կարող ես ունենալ. Ռիկօն գիտէ թէ որտեղ է նա և պէտք է բերէ նրան. ես ուզում եմ, որ ամեն օր և միշտ Մանիկն ինձ մօտ լինի. վաղը պէտք է բերէ նրան Ռիկօն, նա գիտէ նրա տեղը»:

Մայրը տեսնելով որ փոքրիկը կատակ չէ անում և պնդում է իր ասածի վրայ, աշխատեց նրա միտքը փոխել և ուրիշ բաների մասին խօսել, որովհետեւ շատ անգամ էր լսել ուրիշներից՝ թէ ինչ անասելի վտանգների է հանդիպել Ռիկօն իր ճանապարհորդութեան ժամանակ և թէ ինչ մեծ հրաշք է եղել, որ նա կարողացել է կենդանի հասնել մինչև Պեշիերա և թէ ինչ սարսափելի վայրենի ժողովուրդ է ապրում այնտեղ, լեռներում: Այդպիսով նա գիտէր, որ ոչ մի մարդ այնտեղից մի աղջիկ չէր կարող բերել, ուր մնաց թէ Ռիկօի պէս մի քնքուշ տղայ. չէ որ նա կարող է թշուառ կերպով վերջ տալ իր կեանքին, եթէ ալդպիսի մի բան ձեռնարկէ և ինքը պէտք է պատասխանատու լինի. իսկ այդ-

պիսի պատասխանառութիւն ինքը չէր կարող յանձն առնել:

Նա նկարագրեց Սիլվիօին այդ բանի անկարելիութիւնը և պատմեց շատ սարսափելի դէպքերի ու չար մարդկանց մասին, որոնք կարող էին պատահել Ռիկօին և սպանել նրան: Սակայն այս անգամ այդ բոլորը չօգնեց: Փոքրիկ Սիլվիօն իր կեանքում ոչ մի բան դեռ երբէք այդպէս հաստատ կերպով չէր պահանջել, որովհետեւ մայրը սարսափելի բաներ պատմելուց յետոյ՝ հէնց որ լուսում էր, Սիլվիօն կրկնում էր. «Ռիկօն պէտք է բերէ նրան, նա գիտէ նրա տեղը»:

Վերջապէս մայրն ասաց. «Եթէ գիտենայ էլ, կարծում ես որ Ռիկօն իր գլուխը վտանգի մէջ կձգէ և կերթայ՝ քանի որ այստեղ կարող է մնալ և չար մարդկանց մօտ գնալու կարիք չունի»:

Սիլվիօն նայեց Ռիկօի երեսին ու ասաց. «Ռիկօ, կերթաս Մանիկին բերելու, թէ ո՞չ»: «Այն, կերթամ», պատասխանեց Ռիկօն հաստատ կերպով:

«Ա. իս, ողորմած սրբեր, ինչ պէտք է լինի իմ ճարը, ալժմ Ռիկօն էլ է լիմարանում», վախեցած աղաղակեց մայրը: «Էլ չգիտեմ թէ ինչ անեմ. Ռիկօ, ջութակդ վերցրու և մի բան

ածա ու երգիր, ես պէտք է պարտէզ գնամ, ասաց տիկին Մենօտափին ու շտապով դուրս փազեց դէպի թղենիները՝ կարծելով թէ Սիլվիօն աւելի շուտ կմոռանայ իր ցնորքը՝ եթէ մօրը չկարողանալ տեսնել ու ստիպել:

Սակայն ներսը մնացող երկու լաւ բարեկամներն ոչ երգում էին, ոչ էլ նուագում. երկուսն էլ տաքացած՝ երևակալական պատկերներ էին ստեղծում՝ թէ ինչպէս պէտք է բերել Մանիկին և թէ նրա գալուց յետոյ ինչ կլինի: Բայց արդէն մթնել էր և Ռիկօն բոլորին մոռացել, որ տուն գնալու ժամանակն է. տիկին Մենօտափին էլ գիտմամբ ներս չէր գալիս՝ յոյս ունենալով, որ Սիլվիօն շուտ կքնէ: Վերջապէս երբ նա ներս մտաւ, Ռիկօն խոկոյն գնաց. սակայն Սիլվիօն գեռ չէր քընել: Նա չէր ուզում աչքերը փակել՝ մինչև որ մայրը խօսք չտար թէ Ռիկօն կերթայ Մանիկին բերելու. թէև մայրը չէր կարող հաստատ խօսք տալ, բայց Սիլվիօին հանգստացնելու համար ասաց. «Լաւ, գո՞հ եղիր, գիշերն անցնելուց յետոյ ամեն բան կկարգադրեմ»: Մայրն ենթադրում էր, որ երեխան գիշերը կմոռանալ իր ցանկութիւնը և մի նոր բան միտը կընկնի մինչև վաղը:

Սիլվիօն լռեց ու քնեց: Սակայն մայրը

սխալուել էր. միւս առաւօտը Սիլվիօն քնից զարթելուն պէս աղաղակեց իր անկողնից. «Ամեն բան կարգադրել ես, մայրիկ»:
Երբ տիկինը դրական պատասխան չտուեց, Սիլվիօն մի այնպիսի փոթորիկ բարձրացրեց, որ մայրը ցայխմ երբէք չէր տեսել. ամբողջ օրը շարունակուեց այդ տեսարանը մինչև երեկոյ և յաջորդ առաւօտը Սիլվիօն սկսեց կը. կին ճիշտ այնպէս, ինչպէս որ դադարել էր երեկոյեան:

Սիլվիօն ցայխմ երբէք միւսոյն ցանկութեան համար այսպիսի յարատե յամառութիւն չէր ցոյց տուել: Մայրը կարողանում էր տանել նրա աղաղակն ու աղմուկը, բայց երբ գալիս էին խիստ ցաւերի ժամերը, Սիլվիօն ողբալի կերպով մղկտում էր. «Միմիայն Մանիկի մօտ կարելի է լաւ լինել, ուրիշ ոչ մի տեղ»: Այդ միջոցին մօր սիրտը կտրտում էր և կարծես թէ մի յանդիմանութիւն էր իր համար՝ որ ինքը չէր ուզում անել այն, ինչ որ կարող էր որդուն լաւացնել. բայց ինչպէս կարող էր նոյն խոկ մտածել այդ մասին, քանի որ լսել էր Ռիկօի պատասխանը. երբ Սիլվիօն հարցըց նրան. «Գիտե՞ս Մանիկի մօտ գնալու ուղիղ ճանապարհը», նա պատասխա-

նեց. «Ո՛չ, ես ոչ մի ճանապարհ չգիտեմ, բայց կդանեմ»:

Տիկին Մենօտին լոյս ունէր, որ մի որ և է յաջող գիպուածով Սիլվիօի միտքը կփոխուի և մի նոր բան կպահանջէ, որովհետեւ ցայխմ միշտ այդպէս էր եղել. երբ առողջ ժամանակը երեխան մի բան էր ցանկանում, խիստ ցաւերի միջոցին մոռանում էր: Բայց այս անգամ այդպէս չէր և այդ էլ իր հիմնաւոր պատճառն ունէր: Մանիկի մասին Ռիկօի ասածներն ու պատմածները հիւանդ Սիլվիօի զգալուն սրտում հաստատ համոզումն էին առաջացրել՝ որ ինքն էլ երբէք ցաւ չի ունենայ, եթէ Մանիկն իր մօտ լինի: Եւ Սիլվիօն այդպէս ողորմելի կերպով բացագանցում էր ամեն օր, իսկ խեղճ մալրը չգիտէր թէ ումնից խորհուրդ և օգնութիւն հայցէ:



Սակայն Սիլվիօն զայրացած և կարողացածին չափ բարձր ձայնով աղաղակեց մօր յետեկց. «Աւելի լաւ կլինէր, եթէ Մանիկը գար»։ Այդ ասելուց յետոյ նա շտապով վերմակի տակ ծածկուեց, որ քահանան չկարողանայ իմանալ՝ թէ այդ ձայնն որտեղից եկաւ։ Բայց մայրը սաստիկ վախեցաւ և ներս մտնելիս քահանային խնդրեց, որ չնեղանայ երեխայի խօսքերից, որովհետև լուրջ մտքով չէին ասուած։ Սիլվիօն տեղից չշարժուեց և միայն վերմակի տակ ծածուկ ասաց. «Ո՛չ, ես լուրջ մտքով ասի»։

Քահանան գուշակեց թէ որտեղից եկաւ այդ ձայնը. նա իսկոյն մօտեցաւ անկողնին և թէև Սիլվիօն մի մազն անգամ չէր երևում, ասաց. «ողջո՞ն քեզ, ո՞րդեակ, առողջութիւնդ ի՞նչպէս է. ինչո՞ւ ես փոքրիկ գորշուկի նման թագնւում։ Դուրս արի և բացատրիր ինձ՝ թէ Մանիկ ասելով ի՞նչ ես հասկանում»։

Սիլվիօն դուրս սողաց իր բնից, որովհետև այդպէս մօտիկ տեսնելով քահանային՝ յարգանք զգաց դէպի նա։ Նա շտապով իր փոքրիկ լղար ձեռքը մեկնեց՝ քահանային ողջունելու և ասաց. Ռիկօն Մանիկի մասին եմ խօսում»։

Մայրը ստիպուած էր բացատրութիւն-

ԳԼԽ. ԺԶ.

ԱՄԵՆՔԻՆ ՈՒՐԱԽԱՑՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԻ



անհանգիստ դրութեան
մէջն էր տիկին Մենօտ-
տին, երբ հեռուից
նկատեց երկարաքղանց
սև զգեստում փաթա-
թուած ծեր քահանա-
լին, որ պարտիզի մի-
ջով դէպ իրենց էր
դալիս և մեծ մխիթարութիւն զգաց. քա-
հանան ժամանակ առ ժամանակ փոքրիկ
հիւանդին այցելութեան էր գալիս։ Տիկինը
վեր թռաւ աթոռի վրայից ու կանչեց ուրա-
ված. «Տես, Սիլվիօն, մեր բարի քահանան
խացած. «Տես, Սիլվիօն, մեր բարի քահանան
դալիս է» և առաջ գնաց նրան դիմաւորելու։

ներ տալ, որովհետև քահանան զարմացած գլուխը թափ տուեց և Սիլվիօի անկողնի մօտ նստեց: Տիկինը պատմեց Մանիկի մասին և ասաց՝ թէ Ենչպէս փոքրիկ Սիլվիօն հաստատ համոզուած է, որ ինքն երբէք չի լաւանայ, եթէ Մանիկը չգալ. Ռիկօն էլ յիմարացել է և կարծում է թէ կարող է բերել այդ աղջկանը, այն ինչ ճանապարհը չգիտէ. իսկ աղջիկն էլ ապրում է շատ հեռու, սարերի վրայ, ուր ոչ ոք չէ գնում և մարդ չգիտէ թէ Ենչպիսի սարսափելի մարդիկ են ապրում այնտեղ: Արդէն կարելի է երեակայել՝ թէ Ենչպիսի են այնտեղի մարդիկը, երբ Ռիկօն նըման քնքոյշ երեխան աւելի լաւ է համարում մեծ վտանգների ենթարկուելով փախչել այնտեղից, քան թէ այդպիսի մարդկանց մէջ ապրել: Եթէ այդպէս չլինէր, աւելացըեց տիկին Մենօտին, ինքը փող չէր խնայի այդ աղջրկանը բերել տալու և Սիլվիօի ցանկութիւնը կատարելու համար. իրեն համար էլ լաւ կլինէր այդ, որովհետև այլ ևս չի կարողանում դիմանալ Սիլվիօի ցաւերին: Ռիկօն էլ, որ առհասարակ շատ խելօք է խօսում, կարծում է թէ ոչ ոք չի կարող Մանիկի պէս օգնել նրան: Ինչպէս երեւում է նա լաւ է ճանաչում Մանիկին և եթէ այդ աղջիկը ճիշտ այնպէս

է, ինչպէս որ նկարագրում է Ռիկօն, հէնց իրեն համար էլ փրկութիւն կլինի՝ ախտեղից ազատուիլը. բայց ով պէտք է օգնէ իրեն՝ Մանիկին սարերից ցած բերելու:՝

Քահանան լլջութեամբ լսեց մինչև վերջը և ոչ մի խօսք չարտասանեց, մինչև որ տիկին Մենօտին աւարտեց իր ասելիքը. նա չէր էլ կարող նրա խօսքը կտրել, որովհետև տիկնոջ սիրտը վաղուց լցուած լինելով՝ այժմ այնպիսի յուզմունքով և արագութեամբ էր խօսում, որ համարեա թէ շունչը կտրուեց:

Երբ ամենքը լուեցին, քահանան հանդարտ ու անվրդով մի պտղունց քթախոտ էլ քաշեց ու ասաց.

«Տիկին Մենօտի, այնտեղի մարդկանց մասին սարսափելի կարծիքներ ունէք. այնտեղ էլ քրիստոնեաներ կան և քանի որ ճանապարհորդելու համար ամեն տեսակ միջոցներ են գտնուել, կարելի կլինի, որ մէկն առանց վտանգի այնտեղ հասնի: Այդ կարելի է փորձով ցոյց տալ, պէտք է միայն մտածել այդ մասին»:

Քահանան մի պտղունց քթախոտով իր ուժերը կազդուրեց և ատա նորից շարունակեց. ամեն տեսակ վաճառականներ կան, որ այնտեղից գալիս են Բերդամօ, նրանք կգի-

տենան ճանապարհները. կարելի է տեղեկութիւններ հաւաքել և ապա որոշել. մի խօսքով կարելի է մի միջոց գտնել: Եթէ յանկանում էք, տիկին Մենօտտի, ի նկատի կունենամ այդ. ես տարին մէկ կամ երկու անգամ գնում եմ Բերգամօ և կարող եմ այդ մասին հոգալ:

Տիկին Մենօտտին այնպէս շնորհակալ էր քահանայից, որ չգիտէր թէ ի՞նչպէս արտայալտէ այդ. միանգամից չքացան նրա այն ծանր մտքերը, որ երկար ժամանակից հետէ օր ու գիշեր հալածում էին նրան և չգիտէր թէ ի՞նչպէս ազատուի դրանցից: Այժմ քահանան ամբողջ ծանրութիւնն իր վրայ առաւ և այսուհետեւ կարող էր ինքը Սիլվիօն յուսադրել՝ քահանայի խօսքերով:

Այդ ամբողջ խօսակցութեան միջոցին Սիլվիօն լարուած ուշադրութեամբ լսում էր և երբ քահանան տեղից վերկենալով՝ հրաժեշտի ողջոյն տուեց և ձեռքը մեկնեց հիւանդին, սա ուժգնութեամբ խփեց իր ձեռքը նրա բաց ափի մէջ՝ կարծես թէ ուզում էր ասել. այս անգամ ուրախութեամբ: Քահանան խոստացաւ տեղեկութիւններ հաւաքելուց յետոյ իմաց տալ՝ թէ արդեօք կարելի է իրագործել

իրենց ուզածը, թէ Սիլվիօն պէտք է ձեռք վերցնի իր յանկացածից:

Նաբաժ զաբաժի յետևից անցնում էր, բայց Սիլվիօն իրեն լաւ էր պահում: Նա որոշ յուսով էր ապրում և Ռիկօն էլ յալժմ չտեսնուած աշխուժութեամբ էր զբաղեցնում նրան: Ռիկօն քահանայի խօսքերն իմանալուց յետոյ նոր կեանք էր ստացել. նա առաջուանից աւելի շատ բաներ էր պատմում Սիլվիօնին և հէնց ջութակը վերցնում էր թէ չէ, այնպիսի սրտալի հնչիւններ ու եղանակներ էին լսում նրա նուազից, որ տիկին Մենօտտին չէր կարողանում սենեակից հեռանալ և շատ զարմանում էր՝ թէ որտեղից է Ռիկօն այս բոլորը սովորել:

Ռիկօն էլ միայն այդ սենեակումն էր ուրախանում իր ջութակով. ընդարձակ և ազատ տարածութեան մէջ նրա ջութակի լարերը գեղեցիկ էին հնչում. այդտեղ խաղաղ էր և մաքուր օդ կար. նա ստիպուած չէր շարունակ պարի եղանակներ նուազել, ծխախոտի թանձը ծուխը կուլ տալ և մարդկանց աղաղակները լսել. այդտեղ նա նուազում էր իր սրտի ուզածը: Օր օրի վրայ նա աւելի մեծ սիրով էր այդ սենեակը մտնում և յաճախ ներս մտնելիս մտածում էր. ի՞նչ լաւ բան է,

Երբ մարդ իր տուն է գալիս: Բայց այնուամենայնիւ Ռիկօն հօ իրենց տանը չէր, նա միայն մի երկու ժամով կարող էր գալ և կրկին պէտք է լետ դառնար:

Վերջին ժամանակները Ռիկօն պէտք է մի բան պատահած լինէր, որ պանդոկի տիրուհուն երբեմն շատ զարմացնում էր: Տիրուհին երբ կեղաստ, կոտրած ամանը դնում էր նրա առաջն ու ասում: «ահա, Ռիկօն, տաք հաւերին». — նա մի փոքր լետ էր քաշւում, ձեռքերը մէջքին դարսում՝ ցոյց տալու համար որ չի կարող ձեռք տալ ամանին և ասում հանդարտ: «Ես կուզէի, որ այդ մի ուրիշն անէր»:

Եւ երբ հին կօշիկները Ռիկօի ձեռքն էր ուզում տալ, որ կօշկակարի մօտ տանի, Ռիկօն նոյնն էր կրկնում և ասում: «Ես կուզէի, որ մի ուրիշը գնար»:

Բայց պանդոկի տիրուհին խելօք կին էր և նկատել էր արդէն, որ վերջին ժամանակները Ռիկօն փոխուել էր: Տիկին Մենօտտին միշտ լաւ էր հագցնում Ռիկօին՝ — այդ պարտականութիւնն իր վրայ առնելու օրից — բայց որովհետև Ռիկօնն սազ էր գալիս լաւ զգեստը, տիկինն էլ ուրախութիւն էր զգում՝ լաւ կըտորից հագցնելով նրան. Ռիկօն էլ մեծ հո-

գացողութեամբ զգեստը մաքուր էր պահում, որովհետև ինքն էլ մաքրութիւն էր սիրում և կեղաստութիւնից, անկարգութիւնից և աղմուկից զգւում էր: Այդ բոլորը տեսնում էր պանդոկի տիրուհին, բայց միենոյն ժամանակն ուրախութեամբ նկատում էր, որ Ռիկօն առաջուայ նման պարահանդէսներից վերադառնալիս՝ գրպանը դատարկում էր իր առաջը և դրամները թափում, առանց մի որևէ է նշան անգամ ցոյց տալու՝ թէ ինքն էլ է կամենում դրանցից:

Ռիկօն էլ հետզհետէ աւելի էր բերում, որովհետև ուրիշների նման միայն պարեր չէր նուագում. պարերից լետոյ շատերն ուզում էին լսել նրա երգերն ու գիտցած զանազան եղանակները: Այդ էր պատճառն ահա, որ պանդոկի տիրուհին սիրով էր պահում նրան և էլ հաւերին կերակրելն ու կօշկակարի մօտ գնալը նրան չէր լանձնում:

Այս բոլոր դէպքերի միջոցին՝ Ռիկօի Պեշիրա գալու օրից արդէն՝ անցել էր երեք տարի: Այժմ նա տասնուշորս տարեկան բարձրահասակ պատանի էր. տեսնողը հաւանում էր նրան:

Աշնան օրերի ոսկեգոյն ճառագալթները նորից վայլեցին Գարդա լճի վրայ և կապուտ

Երկինքը տարածուած էր խաղաղ կոհակների վերև։ Պարտիզում վազերից կախուած էին ոսկեգոյն ողկոյզները և դափնեվարդի (օլէ-անդը) կարմիր ծաղիկները պսպղում էին արևի պայծառ ճառագայթների տակ։ Սիլվիօի սենեակում խաղաղութիւն էր տիրում, որովհետև մայրը գնացել էր պարտէզ՝ երեկոյեան համար խաղող և թուզը քաղելու. Սիլվիօն ուշադրութեամբ ականջ էր դնում, որ լսէ Ռիկօի ոտքի ձայնը, որովհետև նրա գալու սովորական ժամանակն էր։ Ցանկապատի դուռը բացուեց և Սիլվիօն տեղից վեր թուաւ։ Երեաց մի երկար ու սև զգեստ հագած մարդ։ Քահանան էր եկողը։ Այս անգամ Սիլվիօն վերմակի տակ չծածկուեց. դեռ քահանան պարտիզի կէսը չանցած նա իր ձեռքը մեկնեց գէպի նա, որքան կարող էր հեռու։ Քահանային դուր եկաւ այդպիսի ընդունելութիւնը. նա շուտով սենեակը մտնելով մօտեցաւ Սիլվիօի անկողնին՝ չնայելով որ նա մօրը տեսաւ պարտիզում և ասաց. «Ա՞յ, այդպէս լաւ է, զաւակս, ինչպէս է առողջութիւնդ»։ «Լաւ է», պատասխանեց շտապով Սիլվիօն և վերին աստիճանի լարուած դրութեամբ նայեց քահանային ու կիսաձայն ասաց. «Ե՞րբ կարող է գնալ Ռիկօն»։

Քահանան նստեց անկողնի մօտ և հանգիսաւոր կերպով ասաց. «Վաղն առաւոտեան ժամի հինգին ճանապարհ կընկնի Ռիկօն, որդեակ»։

Այդ խօսքի վրայ ներս մտաւ տիկին Մենօտին և զարմացած սկսեց մէկը միւսի յետևից այնքան հարցեր տալ, որ քահանան ստիպուած եղաւ լուցնել նրան ու իր տեղեկութիւնները հաղորդել։ Երբ քահանան սկսեց իր պատմութիւնը՝ Սիլվիօն փոքրիկ շահէնի նման աչքերը յառեց նրա վրայ։

Քահանան հէնց նոր էր գալիս Բերգամօից, ուր երկու օր էր անցկացրել։ Այնտեղ իր բարեկամների օգնութեամբ մի ձիավաճառ էր գտել, որ երեսուն տարուց ի վեր իւրաքանչիւր աշուն գալիս էր Բերգամօ և գիտէր բոլոր ճանապարհներն ու տեղերը՝ Բերգամօից սկսած մինչև այն հեռաւոր լեռները, ուր պէտք է գնար Ռիկօն։ Նա գիտէր նոյնպէս թէ ինչպէս կարելի է լեռները բարձրանալ՝ առանց ճանապարհին կառքից իջնելու և դուրս պիշերելու։ Հէնց ինքը պէտք է այդ ճանապարհով գնար և ուզում էր Ռիկօն հետը վերցնել՝ եթէ նա կարող լինի վաղն երկաթուղու առաջին գնացքով գէսլի Բերգամօ ուղերուուել։ Այդ մարդը ճանաչում է նոյն-

պէս բոլոր կառապաններին ու վերահսկողներին և ուզում է Ռիկօի ու Մանիկի յետ գալու համար էլ կարգադրութիւններ անել ու այդ մարդոցը յանձնարարել, որ նրանք ապահով ճանապարհորդեն:

Քահանան իր կողմից կարծիք յայտնեց, որ կարելի է թոյլ տալ Ռիկօին ճանապարհ ընկնելու և օրհնեց նրա ուղևորութիւնը:

Երբ քահանան ցանկապատից արդէն ուզում էր դուրս գալ, նրան ուղեկցող տիկին Մենօտին նորից յետ դարձրեց նրան ու անհանգստութեամբ հարցրեց. «Ա, տէր հայր, արդեօք ճշմարիտ ապահով կարող եմ լինել, որ նրա կեանքին վտանգ չի սպառնայ, կամ թէ չէ Ռիկօն չի մոլորուի ճանապարհին ու վայրենի սարերի մէջ կորչի»:

Քահանան կրկին հանգստացրեց տիկնոջը և ապա թէ վերջինս յետ դարձաւ ու սկսեց մտածել՝ թէ ի՞նչ է հարկաւոր պատրաստել Ռիկօի հանապարհ ընկնելու համար. Հէնց այդ միջոցին Ռիկօն մտաւ պարտէզը և լսելով Սիլվիօի դէպ իրեն ուղղուած ուրախ ճիշը, այնպէս զարմացաւ, որ երեք թուոցք անելով՝ արդէն կանգնած էր Սիլվիօի անկողնի մօտ, որ տեսնէ թէ ի՞նչ է պատահել այնտեղ: «Ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչ է պատա-

հել», հարցնում էր անդադար Ռիկօն: Սիլվիօն էլ մի գլուխ աղաղակում էր. «Կասեմ, կասեմ»՝ երկիւղ կրելով, որ չլինի թէ մայրն իր առաջը կտրի: Բայց մայրն երկու փոքրերին թողեց մենակ, որ ուրախանան, իսկ ինքը գնաց կարևորը հոգալու: Նա հանեց ճանապարհորդական պայուսակը, մէջը դրեց մի ահագին կտրոր ապուխտ, ամբողջ կէս հաց, մի մեծ կապոց չորացրած սալոր ու թուզը և շուրի մէջ լաւ փաթաթած մի շիշ գինի. յետոյ դարսեց զգեստները, երկու շապիկ, մի զոյգ գուլպայ, մի զոյգ կօշիկ և թաշկինակներ. այդ բոլորը դարսելիս տիկինը միշտ՝ կարծում էր թէ Ռիկօն ամենահեռու երկիրն է գնում և այժմ միայն լաւ նկատեց՝ թէ նա որքան սիրելի էր դարձել իրեն համար:

Իրեղէնները պայուսակի մէջ դարսելու միջոցին տիկինը յաճախ յետ էր նստում ու մտածում. «Երանէ՝ թէ մի դժբաղդութիւն չպատահի»:

Յետոյ նա ցած եկաւ պայուսակը ձեռքին և Ռիկօին պատուիրեց, որ իսկոյն գնայ պանդոկի տիրուհու մօտ, ամեն բան նրան լաւ բացատրէ և խնդրէ, որ նա էլ թոյլ տայ իրեն գնալու. իսկ պայուսակը հէնց իսկոյն կարող է տանել երկաթուղու կալարանը:

Ռիկօն խիստ զարմացաւ այդ պայուսակը տեսնելով, բայց իսկոյն կատարեց իրեն տը-քուած պատուէրը և յետոյ գնաց պանդոկի տիրուհու մօտ: Պատմեց նրան, որ պէտք է լեռները գնայ և Մանիկին բերէ. քահանան է ասել, որ ինքը հէնց վաղն առաւօտեան ժամի հինգին ճանապարհ պէտք է ընկնի: Քահանայի անունն արդէն յարգանք ներշնչեց տիրուհուն, բայց այնուամենայնիւ ցանկացաւ խմանալ թէ ով է Մանիկը և ինչո՞ւ համար է նրան բերում. նա իսկոյն մտածեց, որ գուցէ ինքն ալդտեղից էլ օգտուի: Բայց միայն այնքան իմացաւ, թէ Մանիկը մի աղջիկ է և գալիս է տիկին Մենօտտիի մօտ: Նա թոյլ տուեց Ռիկօին գնալու, որովհետև չէր կամենում տիկին Մենօտտիին արգելք լինել. ինքն արդէն գոհ էր, որ տիկինը Ռիկօին իր մօտ է թողել: Նա ենթագրեց նոյնպէս, որ Մանիկը Ռիկօի քոյրը պէտք է լինի, թէև նա չէ ասում այդ, ինչպէս որ առհասարակ իր ընտանեկան հանգամանքների մասին ոչինչ չէր ասում:

Հէնց նոյն երեկոյեան նա արդէն պատմում էր պանդոկի յաճախորդներին, որ Ռիկօն վազը գնում է իր քրոջը բերելու, որով-

հետև փորձով տեսել է՝ թէ ինչպէս լաւ կա-ըելի է ապրել այստեղ, մեզ մօտ:

Տիրուհին էլ ցանկացաւ ցոյց տալ Ռի-կօին, թէ որքան սիրում է նրան. տախտա-կամածի վրայից ցած բերեց մի մեծ կողով և լցրեց երշիկներով, պանրով, ձուերով, իւղ քուած հացի շերտերով և ասաց.

«Ճանապարհին քաղցած չպէտք մնաս, իսկ մնացածը պէտք կգայ սարերում. այնտեղ շատ բան չես գտնի և յետ դառնալիս էլ ու-տելու բան կունենաս: Դու անպատճառ յետ կգաս, այնպէս չէ Ռիկօ»:

«Անպատճառ», պատասխանեց Ռիկօն, «ութ օրից յետոյ կրկին այստեղ եմ»:

Ռիկօն իր ջութակն էլ տարաւ տիկին Մենօտտիին պահտալու, որովհետև բացի նը-րանից ուրիշ ոքի չէր կարող վստահանալ. յետոյ բոլորին հրաժեշտ տուեց ութ օրուակ ժամանակով, որովհետև եթէ ամեն բան լաւ յաջողէր, այդ ժամանակամիջոցում կարող էր կրկին վերադառնալ:



ճանապարհը նոյն վագոնով և յետոյ լճի վը-
րայ: Ապա ցած իջան և ոտքով գնացին դէ-
պի մի հիւրատուն: այդտեղ արդէն ձիերը լը-
ծած՝ պատրաստ կանգնած էր փոստային կառ-
քը: Ռիկօն պարզ լիշեց՝ թէ ի՞նչպէս կանգ-
նած էր ինքն այդտեղ գիշերով, բոլորովին
մենակ, երբ ուստանողները հեռացան. միւս
կողմը տեսաւ նոյնպէս այն ախոռի դուռը,
որտեղ կախուած էր լապտերը և լիշեց թէ
յետոյ ի՞նչպէս գտաւ ոչխարավաճառին: Ար-
դէն երեկոյ էր. ճանապարհորդները շուտով
կառք նստեցին և դէպի սարերն ուղերուե-
ցան: Այս անգամ Ռիկօն նստած էր կառքում
իր ուղեկցի հետ և հազիւ թէ ուղիղ նստել
էր իր տեղը, աչքերը գնացին, որովհետև նա-
խորդ գիշերը յուզմունքից մի ժամ էլ չէր քը-
նել: Այժմ տեղը հանեց և առանց մի անգամ
իսկ զարթելու շարունակ քնեց, մինչև արե-
գակի հորիզոնից բաւականին բարձրանալը.
կառքը շատ կամաց էր գնում և երբ Ռիկօն
դլուխը գուրս հանեց պատուհանից, աննկա-
րագրելի սքանչացմամբ տեսաւ, որ կառքը
բարձրանում է իրեն լաւ ծանօթ Մալոյեա
սարի կեռմաններով:

Պատուհանից նա շատ բան չէր տեսնում,
միայն երբեմն երբեմն նկատում էր ճանա-

ԳԼԽ. ԺԷ

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՍԱՐԵՐԸ



իկօն առաւօտեան ժամի
հինգից դեռ շատ վաղ
արդէն պատրաստ կանգ-
նած էր երկաթուղու կա-
յարանում և անհամբեր
սպասում էր գնացքի մեկ-
նելուն: Այժմ նա նստած
էր վագոնում ինչպէս ե-
րեք տարի առաջ, բայց ո՛չ այնպէս վախկոտ
և ջութակը, ձեռքին անկիւնում սեղմուած.
Հիմա բռնել էր ամբողջ նստարանը, որովհե-
տեւ հետն ունեցած կողովն ու պայուսակն ա-
հագին տեղ էին բռնում: Բերգամօում նա
պատահեց ձիավաճառին և այդտեղից երկու-
սը միասին բաւականին տեղ շարունակեցին

պարհի ծռուիլը. բայց սիրով ուզում էր ամեն բան տեսնել շրջակալքում: Վերջապէս կառքը կանգ առաւ. արդէն հասել էին գագաթին: Ալդտեղ էր այն հիւրանոցը, ուր նա հանգստացել էր առաջին ճանապարհորդութեան միջոցին և զրուցել կառապանի հետ: Բոլոր ճանապարհորդներն իջան մի ըռպէ: Ճիերին խոտ տուին: Ռիկօն նոյնպէս ցած իջաւ կառքից. նա գնաց դէպի կառապանը և խոնարհութեամբ հարցրեց նրան. «Կարող եմ արդեօք քո կողքին նստած գնալ մինչև Զիլս»: «Բարձրացիր», ասաց կառապանը:

Սմենքը նորից կառք նստեցին և Ճիերն արագ էին գնում առաջ զարիվայր և յետոյ ուղիղ ճանապարհով: Ահա երևաց և լիճը: Ալնտեղ էր անտառախիտ թերակղզին և ահա երևացին Զիլսի սպիտակ տները, իսկ միւս կողմն երևում էր Զիլս—Մարիան: Փոքրիկ եկեղեցին փալվլում էր առաւտեան արևի ճամանչների մէջ, իսկ սարի դիմացը Ռիկօն տեսաւ երկու փոքրիկ խրճիթները:

Ռիկօն սիրտն սկսեց սաստիկ բաբախել. արդեօք որտեղ կլինի Մանիկը: Մի քանի քայլ անելուց յետոյ, փաստային կառքը կանգ առաւ Զիլսում:

Ռիկօն անյատանալուց յետոյ Մանիկը

շատ դժուար օրեր էր տեսել: Երեխաներն հետզետէ մեծանում էին, գործերն աւելանում. իսկ գործի մեծ մասն ընկնում էր Մանիկի վրայ, որովհետև երեխաների մէջ նա ամենքից մեծն էր, իսկ ծերերի մէջ ամենից երիտասարդը. երբեմն ասում էին. «Մանիկը կարող է անել այդ, նա բաւականին մեծ է» և յետոյ կրկին թէ. «այս կարող է Մանիկն անել, որովհետև գեռ երիտասարդ է»: Ռիկօն գնալուց յետոյ նա էլ ոչ ոք չունէր, որին կարողանար հաղորդել իր ուրախութիւնը, եթէ մի վայրկեան ժամանակ անգամ ունենար դրա համար:

Մի տարի առաջ վախճանուել էր Մանիկի բարի տատը և այդ օրից սկսած նա էլ ազատ վայրկեան չունէր, որովհետև առաւօտից մինչև երեկոյ այնքան գործ կար անելու նրանց տանը, որ երբէք չէր վերջանում:

Մանիկն իր արիութիւնը չէր կորցրել, թէև տատի մահուան առիթով շատ լաց եղաւ և գեռ այժմ էլ ամեն օր մի երկու անգամ մտածում էր. առանց տատի ու Ռիկօն էլ այնպէս սիրուն չէ աշխարհը, ինչպէս որ էր մի անգամ: Մի շաբաթ առաւօտ, երբ արևը պայծառ փալլում էր, Մանիկը յարդանոցից դուրս եկաւ՝ գլխին մի մեծ կապոց ծըղ-

նոտ դրած. նա ուզում էր մի սիրուն աւել կապել՝ երեկոյեան ժամին տունն աւլելու համար. Սրեի ճառագալթները սիրուն փայլ էին տալիս Զիլսի չոր ճանապարհին. Մանիկը կանգ առաւ և նայելով դէպ այն կողմը, տեսաւ որ այդ ճանապարհով գալիս է մի անձանօթ պատանի. նկատելի էր միայն, որ եկողը Զիլսից չէր: Երբ անձանօթն աւելի մօտեցաւ, կանգնեց և նայում էր Մանիկին. սա էլ զարմացած նայում էր նրան. բայց յանկարծ դէն ձգեց ծղնոտի կապոցը, թռաւ դէպի հանգիստ կանգնած պատանին ու աղաղակեց. «Ո՞հ, Ռիկօ, կենդանի ես, նորից եկար, բայց ի՞նչ մեծացել ես, Ռիկօ. առաջ բոլորովին չճանաչեցի քեզ, բայց հէնց որ երեսիդ նայեցի, իսկոյն ճանաչեցի. քեզ նման դէմք ոչ ոք չունի»:

Մանիկն ուրախութիւնից հրաշէկ կարմը-րած կանգնած էր Ռիկօի առաջը, իսկ Ռիկօն ներքին յուզմունքից սպիտակ կաւիճ էր դարձել ու ոչ մի խօսք չէր կարողանում ասել, միայն նայում էր Մանիկին: Վերջապէս ասաց. «դու էլ ես մհծացել, Մանիկ, բայց էլի առաջուայ նման ես: Որչափ մօտենում էի ձեր խրճին, այնքան մեծանում էր երկիւղս՝ թէ մի գուցէ փոխուել ես»:

«Ո՞հ, Ռիկօ, դու կրկին այստեղ ես», հըր-ձւում էր Մանիկը. «երանի՛ թէ տատն էլ կարողանար իմանալ այդ. բայց ներս արի, Ռիկօ, բոլորը կզարմանան»: Մանիկն առաջ վագեց ու դուռը բաց արեց. Ռիկօն ներս գնաց: Երեխաներն իսկոյն միմեանց յետել թաք-նուեցան, իսկ մայրը տեղից վեր կացաւ, ողջունեց Ռիկօին օտարոտի կերպով ու հարցրեց թէ ի՞նչ է կամենում: Ոչ նա և ոչ էլ երե-խաները չկարողացան ճանաչել նրան. Տրուդին ու Զամին էլ ներս եկան և նրանք էլ թեթև գլուխ տուին ու մի կողմը քաշուեցան:

«Ոչ մէկդ չէք ճանաչում նրան», աղա-ղակեց Մանիկը, «մեր Ռիկօն է»:

Այժմ ամեն կողմից զարմանքի նշաններ արտայալտեցին. հէնց այդ միջոցին էլ ներս մտաւ հայրը՝ նախաճաշելու:

Ռիկօն առաջ գնաց և ձեռքը մեկնեց դէ-պի նա. հայրը ձեռք տուեց և նայում էր պա-տանուն:

«Սրգեօք մեր ազգականներից մէկն է», ասաց նա, որովհետեւ երբ նրանք գալիս էին, ինքն երբէք ճիշտ չէր ճանաչում նրանցը:

«Հայրիկն էլ չճանաչեց նրան», ասաց Մա-նիկը մի փոքր սրտնեղութեամբ. «Ռիկօն է, հայրիկ»:

«Հա, շատ լաւ», նկատեց հայրը և նուրից սկսեց դիտել նրան ոտից մինչև գլուխ և յետոյ աւելացրեց. «լաւ ես արել, որ եկել ես, մի որևէ է արհեստ սովորեցի՞ր, Եկ, նստիր մեզ մօտ և պատմիր գլխովդ անցածները»:

Ռիկօն իսկոյն չնստեց, նա շարունակ դեպի դուռն էր նայում և վերջապէս կմկմալով ասաց. «Ուր է տատը»: Հայրը պատասխանեց՝ թէ նա պառկած է Զիլսում, ծեր վարժապետի մօտերքը: Ռիկօն տեսնելով որ տատը ոչ մի տեղ չէ երևում, ուշացնում էր հարցմունքը, որովհետև պատասխանից վախենում էր: Այժմ միայն նստեց միւսների մօտ, բայց բոլորովին լուռ էր և չէր էլ կարողանում բան ուտել. նա շատ էր սիրում տատին:

Բայց հայրն ուզում էր իմանալ՝ թէ Ռիկօն ուր էր գնացել այն օրը, երբ իրենք որոնում էին նրան և թէ օտարութեան մէջ ինչպիսի կեանք է վարել: Ռիկօն էլ պատմեց բոլորը, ինչպէս որ պատահել էր և զուտով սկսեց խօսել տիկին Մենոտտիի և Սիլվիօի մասին և պարզապէս բացատրեց թէ ինչո՞ւ համար է եկել և թէ Մանիկի հետ պէտք է կրկին Պեշիերա վերադառնայ՝ հէնց որ հայրն ու մայրը համաձայնեն: Ռիկօն պատմելու միջոցին Մանիկին աչքերը լայն բաց էր արել,

այդ մասին նա դեռ ոչ մի խօսք չէր լսել: Ռիկօն վերջին խօսքերը նրա սիրտը բորբոքեցին. ինչ սիրուն բան, ինքը պէտք է Ռիկօն հետ գէպի սիրուն լիճը ցած գնայ և նորից ամեն օր նրա հետ լինի՛ բարի տիկնոջ և իրեն տեսնել ցանկացող հիւանդ Սիլվիօի մօտ:

Հայրը նախ լռեց մի առ ժամանակ և յետոյ ասաց. լաւ կլինի, եթէ երեխաններից մէկն օտար տեղ գնայ ու մի բան սովորի, բայց Մանիկը չէ կարող գնալ, այդ մասին խօսք էլ չէ կարող լինել. նա տանը պէտք է, մի ուրիշը կարող է գնալ, օրինակ Տրուդին»:

«Այո՛, այո՛, այդպէս լաւ կլինի», ասաց մայրը. «առանց Մանիկի ոչինչ չեմ կարող անել»: Տրուդին էլ գլուխը բարձրացրեց ամանից ու ասաց. ինձ համար էր լաւ կլինի, այստեղ երեխանց աղմուկից աւելի ոչինչ չկայ:

Մանիկը ոչ մի խօսք չասաց. նա միայն լարուած ուշադրութեամբ նայում էր Ռիկօնին, թէ արդեօք նա էլ ոչինչ չի ասի՝ հօր հաստատ մերժումը լսելուց յետոյ և թէ արդեօք Տրուդին կտանի հետը: Բայց Ռիկօն աներկիւդ նայեց հօրը և ասաց.

«Այդպէս չէ կարելի: Հիւանդ Սիլվիօն յատկապէս Մանիկին է ուզում և ոչ թէ ուրիշին. և նա գիտէ թէ ինչ է ուզում. նա

Տրուգիին կըկին յետ կուղարկէ և սա էլ զուր տեղը պէտք է ճանապարհորդէ: Տիկին Մենոտափին ինձ ասաց դարձեալ, որ եթէ Մանիկը Սիլվիօի հետ կարողացաւ հաշտուել ու լաւ նայել նրան, ամեն ամիս կարող է հինգ գուշ դէն ուղարկել տուն. իսկ որ Սիլվիօն ու Մանիկը միմեանց հետ լաւ կլինեն, այդ ես առաջուց շատ լաւ գիտեմ»:

Հայրն իր ամանը մի կողմը դրեց և թասակը գլխին ծածկեց: Նա կերակուրը վերջացրել էր և սաստիկ մտազբաղ եղած ժամանակը սիրում էր գլխարկը գլխին ունենալ՝ կարծես թէ այդ աւելի կապակցում էր նրա մտքերը:

Այժմ նա լուռ մտածում էր՝ թէ ի՞նչքան չարչարւում է ինքը, մինչև որ կարողանում է հազիւ մի գուլդէն փող վաստակել և յետոյ ինքն իրեն ասում էր. «ամեն ամիս հինգ գուլդէն կունենամ առանց մատս անգամ շարժելու»: Յետոյ գլխարկը մի կողմը թեքեց, ապա հակառակ կողմը և սասաց. «Մանիկը կարող է գնալ, տանը մի ուրիշն էլ կարող է գործ շինել»:

Մանիկի աչքերը փալում էին: Բայց մայրը հառաջանք արձակելով նայեց բոլոր փոքրիկ գլուխներին ու ամաններին. արդեօք

մվ պէտք է օգնէր իրեն այդ բոլորը մաքրելու միջոցին: Տրուգին էլ Պետէրլիին արմունկով հարուածեց ու ասաց. «Հանգիստ նստիր», թէս նա այս անգամ բոլորովին լուռ՝ իր բաժին լոբին էր ուտում:

Բայց հայրը մի անգամ էլ ձեռքը տարաւ գէպի գլխարկը, մի բան էլ էր ընկել նրա միտքը: «Մանիկը դեռ չէ ճաշակուել», սասաց նա, կարծեմ լաւ կլինի, որ առաջ ճաշակուի և յետոյ գնայ»:

«Ես դեռ երկու տարուց յետոյ պէտք է ճաշակուեմ, հայրիկ», սասաց եռանդով Մանիկը, «ուրեմն երկու տարի կարող եմ մնալ այստեղ, յետոյ նորից կվերադառնամ ու կճաշակուեմ»:

Մանիկի ասածով ամենքը գոհ մնացին: Հայրն ու մայրը մտածում էին՝ եթէ առանց Մանիկի մեր բանը ծուռը գնայ, ժամանակաւոր կլինի այդ և նրա յետ գալովը կըկին կուղղուի: Տրուգին էլ մտածում էր. «Հէնց որ նա վերադառնաւ, ես կերթամ և յետոյ կտեսնեն՝ թէ էլ երբ յետ կգամ»: Բայց Ռիկօն ու Մանիկը միայն նայում էին միմեանց, նրանց աչքերից ուրախութեան կայծեր էին ցայտում:

Հայրն արդէն գործը վերջացրած համա-

ըելով սեղանից վեր կացաւ ու ասաց. «Վաղն
արդէն կարող էք գնալ»:

Սակայն մայրն սկսեց ողբալ. «այդպէս
շուտ թող չգնան». նա շարունակեց լացը մին-
չև որ հայրն ասաց. «Լաւ, ուրեմն թող եր-
կուշաբթի գնան», նա աւելի չէր ուզում ու-
շացնել, որովհետեւ մտածում էր թէ՝ մինչև
որ նրանք չգնան, մայրը լալուց չի դադարի»:

Մանիկը գործ շատ ունէր անելու. Ռի-
կօն հասկանալով այդ՝ դարձաւ դէպի Սամին
ու ասաց. ուզում եմ տեսնել թէ Զիլս—Մա-
րիան նոյնն է մնացել, թէ փոխուել է, գը-
նանք միասին, յետոյ կերթանք Զիլս, որ այն-
տեղ թողած պայուսակս ու կողովս բերենք,
գու էլ կօգնես ինձ, գնանք: Նրանք գուրս
եկան: Ռիկօն ամենից առաջ կանգ առաւ իր
նախկին խրճիթի առաջ, գիտեց հին դռնակն
ու հաւանոցը. ամեն բան դարձեալ նոյնն էր:
Նա հարցրեց Սամիին՝ թէ ով է բնակւում
այժմ այդ խրճիթում և թէ արդեօք «ազգա-
կան կինը» դեռ մենակ է: Բայց ազգական
կինը վաղուց արդէն թողել էր խրճիթը և
գնացել Սիլվապլանա. յետոյ էլ ոչ ոք չէր
տեսել նրան, որովհետեւ Զիլս—Մարիա չէր
դալիս երբէք:

Իսկ խրճիթում այժմ բնակւում էին այն-

պիսի մարդիկ, որոնց մասին Ռիկօն ոչինչ չգի-
տէր: Ռիկօն ուր որ գնում էր՝ նրա ծանօթ
բոլոր տներից ու յարդանոցներից մարդիկ օ-
տարոտի կերպով նայում էին նրան. ոչ մի
մարդ չկարողացաւ ճանաչել նրան: Երեկոյեան
դէմ, երբ նրանք Զիլս մտան, Ռիկօն դէպի
գերեզմանատուն ծոռւեց. նա ուզում էր տա-
տի գերեզմանը տեսնել, բայց Սամին ճիշտ
չգիտէր տեղը:

Մթնադէմին երկուսն էլ վերադարձան
տուն՝ բեռնաւորուած կողովով ու պայուսա-
կով: Մանիկը կանգնած էր աղբիւրի մօտ և
վերջին անգամ մաքրում էր ախոռի դոյլը.
Երբ Ռիկօն մօտեցաւ նրան, նա ուրախութիւ-
նից կրակ կտրած՝ ասաց. «Դեռ չեմ կարողա-
նում հաւատալ, որ պէտք է գամ, Ռիկօ»:

«Իսկ ես հաւատում եմ», ասաց Ռիկօն
այնպէս հաստատուն կերպով, որ Մանիկը՝ զար-
մացած նայում էր նրան. «Բայց գիտես Մա-
նիկ», աւելացրեց Ռիկօն, «գու էլ ինձ նման
այնքան երկար ու բարակ չես մտածել այդ
մասին»:

Մանիկը մնացել էր զարմացած, որ Ռի-
կօն կարողանում է այդպէս որոշ ու հաստատ
կերպով խօսել. առաջ նա այդպէս չէր:


Ռիկօի համար անկողին պատրաստեցին

վերնայարկում։ Նա էլ իր բոլոր իրեղէնները
վերև տարաւ, որովհետև միւս օրն էր ուզում
բանալ։ Յաջորդ օրը, որ մի պայծառ և արե-
ւածիծաղ կիրակի էր, երբ ամենքը բոլորել
էին սեղանի շուրջը, եկաւ Ռիկօն և ուղիղ
Ուրցլիի և Պետերլիի առաջներն այնքան սա-
լոր ու թուզը թափեց, որ նրանք իրենց ամ-
բողջ կեանքում չէին տեսել. թզի համն էլ
չգիտէին. իսկ մեծաքանակ երշիկները, միսն
ու ձուն Ռիկօն դրեց սեղանի վրայ՝ մէջ տեղը։
Երբ ամենքի զարմանքը մի փոքր անցաւ,
սկսուց մի այնպիսի կերուխում, որ երբէք
տեղի չէր ունեցել այդ խրճիթում։ մինչև
մթնելն երեխաները մեծ հաճոյքով կրծոտում
էին իրենց բաժին թուզը։



ԳԼԽ. ԺԲ.

ԵՐԿՈՒ ՈՒՐԱԽ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐ



ՐԿՈՒՉԱԲԹԻ օրն երեկոյ-
եան պէտք է ճանա-
պարհ ընկնէին. այդ-
պէս էր ասել ձիա-
վաճառը Ռիկօն և
Ռիկօն արդէն ճիշտ-
գիտէր թէ ինչ ճա-
նապարհով լպէտք է

վերադառնայ Պեշիէրա։ Ամենքին՝ հրաժեշտ տա-
լուց յետոյ Ռիկօն ու Մանիկը ճանապարհ ընկան-
դէպի Զիլս. երեխաներով շրջապատուած՝ կանգ-
նած էր մալը խրճիթի առաջ և նայում էր նրանց-
յետևից։ Սամին գնում էր նրանց հետ՝ Ռիկօն՝
պայուսակը գլխին, իսկ կողովը նտանում էին

Ռիկօն ու Մանիկը միասին։ Կողովն ու պայուռ-
սակը լցուած էին Մանիկի զգեստներով։

Զիլսի եկեղեցու մօտ Մանիկն ասաց.
«Երանի թէ տատը կարողանար տեսնել մեզ.
գնանք, նրան էլ մնաս բարով ասենք, հա-
մաձայն ես Ռիկօ»։ Ռիկօն վաղուց արդէն ցան-
կանում էր այդ և յայտնեց Մանիկին, որ ին-
քըն արդէն գնացել է գերեզմանատուն, բայց
տատի գերեզմանը չէ գտել։ Մանիկը գիտէր
նրա գերեզմանի տեղը։

Երբ փոստային կառքը մօտեցաւ ու կանգ
առաւ, կառապանը կանչեց. «այստեղ են այն
երկուսը, որ դէպի Դարդա լիճը պէտք է գը-
նան. երէկ էլ եմ հարցըել»։

Զիավաճառն էր պատուիրել նրան տե-
ղեկանալու. Երբ երկու ճանապարհորդներն
առաջ եկան, կառապանն ասաց. «Բարձրացէք
վերև, միւսները սառել են ու կառքն էլ լի-
քըն է. դուք երիտասարդ էք»։

Այդ ասելով՝ նա օգնեց նրանց վերև բար-
ձրանալու և յետոյ վերցնելով ձիու հաստ
ծածկոցը՝ երկուսի վրայ քաշեց, լաւ փաթո-
թեց նրանցը և առաջ արշաւեց։

Ռիկօն ու Մանիկն իրար կրկին տեսնե-
լուց յետոյ՝ առաջին անգամն էին մենակ մի-
մեանց մօտ նստում և ալժմ ազատ կարող

էին միմեանց պատմել այն ամենը, ինչ որ
պատահել էր ամեն մէկին ամբողջ երեք տա-
րուայ ընթացքում։ Սրտի բերկութեամբ նը-
րանք սկսեցին միմեանց պատմել հէնց սկըզ-
բից և ամբողջ գիշերը մեծ հաճոյքով ու գու-
արձութեամբ զրոյց էին անում. քունը չէր
համարձակուում մօտենալ նրանց աչքերին։
Կառքը գնում էր աստեղազարդ ու փայլուն
երկնքի տակ։ Առաւոտեան նրանք մօտեցան
լճին և ճիշտ նոյն ժամին հասան Պեշիրա,
որ ժամին հասել էր Ռիկօն առաջին անգամ։
Ռիկօն չէր ուզում, որ Մանիկն իր սիրած տե-
ղը հասնելուց առաջ տեսնէ լիճը, այդ պատ-
ճառով նրան ծառերի միջով տարաւ, մինչեւ
որ նրանք փոքրիկ կամուրջի մօտ յանկարծ
տեսան սիրուն լիճը։

Երեկոյեան արևել ոսկեգոյն ճաճանչները
փալփլում էին լճի ալիքների վրայ. Ռիկօն ու
Մանիկը նստած էին փոքրիկ բլրի գլխին ու
նայում էին դէպի լիճը։ Ճիշտ այնպէս էր,
ինչպէս որ նկարագրել էր Ռիկօն, բայց աւե-
լի՛ գեղեցիկ, որովհետև Մանիկն երեք այդ-
պիսի գոյներ չէր տեսել։ Նա մէկ նայում էր
մանիշակագոյն սալերին, մէկ ոսկեգոյն ալիք-
ներին և հըճուանքով աղաղակում։ «սա աւե-
լի՛ սիրուն է քան Զիլզէր լիճը»։

Ռիկօն էլ լիճն երբէք այդպէս սիրուն չէր երևացել, ինչպէս երևում էր այժմ, երբ ինքը նստած էր Մանիկի կողքին:

Ռիկօն մի գաղտնի ուրախութիւն էլ էր զգում. — Ենչպէս յանկարծակի պիտի բերէ Սիլվիօն ու նրա մօրը. ոչ ոքի մտքովը չէր կարող անցնել, որ նա այնպէս շնուտ կվերադառնալ: Ութ օրից առաջ ոչ ոք չէր սպասում նրանց. իսկ նրանք արդէն նստած են լճի ափին: Մինչև արևի մալը մտնելը մնացին այդ բլրակի վրայ նստած: Ռիկօն ցոյց տուեց Մանիկին լճի վրայ իր մօր լուացք անելու տեղը և այն կէտը, որտեղ ինքը կանգնած սպասում էր նրան. պատմեց նոյնպէս՝ թէ երբ երկուսը միասին անցնում էին նեղ կամուրջով, մայրը միշտ բոնում էր իր ձեռքը: «Բայց յետոյ ուր էիք գնում», հարցրեց Մանիկը, «ձեր տունը չգտա՞»:

Ռիկօն բացասական պատասխան տուեց. «Երբ այստեղից բարձրանում եմ գէպի երկաթուղու դիմը, ինձ այնպէս է թւում՝ թէ հէնց այդտեղ էի կանդ առնում մօրս հետ և այդտեղից էի տեսնում մեր առաջը տարածուած կարմիր ծաղիկները. բայց այժմ ոչինչ չկայ և այդ վերևի ճանապարհն էլ չեմ ճանաչում, երբէք ճանապարհ չեմ տեսել այդտեղ»:

Վերջապէս նրանք տեղից վեր կացան և գէպի պարտէզը քայլեցին. Ռիկօն պայուսակն էր տանում, իսկ Մանիկը կողովը: Հէնց որ պարտէզ մտան՝ Մանիկը բարձրաձայն աղաղակեց. «Ենչ սիրուն է, ենչ գեղեցիկ ծաղիկներ են»: Այդ ձայնի վրայ Սիլվիօն փետուրի նման վեր թռաւ տեղից և իր ունեցած բոլոր ուժովը աղաղակեց. «Ռիկօն գալիս է Մանիկի հետ»:

Մայրը կարծեց թէ խեղճ երեխալի ջերմը բռնել է. նա թսղեց արկղի իրերը — որով զբաղուած էր այդ միջոցին — միմեանց վրայ ածած և վագելով գալիս էր:

Բայց հէնց այդ վայրկեանին Ռիկօն դըռնից ներս մտաւ. բարեսիրտ տիկին Մենօտտին քիչ էր մնում որ վայր ընկնէր՝ ուրախութիւնից ու երկիւղից, որովհետեւ մինչև այդ բոպէն նա մեծ երկիւղ էր կըում՝ որ չկինի թէ Ռիկօն ձեռնարկութիւնը խեղճ տղայի մահուան պատճառ գառնայ:

Ռիկօն յետեկից երևաց մի աղջիկ, որի ուրախ գէմքն իսկոյն գրաւեց տիկին Մենօտտիի սիրտը. տիկինը շատ շուտ տպաւորուող էր: Նա առաջ Ռիկօն երկու ձեռքերը սեղմեց ուրախութիւնից. այդ միջոցին Մանիկն արագ գնաց գէպի անկողինը, բարեւեց Սիլվիօն, ձեռքը դրեց նրա լզար ուսերի վրայ և այն-

պէս բարեկամաբար ժպտաց նրա երեսին, որ կարծես թէ նրանք արդէն վաղուց ծանօթ էին և սիրում էին միմեանց. Սիլվիօն բըռնեց նրա պարանոցից և ցած քաշեց նրան մինչև իր երեսը: Յետոյ Մանիկը մի ընծայ դրեց նրա անկողնի վրայ. այդ նուէրը նա իր գրանումն էր պահել, որ շուտ կարողանալ տալ Սիլվիօն:

Տիկին Մենօտին Ռիկօից տեղեկանալով, որ ճանապարհին ոչինչ վտանգ չպատահեց, հանգստացաւ և դառնալով դէպի Մանիկը՝ սրտանց բարեեց նրան: Մանիկն աւելի իր զուարթ աչքերով էր խօսում, քան բերանով, որովհետև ոչ մի խօսք չգիտէր իտալերէն: Բայց ճարպիկ ու դիւրաշարթ աղջիկ լինելով՝ մեծ դժուարութիւն չէր կրում իր մտքերը բացատրելու և իր ասելիքը նրանց հասկացնում էր ձեռքերի շարժումներով ու մատներով նկարագրելով. խօսակցութեան այս նոր եղանակը շատ էր զուարճացնում Սիլվիօն, որովհետև նմանւում էր այն խաղերին, ուր միշտ գուշակելու մի բան կայ:

Տիկին Մենօտին մօտեցաւ այն արկղին, ուր պատրաստ դրուած էին ուտելիքի համար կարեոր պիտուքները՝ սփռոց, ամանեղէն, եփած սառը հաւ, սլուղներ, գինի և այլն:

Երբ Մանիկը հասկացաւ տիկնոջ դիտաւորութիւնը, վայրկենաբար վազեց տիկին Մենօտիի յետևից, վերցրեց սփռոցը, ծածկեց սեղանը, ամանեղէնն և ուտելիքը դարսեց կարգով և այս բոլորը կտտարեց այնպիսի զարմանալի արագութեամբ, որ տիկին Մենօտիին ոչինչ չմնաց անելու, բացի զարմացած նրան նայելուց. մինչև որ տիկինը կմտածէր՝ թէ յետոյ ինչ պէտք է անել, Ի՞անիկն արդէն ամեն բան կտրտել ու դարսել էր կարգով, ինչպէս որ պէտք էր. այս արագ ծառայութիւնը Սիլվիօն էլ դուր եկաւ:

Տիկին Մենօտին նստեց ու ասաց. «վագուց է, որ այդպէս չէր եղել մեզ մօտ. այժմ դու էլ արի, նստիր ու կեր մեզ հետ, Մանիկ»:

Բոլորն էլ միասին նստած՝ ուրախ վայելում էին Աստծոյ բարիքը՝ կարծես թէ միշտ միասին էին եղել և երբէք էլ չպէտք է միմեանցից անջատուէին: Ուտելուց յետոյ Ռիկօն սկսեց պատմել իր ճանապարհորդութեան մասին, իսկ Մանիկը տեղից վեր կացաւ, առանց աղմուկ անելու բոլորը հաւաքեց ու կրկին արկղի մէջ դարսեց, որովհետև արդէն գիտէր ամեն բանի տեղը: Յետոյ նըստեց Սիլվիօն անկողնի մօտ և մատներով զանազան ձևեր էր կազմում, իսկ այդ ձևերի

ստուերն ընկնելով պատի վրայ՝ պատկեր էր առաջացնում. Սիլվիօն շարունակ ծիծաղում էր գուարթ կերպով ու աղաղակում. «Նապաստակ, պոզաւոր անասուն, երկար ոտք ունեցող սարդ» և այլն:

Առաջին գիշերն արդպիսով այնպէս արագ ու գուարթ անցաւ, որ ամենքը զարմացան՝ երբ յանկարծ ժամի տասը խփեց, ի կօն տեղից վեր կացաւ, որովհետև գիտէր, որ արդէն իր գնալու ժամանակն էր. այդ միտքը նրա երեսը մթագնեց: Նա կարճ «բարի գիշեր» ասաց և գուրս գնաց: Բայց Մանիկը վազեց նրա յետեկոց, պարտէզում բռնեց նրա ձեռքն ու ասաց. «չպէտք է տիրես, Ռիկօ, ինչ լաւ է այստեղ. չեմ կարող ասել թէ որքան է գուր գալիս ինձ այս բոլորը և ինչքան ուրախ եմ. այս բոլորը քեզ եմ պարտական: Դու վազը և ամեն օր նորից կգաս, այնպէս չէ, ուրախ չես, Ռիկօ»:

«Այս», ասաց նա և բոլորովին մթագնած նայեց Մանիկի երեսին. «ամեն երեկոյ, ամենալաւ ժամանակը, պէտք է վեր կենամ ու գնամ, որովհետև անտէր եմ»:

«Այս, այդպէս չպէտք է մտածես, Ռիկօ», քաջալերում էր նրան Մանիկը, «չէ՞ որ մենք միշտ միմեանց ենք պատկանել. երեք

տարի շարունակ միշտ այն բոպէին էի սպասում՝ թէ երբ պէտք է նորից միմեանց տեսնենք ու միասին լինենք. իսկ երբեմն, երբ տանու գործերը շատ վատ էին լինում, միշտ մտածում էի. երանի՝ թէ միանգամ Ռիկօին տեսնէի, այն ժամանակ այդ բոլորը սիրով կը տանէի: Այժմ բոլորն էլ այնպէս եղաւ, ինչպէս որ ես էի ցանկանում. միթէ դու էլ ինձ հետ ուրախ չես ուզում լինել, Ռիկօ»:

«Ուզում եմ», ասաց Ռիկօն և ուրախ դէմքով նայեց Մանիկին: Նա մտածեց. ուրեմն ես էլ անտէր չեմ, պատկանում եմ մէկին. Մանիկի խօսքերը հանգստացրին նրան: Նըրանք մի անգամ էլ միմեանց ձեռք տուին և Ռիկօն պարտէզից դուրս գնաց:

Երբ Մանիկը սենեակ վերադարձաւ և տիկնոջ պատուէրի համեմատ՝ ուզում էր «բարի գիշեր» ասել Սիլվիօին, նոր կոիւ սկսուեց. Սիլվիօն չէր թողնում, որ Մանիկն իր մօտից հեռանայ և շարունակ աղաղակում էր. «Մանիկը պէտք է ինձ մօտ մնայ և միշտ անկողնիս մօտ նստի, նա ուրախ բաներ է ասում և աչքերով ծիծաղում»:

Երբ ո՛չ մի յորդոր ու յանդիմանութիւն չօգնեց, վերջապէս մայրն ասաց. «լաւ, ամբողջ գիշերը կողքիդ նստացրու Մանիկին, նա

չի քնի և վազը քեզ պէս հիւանդ կլինի, տեղեց չի կարող վեր կենալ և դու էլ երկար ժամանակ նրան չես տեսնի:

Սիլվիօն թողեց վերջապէս Մանիկի թեր, որ ամուր բռնել էր ու ասաց.

«Գնա քնիր, Մանիկ, բայց առաւօտեան վաղ նորից եկ»:

Մանիկը խոստացաւ վաղ գալ. տիկին Մենօտին ցոյց տուեց նրան մի փոքրիկ, մաքուր սենեակ, որ դէպի պարտէզն էր նայում և որի բաց պատուհանից ներս էր թափանցում ծաղիկների ախորժելի բուրմունքը: —

Մանիկն օրէցօր աւելի անհրաժեշտ էր դառնում Սիլվիօի համար: Երբ այդ աղջիկը տանից դուրս էր գնում, մեծ դժբաղդութիւն էր Սիլվիօի համար. դրա փոխարէն ինքն էլ իրեն լաւ ու կարգին էր պահում, երբ Մանիկը նրա մօտ էր, կատարում էր նրա բոլոր ասածները և էլ նեղութիւն չէր տալիս մօրը: Եւ կարծես թէ ճիշտ՝ այդ նեարդային հիւանդը Մանիկի գալուց յետոյ իսկապէս նախկին մեծ ցաւերը չունէր, որովհետեւ բաւականին ժամանակ էր անցել, բայց Սիլվիօն դեռ առաջուայ նման սաստիկ ցաւեր չէր դդացել:

Մանիկն էլ կարծես զբոյցների մի անհատնում աղբիւր ունէր. ինչ որ նա պատ-

մում, անում ու ասում էր, բոլորն էլ զուարձութիւն էր պատճառում Սիլվիօին, որովհետեւ այդ աղջիկն իր մանկական օրերից սկսած, շարունակ երեխաների հետ էր գործ ունեցել և ամեն կերպ աշխատել՝ նրանց գոհութիւն և բաւականութիւն պատճառելով՝ թէ խօսքերով, ձեռքերով ու հայեացքով և թէ ամեն տեսակ շարժուածքներով:

Այդպիսով Մանիկն անգիտակցաբար, իր բոլոր էութեամբ, ամենահաճելի զբաղմունքն էր Սիլվիօի նման փոքրիկ, զգայուն և շարունակ անկողնին ծառայող երեխայի համար: Աչքաբաց աղջիկը շուտով արդէն սովորեց Ոիլ-վիոկի լեզուն և իտալերէն էր խօսում նրա վիօկի լեզուն և իտալերէն էր խօսում նրա հետ. իսկ երբ բառերը լաւ չէր արտասանում կամ երբեմն սխալում՝ այդ էլ մեծ զուարձութիւն էր պատճառում Սիլվիօին և այդ բանը կարծես թէ նրա համար դիտմամբ հընարած հաճովք էր:


Տիկին Մենօտին երբ տեսնում էր Ռիկօի պարտէզ մտնելը, իսկոյն վագելով դիմաւորում էր նրան. նա այժմ ազատ էր և երբ կամ ուր որ ուզում էր, գնում էր. նա մի կողմն էր քաշում Ռիկօին ու շնորհակալ լինում նրանից, որ Մանիկի նման մի գանձ բերեց իր տուն. «Սիլվիօն երջանիկ և ուրախ է. այդ-

պէս չի եղել նա իր ամբողջ չարքաշ կեանքի
ընթացքում և ես մնացել եմ զարմացած՝ թէ
ի՞նչպիսի աղջիկ է Մանիկը. նա Սիլվիօի հետ
կատարեալ երեխայ է և կարծես թէ նրան
զուրածացնելու համար արածներն իլեն էլ
ուրախութիւն են պատճառում. միւս կող-
մից նա շատ խելացի է և ամուսնացած կնո-
ջից աւելի փորձառութիւն ունի ընտանեկան
գործերում։ Մանիկի գալու օրից մեր տանը
կարծես ամեն բան ինքն իրեն է շինւում և
ինձ համար ամեն օր կիրակի է»։ Կարճ ասած՝
տիկին Մենօտտին խօսք չէր գտնում Մանիկի
լաւ յատկութիւնները գովելու, Ռիկօն էլ սի-
րով էր լսում նրա ասածները։

Երբ նրանք բոլորը միասին նստած էին
լինում և միմեանց վրայ ուրախ հայեացքներ
ձգում, կարծես թէ միմեանցից էլ չէին ու-
զում տնջատուել. կարելի էր մտածել՝ թէ
սրանք ամենաերջանիկ մարդիկն են և ոչինչ պա-
կասութիւն չեն զգում։ Բայց հետզետէ իւրա-
քանչիւր երեկոյ Ռիկօնի դէմքի մռայլն աւելի ու
աւելի էր մթագնում, երբ ժամի տասը խփում
էր. թէւ տիկին Մենօտտին ուրախ տրամադր-
րուած լինելով չէր նկատում, բայց Մանիկը շատ
լաւ տեսնում էր այդ, գաղտնի տրտմում էր ու
ասում. «կարծես թէ փոթորիկ պէտք է լինի»։

ԳԼԽ. ԺԹ.

ՄԻՐՈՒՆ ԳԱՐԴԱ ԼՃ ՎՐԱՅ ԱՄՊԵՐ ԵՆ ԵՐԵ-
ՒՈՒՄ



ի գեղեցիկ աշնանային
օր Ռիւս գիւղում պար-
երեկոյթ պէտք է լինէր
և Ռիկօն էլ պէտք է
գնար այնտեղ՝ նուագե-
լու։ Այդպիսով այդ օրը
նա չպիտի կարողանար
Մանիկին ու միւսներին տես-
նել. այդ բանն արդէն մի քա-
նի անգամ կրկնուել էր և Մանիկն ամեն
կերպ աշխատում էր այդպիսի գէպքերից էլ
օգուտ քաղել. «Դու արևի լուսով անցնում
ես լիճը և աստղերի փայլով վերադառնում,
իսկ մենք ամբողջ ժամանակը քո մասին ենք

մտածում», ասաց Մանիկը, երբ Ռիկօն յայտնեց թէ առաջիկայ կիրակի օրը պարերեկոյթ կայ:

Նաբաթ երեկոյեան Ռիկօն իր ջութակն էլ հետը բերեց, որովհետև գիտէր, որ իր նուագը Մանիկի ամենամեծ ուրախութիւնն է: Ռիկօն մէկը միւսի ետևից նուագում էր սիրուն եղանակներ, բայց այդ օրն ամենքն էլ տիտուր էին և կարծես թէ իրեն էլ տըխրեցնում էին. նա վհատութեամբ նայում էր իր ջութակին՝ կարծես թէ վիշտ պատճառողը դա լինէր:

Յանկարծ նա կնտնտոցը յետ դրեց, չը նայելով որ դեռ ժամը տասից շատ վաղ էր ու ասաց. «Ալէտք է գնամ»:

Տիկին Մենօտին չէր ուզում թողնել նրան և չէր կարողանում հասկանալ՝ թէ ի՞նչ պատահեց Ռիկօին: Մանիկը շարունակ գիտել էր նրան նուագելու միջոցին և այժմ միայն ասաց. «Ուզում եմ մի երկու քայլ հետգ գալ»:

«Ո՛չ, աղաղակեց Սիլվիօն, մի գնա, մնանայտեղ, Մանիկ»:

«Այո՛, այո՛, Մանիկ», ասաց Ռիկօն, «մնանայտեղ, ես կերթամ»:

Այդ ասելու միջոցին նա ճիշտ այնպէս նայեց Մանիկին, ինչպէս որ նայել էր մի ժա-

մանակ, երբ ուսուցչի մօտից վերադառնալով գէպի փայտի կոյտը՝ ասել էր. «ամեն բան կորած է»:

Մանիկը գնաց գէպի Սիլվիօի անկողինն ու կամաց ասաց. «խելօք կաց, Սիլվիօ, վաղը կպատմեմ քեզ Պետերլիի ամենազուարձալի պատմութիւնը, միայն այժմ աղմուկ մի անի»:

Սիլվիօն ճիշտ որ լոեց և Մանիկը դուրս գնաց Ռիկօի լետևից: Երբ նրանք կանգնած էին պարտիզի ցանկապատի մօտ, Ռիկօն երեսը շրջելով գէպի լուսաւորուած սենեակը, որ շատ սիրուն էր երևում պարտիզից, ասաց.

Յետ գնա, Մանիկ, դու այնտեղ պէտք է լինես, իսկ իմ բաժինը փողոցն է, ես միայն մի հայրենազուրկ տղայ եմ և այդպէս էլ կը մնամ միշտ, թող ինձ»:

«Ո՛չ, ո՛չ, այդպէս չեմ թողնի որ գնաս, Ռիկօ, ուր ես գնում այժմ»:

«Դէպի լիճը», ասաց Ռիկօն ու քալլեց կամքջի վրայով: Մանիկը հետը գնաց: Երբ հասան փոքրիկ բլուրը, լսեցին ալիքների մեղմ շշնչոցն ու մի վայրկեան ականջ էին դնում: Յետոյ Ռիկօն ասաց.

«Տես, Մանիկ, եթէ դու այստեղ չլինէիր, ես իսկոյն պէտք է գնայի հեռու, շատ հե-

ոռւ, բայց ինքս էլ չգիտէի թէ ուր: Զէ որ ես միշտ հայրենազուրկ պէտք է լինեմ և ամբողջ կեանքս պէտք է անցկացնեմ պանդոկներում նուագելով, ուր այնպիսի աղմուկ են բարձրացնում միշտ, որ կարծես թէ խելքները կորցրած լինին և պէտք է միշտ քնեմ մի այնպիսի սենեակում, ուր սիրով չեմ ցանկանում ներս գնալ. գու պատկանում ես այն սիրուն տանը բնակուողներին, իսկ ես ոչ ոքի չեմ պատկանում: Տես, երբ այստեղից ցած եմ նայում՝ միշտ մտածում եմ. երանի՛ թէ մայրս մեռնելուց առաջ ինձ այստեղից լիճը գցած լինէր, այդպիսով հայրենազուրկ չէի լինի»:

Մանիկը սրտի ցաւով լսում էր Ռիկօի ասածները, բայց հէնց որ նրա վերջին խօսքերըն ըմբռնեց, սաստիկ վախեցաւ ու աղաղակեց. «Ո՞հ, Ռիկօ, այդպիսի բան չպէտք է ասես. ինչպէս երեսում է վաղուց է «Հայր մեր» չես ասել, որ այդպիսի չար մտքեր են ծագել քո. մէջ»:

«Այո, վաղուց է չեմ աղօթել, էլ չեմ կարողանում»:

Մանիկը սարսափով լսեց այդ խօսքերը: «Ո՞հ, եթէ տատն իմանար այդ, Ռիկօ», աղաղակեց նա ողբալով, «քո պատճառով նա

շատ կտխրէր: Յիշում ես նրա խօսքերը. «ով Հայր մերը մոռանում է, նրա բանը վատ է գնում», արի՛ Ռիկօ, դու պէտք է նորից սովորես, ես իսկոյն կսովորեցնեմ քեզ և շուտով կդիտենաս»:

Մանիկն սկսեց և ջերմ սրտով երկու անգամ միմեանց յետեկց Ռիկօի առաջ ասաց «Հայր մերը»: Աղօթելու միջոցին Մանիկը նըկատեց, որ հէնց այդ խօսքերի մէջ մխիթարական շատ բան կար Ռիկօի համար ու ասաց՝ Հայր մերը վերջացնելուց յետոյ.

«Տես, Ռիկօ, որովհետեւ ամբողջ աշխարհն Աստծուն է պատկանում, նա քեզ համար էլ մի հայրենիք կգտնէ և կարող է քեզ տալ»:

«Տեսնում ես, Մանիկ», պատասխանեց Ռիկօն, «Եթէ Աստուած կարող է ինձ համար մի հայրենիք գտնել ու տալ և չէ տալիս, նըշանակում է, որ նա չէ կամենում»:

«Այո, բայց գու էլ պէտք է մտածես», շարունակեց Մանիկը, «որ Աստուած կարող է ինքն իրեն ասել. «Եթէ Ռիկօն ինձնից մի բան է ուզում, կարող է աղօթել ու ինձ ասել»:

Այդ խօսքերին Ռիկօն չգիտէր թէ ինչ պատասխանէ. մի ըոպէ լոեց ու յետոյ ասաց.

«Մի անգամ էլ ասա Հայր մերը, ուզում եմ նորից սովորել»:

Մանիկը մի անգամ էլ ասաց և Ռիկօն
արդէն կարողանում էր անսխալ կրկնել։ Յե-
տոյ նրանք բաժանուեցան և իւրաքանչիւրն
էր օթեանը գնաց։

Ռիկօն երբ հասաւ իր խաղաղ սենեակը,
սկսեց խոնարհ սրտով աղօթել, որովհետե-
զգում էր, որ ինքն անարդար էր եղել մտա-
ծելով՝ թէ Աստուած պէտք է իրեն տար այն,
ինչի համար որ ինքը չէ խնդրել։

Մանիկը մտաւ պարտէզը մտազբաղ. նա
ինքն իրեն ուզում էր որոշել, թէ արդեօք
այդ բոլորի մասին պէտք է յայտնել տիկին
Մենօտտիին՝ թէ ոչ գուցէ նա կարողանայ
Ռիկօնի համար մի ուրիշ գործ գտնել և այդ-
պիսով նա ազատուած կլինի իրեն զզուելի
դարձած պանդոկների պարանուագից։ Բայց
երբ Մանիկը սենեակ մտաւ՝ բոլորովին թո-
ղեց տիկին Մենօտտիին իրեն վերաբերեալ
գործով զբաղեցնելու միտքը։ Սիլվիօն ջերմից
բոլորովին կարմրած ընկած էր բարձի վրայ
ու անհաւասար կերպով շնչում. անկողնի մօտ
նստած էր մայրն ու անմխիթար կերպով լա-
լիս։ Մի անգամ էլ սկսուել էին Սիլվիօնի մեծ
տանջանքներն ու ցաւերը և Մանիկի բացա-
կալութեան վրայ էլ մի փոքր բարկանալով՝
տենդը սաստկացել էր։ Մայրը սաստիկ վշտա-

ցած էր նրա ցաւերին ականատես լինելով.
Մանիկն երբէք նրան այդ դրութեան մէջ չէր
տեսել։ Տիկին Մենօտտին մի փոքր արիութիւն
զգալուն պէս ասաց։

«Մանիկ, Եկ, նստիր կողքիս, ասելու
բան ունեմ քեզ։ Տես, մի բան սաստիկ ծան-
րանում է սրտիս և երբեմն կարծում եմ՝ թէ
էլ չեմ կարող տանել։ Թէև գու գեռ երիտա-
սարդ ես, բայց իբրև խելօք աղջիկ շատ բան
ես տեսել և ինձ թւում է, եթէ սիրտս բա-
նամ քեզ, մեծ թեթևութիւն կզգամ։ Տես-
նում ես լաւ թէ ինչ դրութեան մէջն է
Սիլվիօն, միակ որդիս. բայց ես ոչ թէ միայն
ցաւում եմ նրա հիւանդութեան վրայ, որ
բժշկել էլ չեմ կարող, այլ և յաճախ ինքս
ինձ ասում եմ. գուցէ այդ Աստծոյ պա-
տիմն է, որովհետեւ մենք ուրիշի կալուածքը
սեպհականել ու վայելում ենք, թէև չէինք
ուզում սեպհականել և օգտուել նրանից։ Ես
ուզում եմ սկզբից պատմել՝ թէ ինչպէս ե-
ղաւ։

«Երբ ամուսինս, պլ. Մենօտտին, պսա-
կուեց ինձ հետ—նա ինձ բերեց Ռիւախց, ուր
այժմ էլ բնակւում է հայրս—ալստեղ մի լաւ-
բարեկամ ունէր. այդ բարեկամն իր կնոչ մա-
հուանից յետոյ չկարողանալով այլ ես այս

Երկրում ապրել, փոխադրուեց ուրիշ տեղ։ Նա այստեղ ունէր մի փոքրիկ տուն և բաւակա նին. տարածութեամբ վարելահող ու դաշտ. թէւ հողը շատ էլ պտղաբեր չէր, բայց ինչ պէս ասացի, բաւականին մեծ էր։ Նա այդ բոլորը յանձնեց ամուսնուս, որ վերահսկողութիւն ունենալ մինչև իր վերադարձը։ Նրանք երկուսն էլ լաւ բարեկամներ լինելով՝ օգտի կամ տոկոսի մասին անդամ չխօսեցին։ Ամուսինս ասում էր նրան. «Երբ կվերադառնաս, քո կալուածքը կանոնաւոր դրութեան մէջ կլինի», որովհետև ինքն ուզում էր կարգի բերել և լաւ էլ հասկանում էր երկրագործութեան արուեստը. նրա բարեկամին էլ յայտնի էր այդ, ուստի և ամեն բան թողնելով նրան՝ ինքը գնաց։ Սակայն ճիշտ մի տարի անցնելուց յետոյ՝ երկաթուղու գիծ անցկացրին այդ տեղով և այդ խրճիթն ու վարելահողն էլ իսկական արժէքից աւելի թանկ գընով ծախուեց. ամուսինս այդ փողով գնեց աւելի լաւ վարելահող ու այգի և կառուցեց այս տունը. նոր կալուածքն երկու անդամ աւելի արդիւնք էր տալիս և մենք շատ առատ հունձ էինք ունենում։ Սակայն ես երբեմն ասում էի ամուսնուս. «այս բոլորը մերը չեն մենք լիառատ ապրում ենք ուրիշի սեպ-

հականութեամբ. Երանի գիտենալինք՝ թէ ուր է նա։ Բայց ամուսինս հանգստացնում էր ինձ ու ասում. «Ես ամեն բան կարգին եմ պահում, երբ գայ, ամեն բան նրանը կլինի և ցայթմ ստացած արդիւնքիցս էլ մասը կստանայ»։ Այդ միջոցին աշխարհ եկաւ մեր Սիլվիօն և երբ ես նկատեցի այդ թշուառ երեխայի դրութիւնը, աւելի ու աւելի յաճախ կրկնում էի ամուսնուս. «մենք ուրիշի կալուածքը սեպ. հականացընք, այդ պատճառով Աստուած պատժում է մեզ»։ Երբեմն էլ այնպէս ծանր էր թուում ինձ այդ դրութիւնը, որ աւելի սիրով կուզենայի աղքատ ու անտուն լինել։ Բայց ամուսինս միշտ մխիթարում էր ինձ ու ասում. «Երբ նա վերադառնալ, կտեսնես թէ ինչպէս գոհ կլինի ինձնից»։ Բայց նա երեք չվերադարձաւ։ Զորս տարի առաջ վախճանուեց ամուսինս. ախ, ինչ օրեր եմ քաշել այդ օրից սկսած, Տէր Աստուած, միշտ մտածում էի՝ թէ ինչպէս պահեմ օտարի կալուածքը, որ չվնասուի, մինչև որ ամուսնուս բարեկամը գայ. Երբեմն էլ մտածում էի՝ թէ գուցէ այթմ կալուածքի իսկական տէրը թըշուառ դրութեան մէջ տանջւում է, իսկ ես լաւ ապրուստ ունեմ և ոչինչ չգիտեմ նրա մասին»։ Մանիկը խիստ ցաւակցում էր տիկին Մե-

նօտուին, որովհետև կարողանում էր ըմբռունել՝ թէ որքան դժուար է նրա դրութիւնը, որ թէւ զգում էր անարդարութիւնը, բայց ոչինչ չէր կարող անել: Մանիկն սկսեց մխիթարել տիկին Մենօտտիին ու ասաց. երբ մարդ չէ ցանկանում անարդար լինել և եղած անարդարութիւնն էլ ուզում է ուղղել, պէտք է Աստծուն խնդրէ ու նրա օգնութիւնը հայցէ, որովհետև մեր արած սխալը նա կարող է ուղղել: Այդ բոլորն ես գիտեմ ու սովորել եմ իմ տատից. նա էլ միանգամ չգիտէր թէ ինչ անէ և մեծ երկիւղի մէջ էր:

Եետոյ Մանիկը սպատմեց այն լճի մասին, որի վրայ միշտ խօսում էր Իիկօն և թէ ի՞նչ պէս ինքն է եղել նրա փախստեան պատճառն ու յանցաւորը և թէ ինչպէս շարունակ երկիւղի մէջ է եղել՝ թէ նա կենազրաւ է եղել. թէ ի՞նչպէս հանգստացել է, երբ ազօթել ու ամեն բան Աստծոյ կամքին է թողել և թէ տիկին Մենօտտին էլ պէտք է նոյնն անէ, որովհետև այդպիսով նրա սիրտը կհանգստանալ և կմտածէ. «այժմ ամեն բան յանձնել եմ Աստծոյ կամքին»: Տիկին Մենօտտին լսելով Մանիկի խօսքերը՝ երկիւղածութիւն ու ջերմեռանդութիւն զգաց և ասաց. այժմ հանգիստ սրտով կքնեմ, քո վստահութիւնն ինձ անդորրութիւն ներշնչեց:

ԳԼԽ. Ի.

ԾՆՍԴԱՎԱՅՐՈՒՄ



իրակի առաւտեան, երբ արեւի ոսկեգոյն ճառագայթները լուսաճանչն փայլ տուին պարտիզի կարմրագոյն ծաղկիկներին, տիկին Մենօտտին դուրս եկաւ սենեակից և նստեց ցանկապատի մօտ՝ մարդագետնի վրայ եղած նստարանի վրայ: Նա նայում էր իր շուրջը և մտածում: Երբ աչքը ձգեց դափնեվարդի ծաղկիկների, դրա յետեւը գտնուող դափնեապատցանկի, թզենիների ու խաղողի որթերի՝ վրայ, ինքն իրեն ասաց ակամայ. Աստուած վկայ է,

որ սիրով կցանկանայի խիղճս ազատել այս
անարդար տիրապետութիւնից, բայց այսպիսի
մի սիրուն վայր ոչ մի տեղ չեմ գտնի»:

Այդ միջոցին Ռիկօն պարտէզ մտաւ. նա
այսօր ճաշից յետոյ պէտք է ուրիշ գիւղ գը-
նար նուագելու և այդ պատճառով այժմ էր
եկել, որովհետև շատ ծանր կլինէր նրա հա-
մար՝ եթէ ամբողջ օրը չտեսնէր նրանց: Երբ
Ռիկօն ուղղակի դէպի սենեակն էր գնում, տի-
կին Մենօտտին ձայն տուեց նրան ու ասաց.

«Մի ըոպէ նստիր այստեղ, ինձ մօտ. ով
գիտէ թէ մինչև երբ կարող կլինենք այստեղ
միասին մնալ»:

Ռիկօն վախեցաւ:

«Ինչո՞ւ, տիկին Մենօտտի, դուք հօ չէք
գնում այստեղից»:

Տիկին Մենօտտին ստիպուած էր խօսքը
փոխել. նա չէր կարող իր պատմութիւնը Ռի-
կօն էլ զըուցել: Նրա միտն եկաւ Մանիկի
երէկուայ ասածները Ռիկօն մասին. երէկ այդ
բանի վրայ ուշադրութիւն չէր դարձրել հա-
մակուած լինելով իր սեպհական վշտով. այժմ ին-
քն իրեն զարմացաւ, մտաբերելով այդ ու ասաց.
«Ասա ինձ, Ռիկօ, միթէ դու առաջ էք
եղել ես այստեղ, որ ուզեցել ես լիճը կըկին

տեսնել, ինչպէս որ երէկ պատմեց ինձ Մանիկը»:

«Այն, երբ ես փոքր էի», ասաց Ռիկօն,
«նրանից յետոյ ես գնացի»:

«Երբ փոքր էիր ինչպէս եկար այստեղ»:
«Ես այստեղ եմ աշխարհ եկել»:

«Ի՞նչ, այստեղ. ով էր ապա հայրդ, որ
սարերից այստեղ եկաւ»:

«Նա սարերից չէր, մայրս էր միայն այն-
տեղից»:

«Ի՞նչ ես ասում, Ռիկօ, միթէ հայրդ այս-
տեղացի էր»:

«Այն, նա այստեղացի էր»:
«Այդ մասին դու ոչինչ չես պատմել,

շատ զարմանալի է. դու այստեղի անուն չու-
նես, հօրդ անունն ինչ էր»:

«Ինչպէս ես, նա էլ կոչւում էր էնրիկօ
Տրէվիլլօ»:

Տրէվիլլ Մենօտտին կաթուածահարի նման
տեղից վեր թուաւ:

«Ի՞նչ ես ասում, Ռիկօ», աղաղակեց նա,
«Ի՞նչ ասացիր հէնց այս ըոպէիս»:

«Հօրս անունը», ասաց Ռիկօն հանդարտ:

Տրէվիլլ Մենօտտին էլ չլսեց այդ խօսքե-
րը, նա դէպի դուռը վագեց:

«Մանիկ, մի վաթաթան տուր, աղաղա-
կեց նա ներս չգնացած, իսկոյն պէտք է քա-

Հանայի մօտ գնամ, ամբողջ մարմինս դուզում է»:

Մանիկը զարմացած՝ բերեց փաթաթանը։ «Մի երկու քայլ հետո արի, Ռիկօ», ասաց տիկին Մենօտտին գնալիս. «մի բան էլ պէտք է հարցնեմ քեզ։»

Ռիկօն ստիպուած էր երկու անդամ կրկնել իր հօր անունը և քահանայի դրան մօտ տիկինն երրորդ անգամ էլ հարցրեց՝ թէ արդեօք ճիշտ այդպէս է։ Այդ ասելով նա ներս մտաւ, իսկ Ռիկօն վերադարձաւ և մնացել էր զարմացած տիկին Մենօտտիի արածների վրայ։

Ռիկօն իր ջութակը հետն էր բերել, որովհետև գիտէր, որ դրանով մի առանձին ուրախութիւն էր պատճառում Մանիկին։ Եւ երբ այդպէս ջութակը ձեռքին ներս մտաւ Մանիկին ու Սիլվիօին լաւ տրամադրութեան մէջ գտաւ. Մանիկն իր խոստման համաձայն պատմել էր Պետերլիի արկածը և այդպիսով թէ իրեն և թէ Սիլվիօին մեծ զուարճութիւն էր պատճառել։ Երբ Սիլվիօն ջութակը նկատեց, իսկոյն աղաղակեց. «այժմ երգենք, Մանիկի հետ միասին երգենք գառնուկի երգը»։ Մանիկն իր երգն էլ չէր լսել՝ յօրինելու օրից լետոյ. և որովհետև Ռիկօն այժմ աւելի սիրուն եղանակներ գիտէր նուագել, այդ եր-

գը վաղուց արդէն մտահան էին արել ամենքը։ Մանիկին աւելի զարմացրեց այն հանգամանքը, որ Սիլվիօն գերմաներէն էր ուզում երգել, որովհետև չգիտէր՝ թէ անցած երեք տարուայ ընթացքում Ռիկօն քանի հարիւր անգամ էր այդ երգը նուագել Սիլվիօի առաջ։ Նրա համար մեծ ուրախութիւն էր, որ այդ հին երգը նորից պէտք է երգէր Ռիկօի հետ և սկսեց։ Սիլվիօն էլ իր բոլոր ուժով հետներն երգեց. թէկ նա այդ երգի մի խօսքն անգամ չէր հասկանում, բայց այնքան լսել էր, որ եղանակի ելևէջները ճշտութեամբ միտն էր պահել։ Բայց այս անգամ Մանիկի ծիծաղելու հերթն էր. Սիլվիօն այնպէս էր բառերը լեզարջում, որ Մանիկը ծիծաղից թուլացած էլ չէր կարողանում երգել. Սիլվիօն էլ տեսնելով նրա ուրախ ծիծաղը, ինքն էլ սկսեց և յետոյ աւելի բարձրաձայն ու որոշ երգելով՝ աւելի ծիծաղեցրեց նրան. Ռիկօն էլ բոլոր ուժերը լարած՝ նուագում էր իր «գառնուկներ ցած եկէք»-ը։

Տիկին Մենօտտին իր պարտէզին մօտենալիս՝ արդէն հեռուից լսեց երեխաների երգախառն ծիծաղը և չէր կարողանում ըմբռնել՝ թէ ինչո՞ւ են նրանք այդպէս ուրախանում այսպիսի մի արկածալի ժամին։ Նա

շտապով անցաւ պարտիզի միջով և սենեակը
մտաւ. Երկիւղն և ուրախութիւնը, վազելն
ու գալիք դէպքերին սպասելն այնպէս էին
ընկճել ու թուլացրել նրան, որ ներս մտնե-
լուն պէս առաջին պատահած աթոռի վրայ
նստեց՝ մի փոքր շունչ առնելու։ Երգիչները
յանկարծ լռեցին և զարմացած նայում էին
մօրը։

Տիկին Մենօտիին ուշքի եկաւ և սովո-
րականից գուրս հանդիսաւոր եղանակով ա-
սաց. «Իիկօ, նայիր շուրջդ. այս տունը, պար-
տէզը, դաշտը և այն ամենը, ինչ որ տես-
նում ես և չես տեսնում, բոլորը, վերևից
մինչև ներքեւ, բոլորը քննն է. տէրը դու ես,
բոլորը քո հայրական ժառանգութիւնն է։
Այստեղ է քո ծննդավայրը. անունդ գրուած
է մկրտուղների մատեանի մէջ, գու էնրիկօ
Տրէվիլլօի որդին ես, իսկ Տրէվիլլօն ամուս-
նուս ամենամտերիմ բարեկամն էր։»

Տիկին Մենօտիի հէնց առաջին նախա-
դասութիւնից Մանիկն ամեն բան հասկացել
էր և անասելի ուրախութիւն էր փայլում նրա
դէմքի վրայ։ Իիկօն նստած էր աթոռի վրայ
քարացածի նման և ձայն ու ծպտուն չէր հա-
նում։ Բայց Սիլվիօն հանդիսաւոր ուրախու-
թեամբ աղաղակեց. «ալժմ յանկարծ ամբողջ

տունը Ռիկօին է պատկանում. ո՞ր սենեակում
պէտք է քնէ նա հիմա։
«Այեն տեղ, Սիլվիօ, ամեն սենեակում
կարող է քնել, որտեղ էլ որ կամենայ. նա
կարող է, եթէ կամենալ, հէնց այսօր մեզ ե-
րեքիս էլ ճանապարհ գցել այստեղից և բո-
լորովին մենակ ապրել այս բնակարանում»։
«Այդ դէպքում սիրով ես էլ ձեզ հետ
կգայի», ասաց Ռիկօն։

«Ա՛խ, բարի Ռիկօ, աղաղակեց տիկին
Մենօտիին, «եթէ ուզում ես, որ մնանք այս-
տեղ, սիրով կմնանք. տուն գալիս ես մի փոքր
մտածեցի՝ թէ ինչպէս կարող ենք անել. Թէ
տունը, թէ պարտէզն ու վարելահողերը կա-
րող ենք երկու մասն անել. մի մասը լինի
քոնը, իսկ միւս մասը Սիլվիօինը»։

«Այդ դէպքում իմ բաժին կէսը տալիս
եմ Մանիկին», աղաղակեց Սիլվիօն։

«Իմ բաժինն էլ նրան եմ տալիս», ա-
սաց Ռիկօն։

«Օհօ, ալժմ բոլորը, պատկանում է Մա-
նիկին», ցնծութեամբ աղաղակեց փոքրիկն
անկողնի միջից, «պարտէզն ու տունը և այն
ամենը, ինչ որ կայ այստեղ՝ աթոռներն ու
սեղանները, ես, Ռիկօն ու իր ջութակը-բոլորը
Մանիկինն են. ալժմ նորից երգենք»։

Այդ միջոցին Ռիկօն ժամանակ ունեցաւ
մտածելու տիկին Մենօտտիի ասածների վրայ
ու անվստահ կերպով հարցրեց.

«Բայց ինչու պէտք է Սիլվիօի հօր տունն
իմը լինի»:

Նոր տիկին Մենօտտիի միտն ընկաւ, որ
Ռիկօն դեռ ամբողջ պատմութիւնից ոչինչ չը-
գիտէ, իսկոյն սկսեց պատմել բոլորը՝ սկզբից
սկսած և նախորդ երեկոյեան պատմածից աւե-
լի մանրամասն։ Երբ տիկինն իր պատմու-
թիւնը վերջացրեց, երեք լսողներն էլ կատա-
րելապէս հասկացան բանի էութիւնը և ա-
մենքն էլ անսանելի ուրախութիւն էին զգում,
որովհետեւ էլ ոչ մի արգելք չկար, որ Ռիկօն
իսկոյն իր սեպհական բնակարանը փոխադ-
րուեր և այնուհետեւ երբեք այնտեղից չգուրս
գար։

Այդ ընդհանուր ուրախութեան միջոցին
Ռիկօն ասաց.

«Եթէ այդպէս է, տիկին Մենօտտի, այս
բնակարանում ոչինչ չպէտք է փոխուի. Ես էլ
կդամ այստեղ, իմ հայրենի տանը կլինեմ և
ամենքս կմնանք, ինչպէս որ եղել ենք մին-
չև այժմ. դուք մեր մայրը կլինէք»։

Ա՛խ, Ռիկօն, ինչ լաւ եղաւ, ինչպէս ա-
մեն բան լաւ էր կարգադրել Աստուած. այժմ

Ես կարող եմ ամեն բան քեզ լանձնել և հան-
գիստ խղճով ինքս էլ այստեղ մնալի Եւ ես
քո մայրը կլինեմ, Ռիկօն, առանց այդ էլ ցայժմ
հարսագատ զաւակիս պէս էի սիրում քեզ. այժմ
դու էլ, Մանիկն էլ ինձ «մալրիկ» կանչեցէք-
ամբողջ Պեշիբայում այժմ մենք ամենաերջա-
նիկ ընտանիքն ենք։

«Հիմա պէտք է մեր երգը վերջացնենք»,
աղաղակեց Սիլվիօն, որ ուրախութիւնից՝ եր-
գելու և ցնծալու էր տրամադրուած. Ռիկօն ու
Մանիկն էլ ուրախ սրտով նորից սկսեցին իրենց
երգը. սրանք էլ Սիլվիօից պակաս չէին ցնծում-
երբ. այդ երգը՝ վերջացրին, Մանիկն ասաց.

«Այժմ մի երգ էլ պէտք է երգենք, Ռի-
կօն, գիտե՞ս որ երգն եմ ասում»։

«Այս, գիտեմ, պատասխանեց Ռիկօն, ա-
մենայն սիրով կերգեմ հետդ, հէնց տատի սի-
րած կտորն երգենք». նա սկսեց և շատ սի-
րուն ու սրտալի երգեց.

«Ինչ թոյլ է տալիս, ինչ ինքն է անում,
«Բոլորն էլ բարի վախճան է ստանում»։

Մանիկն էլ իր բոլոր ուժով ու սրտի
բերկութեամբ ձայնակցեց նրան։

Այդ օրը Ռիկօն էլ Ռիւա չգնաց. Տիկին
Մենօտտին խորհուրդ տուեց նրան՝ իսկոյն
գնալ պանդոկ, տանտիրուհուն լայտնել իրերե-

Նոր դրութիւնը, յետոյ մի ուրիշ ջութակա-
հար ուղարկել Ռիւա և հէնց այսօր իսկ փո-
խադրուել իր բնակարանը։ Այդ առաջարկու-
թիւնը հաճելի թուաց Ռիկօին և նա իսկոյն
շտապեց դէպի պանդոկ։ Ռիկօի պատմելու ժա-
մանակ պանդոկի տիրուհին լսում էր զար-
մացած։ Երբ Ռիկօն վերջացրեց, տիրուհին
ձայն տուեց իր ամուսնուն, ուրախութեան
նշաններ արտայալտեց և օրհնեց Ռիկօին ու
նրա տունը։ Նրա օրհնութիւնը սրտանց էր։
Թէև Ռիկօի հեռանալը ձեռնտու և հաճելի
չէր պանդոկապետի կնոջը, սակայն նա վաղուց
կասկածում էր, որ «Դրայ Կրօնէն» պանդոկի
տիրուհին հետամուտ է լինում Ռիկօին և աշ-
խատում՝ իրենից խլել նրան։ այդ բանի վրայ
սաստիկ զայրացած լինելով՝ այժմ ուրախ էր,
որ իր հակառակորդի ցանկութիւնը չկատա-
րուեց։ Տիրուհին ուրախ էր նոյնպէս, որ Ռի-
կօն կալուածատէր է դառնում, որովհետև
հէնց սկզբից սիրել էր նրան։ Պանդոկապետն
աւելի ուրախ էր, որովհետև Ռիկօի հօր լաւ
ծանօթն էր և չէր կարողանում ըմբռնել՝ թէ
ինչպէս եղաւ, որ ինքը հէնց սկզբից չճանա-
չեց Ռիկօին, քանի որ նա բոլորովին նման
էր հօրը։ Այդպիսով Ռիկօն ուրախ տրամա-
դրութեամբ հրաժեշտ տուեց իր օժեանին.

տիրուհին դրան շեմքում մի անգամ էլ նրա
ձեռքը սեղմելով ասաց, որ բան է, եթէ յե-
տոյ, ժամանակի ընթացքում, կարիք ունե-
նայ, ինքը պատրաստ է նրան օգնելու։ Նոյն
իսկ այդ երեկոյեան ամբողջ Պեշիերան գիտէր
Ռիկօի պատմութիւնը զանազան յաւելուածնե-
րով։ ամենքն էլ ուրախանում էին Ռիկօի բաղ-
դաւորութիւնը լսելով և միմեանց ասում։
«Նա կարծես թէ ստեղծուած էր հէնց այդ
վոքրիկ կալուածքի տէրը լինելու համար։»
Տիկին Մենօտտին էլ ամեն ջանք թա-
փում էր նոր տանտիրոջ համար ամեն բան
յարմարացնելու։ Նա Ռիկօի համար կահաւո-
րեց այն մեծ սենեակը, որի երկու լուսամուտ-
ները նայում էին պտրտիզի միջով դէպի լի-
ճալ։ այդ սենեակի պատերի վրայ կալին սի-
րուն մարմարեալ քանդակագործ պատկերններ։
սեղանի վրայ դրուած էր անուշաբուր ծաղիկ-
ների մի փունջ և ամբողջ սենեակն այնպէս
մաքուր ու զարդարուած էր, որ երբ Ռիկօն
Մանիկի առաջնորդութեամբ վերև եկաւ,
զարմանքից մնաց դրան շեմքում կանգնած։
տիկին Մենօտտին նախապէս որոշել էր այդ-
տեղ ընդունել նրան։ Երբ տիկինը Ռիկօի ձեռ-
քը բռնած դէպի լուսամուտը տարաւ, որտե-
քը բռնած դէպի լուսամուտը տարաւ, որտե-

կագոյն լեռները, նրա սիրտը լցուեց. ուրախութեան և շնորհակալութեան զգացմունքները յուզեցին նրա հոգեկան աշխարհը և նա հազիւ միայն կարողացաւ արտասանել.


«Ո՞հ, ինչ սիրուն է, այժմ ես իմ տանը,
իմ հայրենիքումն եմ»:

Երբ Ռիկօն իր նոր բնակարանում տեղատորուեց, այդ տան չորս բնակիչներն օրէցօր այնպիսի ուրախ ժամանակ էին անցկացնում և երջանիկ կեանք վարում, որոչ մէկը դրանցից չէր նկատում՝ թէ ինչպէս արագ էր թուզում ժամանակը:

Ցերեկով Ռիկօն սուլող պատանու հետ միասին գնում էր պարտէզը, վարելահողերը և եգիպտացորենի արտերը շրջելու, որովհետև այժմ ինքը պէտք է ծանօթանար բոլոր գործերին։ Ռիկօն սողեկից պատանին մտածում էր ինքն իրեն. «Ես աւելի շատ բան գիտեմ, քան իմ տէրը» և մի փոքր մեծամտելով՝ Ռիկօն հետ խրոխտ լեզուով էր խօսում, բայց երեկոյեաններն այնպիսի սիրուն և սրտագրաւ հնչիւններ էին լսում լուսաւորուած սենեակներից, որ այդ պատանին պարտիզի ցանկապատին լենուած՝ ժամերով լսում էր և հրճուանքով ասում ինքն իրեն. «չէ, իմ տէրն ինձնից շատ բան գիտէ» և յարգանք էր տածում դէպի նա:

ԳԼԽ. ԻԱ

ԱՐԵՒԹ ՇՈՂՔ ԳԱՐԴԱ ԼՃԻ ՎՐԱՅ



արունակ այդպիսի ուրախ
օրեր անցկացնելով՝ եր-
կու տարին լրացաւ:
Մանիկը գիտէր, որ
հասել է իր տուն վե-
րագառնալու ժամա-
նակը և արիութիւ-
նը չկորցնելու համար
նը չկորցնելու համար
ստիպուած էր ուժով զապել իրեն. այն
միտքը՝ որ ինքը պէտք է գնայ և գուցէ էլ
չվերագառնայ՝ սաստիկ ճնշում էր նրա սիր-
ուածուած իրենց գլխի գալիքը և
տը. Ռիկօն էլ գիտէր իրենց գլխի գալիքը և
յաճախ ամբողջ օրը հազիւ թէ մի քանի խօսք
արտասանում։ Տիկին Մենօտտին էլ տես-
էր արտասանում։ Տիկին Մենօտտին էլ տես-
էր այդ՝ սաստիկ անհանգիստ էր և աշխա-

տում էր իմանալ նրանց տխրութեան անյայտ պատճառը, որովհետև ինքը վազուց մոռացել էր, որ Մանիկը պէտք է վերադառնայ և ընդունի առաջին հաղորդութիւնը։ Երբ տիկին Մենօտին իմացաւ այդ, հանգստացրեց նըրանց ու ասաց. «Կարելի է գեռ մի տարի էլ սպասել» և այդպիսով նրանք մի տարի էլ խաղաղ և ուրախ ժամանակ անցկացրին։

Բայց երբորդ տարին Բերգամօից լուր եկաւ, թէ այնտեղ մի մարդ է եկել սարերից, որին պատուիրել են Մանիկին տուն տանել. Էլ ոչինչ չէր կարելի անել, Մանիկը պէտք է գնար։ Փոքրիկ Սիլվիօն կատաղութիւնից դիւահարի շարժուածքներ էր անում, բայց իզնուր, ճակատագրի դէմ ոչինչ չէր կարող անել։ Վերջին երեք օրերը տիկին Մենօտին շարունակ կրկնում էր. «Էլի յետ արի, Մանիկ, խոստացի՞ր հօրդ ինչ որ կամենալ՝ միայն թէ թոյլ տալ, որ գաս»։

Ռիկօն էլ ոչ մի խօսք չէր ասում։ Մանիկը ճանապարհ ընկաւ և այդ օրից Մենօտիի ուրախ բնակարանը թանձր ու անթափանցելի ամպով ծածկուեց, թէև դուրսն արել փալլում էր սիրուն։ Եւ այդպէս շարունակուեց նոյեմբերից մինչև Զատկի տօները, որ ամեն մարդ ուրախութիւն էր զգում,

սակայն այդ բնակարանը գեռ լուռ ու խաղաղ էր։ Երբ Զատկի տօներն անցան և պարտիզում ամեն բան ծաղկում, փթթում ու բուրում էր աւելի սիրուն, քան երբ և իցէ, մի երեկոյ, երբ Ռիկօն նստած էր Սիլվիօի մօտ և նուագում իր գիտցած ամենատխուր եղանակը, յանկարծ պարտիզում մի ծանօթ ձայն լսուեց. «Ռիկօ, Ռիկօ, միթէ չես կարող աւելի ուրախ դիմաւորել ինձ»։

Սիլվիօն սաստիկ աղաղակեց, իսկ Ռիկօն ջութակը ձգեց անկողնի վրայ և դուրս թռաւ։ Տիկին Մենօտին սաստիկ վախեցած այդ աղաղակեց՝ սենեակը մտաւ և նոյն վալրկեանին տան շեմքում տեսաւ Ռիկօին ու Մանիկին։ Հէնց որ Մանիկի ծիծաղկոտ աչքերը ներս թափանցեցին այդ բնակարանը, վաղուց արդէն անյայտացած արևելի շողքը փայլեց նորից. այս տեսակցութիւնն այնպիսի ուրախութիւն պատճառեց բոլորին, որ երբէք չէին երևակայել հրաժեշտի ժամանակ։ Նրանք կրկին նստեցին Սիլվիօի անկողնի մօտ եղած սեղանի շուրջը և սկսեցին միմեանց հարց ու փորձ անել և պատճել իրենց գլխովն անցածները։ Այդ երեկոն այնպիսի հանգիստաւոր կերպարանք ստացաւ, որ տեսնողը կկարծէր՝ թէ այդ չորս անձինքն էլ լիակատար երջանկութիւն են վայել-

լում։ Բայց Ռիկօն ուրիշ զգացմունքներ ունէր։ Ուրախութեան միջոցին նա յանկարծ սկսեց առաջուալ նման ապուշ կտրել, բայց այս անգամ ապշութիւնն առաջուալ պէս երկար ժամանակ չտևեց և ըստ երևոյթին շուտով գոհացուցիչ վճիռ դտաւ, որովհետև յանկարծ նրա ապշութիւնն անցաւ և որոշ ու հաստատուն կերպով ասաց հետևեալ խօնքերը.

«Մանիկն անմիջապէս պէտք է իմ ամուսինը լինի, եթէ ոչ նա էլի կհեռանալ մեզանից, իսկ այդ՝ չենք կարող տանել մենք»։

Սիլվիօն խսկոյն չափից դուրս ոգեսրուեց և կարճ ժամանակից յետոյ բոլորն էլ համաձայն էին, որ այդպէս պէտք է լինի և ուրիշ կերպ չէր կարող լինել։

Պեշիէրացի մայիսեան ամենասիրուն օրերից մէկն էր. երկար ու հանդիսաւոր գնացքն եկեղեցուց գէպի «Ոսկեալ արև» հիւրանոցն էր շարժւում։ Ամենից առաջ գնում էր, սիգաճեմ քայլուածքով, բարձրահասակ Ռիկօն. նրա աջ կողմից քայլում էր գեղաչեալ Մանիկը՝ թարմ ծաղիկներից հիւսուած պսակը գլխին. դրանց հետեւում էր փափուկ բարձերով լցուած մի փոքրիկ կառք, որ քաշում էին երկու Պեշիէրացի զուարթ տղայք. կառքում նստած էր

Սիլվիօն՝ յաղթողի նման ուրախութեամբ լըցուած. կառքի յետեկից գնում էր տիկին Մենօտաին հարսանեաց շքեղ հագուստով և զըգացուած սրտով. տիկնոջը հետեւում էր մի պատանի՝ ձեռքին բոնած ծաղկեալ մի ահագին փունջ. յետոյ արդէն ուրախ ու զուարթ բացագանչութիւններով քայլում էին բոլոր Պեշիէրացիները, որովհետև ամենքն էլ ցանկանում էին տեսնել նորապսակ գեղեցիկ զոլգը և նրանց հետ ուրախանալ։ Պեշիէրացի բնակիչների համար կարծես մի ընդհանուր ընտանեկան հանդէս էր. կորած և նորից գըտնուած Պեշիէրացիներ հաստատ օջաղն էր հիմնում իր ծննդավայրում։

Անկարելի է նկարագրել «Ոսկեալ արև»-ի տիրուհու յաղթական ուրախութիւնը, երբ հանդիսաւոր գնացքը մօտեցաւ հիւրանոցին։ Այնուհետև ուր և ինչպիսի հարսանիքի մասին էլ որ խօսք լինէր, նա ծանր կշռադատելով՝ արտասանում էր միշտ։

«Այդ բոլորն երբէք չի կարող համեմատուիլ Ռիկօնի հարսանիքի հետ, որ տեղի ունեցաւ «Գոլդենէ Զօննէ»-ում»։

Այնուհետև արևելի շողքը շարունակ փայլում էր ծաղկապարտիզի բնակարանում. Մա-

նիկն էլ աշխատում էր, որ էլ երբէք չմոռացուի «Հայր մերը» և ամեն կիրակի երեկոյեան պարտիզում տարածւում էին մեծ մօր երգի խմբական, պարզ ու քաղցր հնչիւնները:

Մանիկն ու Ռիկոն երջանիկ էին:

